Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Հայ
1066

Հայր սրբոց Յայ: ՅՀ

~~№ 94.~~ № 182 է.

կարդացել է այս գիրքը Յ. Զ. ... աշակերտ III դասարանի:

2013 պահեստ

# ԵՐՈՒԱՆԴ ԵՐԿՐՈՐԴ

## ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Հինգ Արարուածի մէջ։

ՆԻԿՈՂԱՅՈՍԻ Յ. ԱԼԻԽԱՆԵԱՆ։

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ
1880

Ց2Ա-Գ ԿՖ·
Կ 1066

# ԵՐՈՒԱՆԴ ԵՐԿՐՈՐԴ

## ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

*Հինգ արարուածի մէջ:*

ՆԻԿՈՂԱՅՈՍԻ Յ. ԱԼԻԽԱՆԵԱՆ:

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-СОРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ.
1880

Дозволено цензурою. Тифлисъ, 11 Іюля 1880 г.

1066-2013
Հ.Ց. 1061
360
40

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул. д. № 5.

# ԵՐՈՒԽԱՆԴ ԵՐԿՐՈՐԴ

## ՆԵՐԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ, արքայ Հայաստանի։

ԱՐՏԱՇԷՍ<br>ՎՐՈՅՐ<br>ՏԻԳՐԱՆ } որդիք Սանատրկոյ։

ԴԱՐԷՀ ՎՈՂՈԳԷՍ, շահն շահ Պարսից։

ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ասպետ—Թագադիր։

ԵՐՈՒԱՆԴ ԱՐՇԱԿՈՒՆԻ<br>ՏԱՃԱՏ ԲՋՆՈՒՆԻ<br>ՀՐԱՀԱՏ ԽՈՐԽՈՌՈՒՆԻ<br>ՏՈՒՐ ՄԱՆԱՒԱԶԵԱՆ<br>ԱՄԲԱԿ ԱՌԱՒԵՆԵԱՆ } Նախարարներ Հայոց։

ԱՐԳԱՄ, իշխան Վիշապազանց, տէր Մուրացան։

ԵՐՈՒԱԶ, քուրմ, եղբայր Երուանդայ։

ԳԻՍԱԿ, որդի ստնտու Արտաշէսի։

ՄԱԺԷԺ, սպասաւոր, և կապարճակիր Երուանդայ։

ՊԵՐՃ, գիւղական։

ՎՐԱՄ,<br>ՄՈՒՇԵՂ } սեպուհք արքունիքում։

ԱՌԱՋԻՆ<br>ԵՐԿՐՈՐԴ } զինուորք։

ԲԵՐԳԻՍԱՀ, մայր Երուանդի և Երուազի։

ՈԳՈՒՀԻ, կին Պերճի։

Ժողովուրդ, Նաժիշտներ, Քուրմեր, Ոստիկաններ, Հետևողներ, Որսականներ, Զօրականներ Հայոց, Պարսից, այլազգեաց և Արգամայ։

Հայաստան 68—88 Յամին Քրիստոսի։

# ԱՐԱՐՈՒԱԾ

# ԱՌԱՋԻՆ։

## ՏԵՍԱՐԱՆ 1.

Միջագետք Հայոց (Անշինեաց աշխարհ)։ Մծբին։
Նախասենեակ (Մուտք) Արքունի Սանատրկոյ։

Մտնումեն ՍՄԲԱՏ շտապելով, քամակից ՏԱՃԱՏ, ՀՐԱՀԱՏ, ՏՈՒՐ և ԱՄԲԱԿ։

**Տաճատ։**

Պատրաստենք մենք։ Բայց....

**Սմբատ։**

Ոչինչ աւելի.
Մնացեալը ինքեանքդ կարող էք քննել։

**Հրահատ։**

Մենք միաբերան խնդրում ենք մեկնել։

**Տաճատ։**

Բացատրէ՛ր, պարզէ՛ր մեզ, Բագրատունի.
Ի՞նչ պատուհասէ հասել մեր գլխին։
Հայրենեաց պիտոյք—մեր սեպհականն է։
Խաղաղացրուր մեզ։

Հրահատ:

Դիւցազն, Սմբատ,
Տեսար, դու գիտես, ակընարկեցիր.
Ժողովուրդ վըդով. . .

Տաճատ:

«Կեցցէ Երուանդը,
Կեցցէ հանապազ»—լսւումէ միայն:

Հրահատ:

Տրտունջը, կռիւ, յանդիմանութիւն,
Ժողովուրդ կ'ցուցի և Սանատրկին.
Գահից ցանկութիւն ունի . . . . Ինչ՞ այդ.
Նշանակութիւն դոցա—մեզ պատմիր:

աճատ:

Անբաւականութեան ողբ և լացը,
Նախարարների վերայ կշտամբանք . . . .

Հրահատ:

Կասկածանք, կծում, անցանել երբէք
Նոցա առաջև—անկարելի է:
Այսն առնելով, «Նախարար»—մատով
Ցոյցեն տալիս. ինձ անտանելի է . . .
Միթէ՞ սէր չունենք դէպ 'ի ժողովուրդ:

Ամբակ:

Կարծես վըդովումն մեր ժողովուրդի
Այլանդակութիւնն է, որ դուք այդպէս
Եւ այդքան հոգըս տանումէք: Բաւէ՛,
Որ մեր վիճակը միաւորելենք
Նոցա վիճակի հետ, բաւ չէ՞ արդեօք:



Տուր:

Բաւէ՛, երբ զգումենք մենք նոցա պիտոյք:

Սմբատ:

Դու Տուր և Ամբակ, ձեր սէր դէպ Երուանդ,
Դէպ համախոհներ նորա յայտնի է
Ինձ անմիջապէս:

Տուր:

Այո՛, պատւումենք
Մենք նորա խելքը և արիութիւն:

Ամբակ:

Սիրումենք նորան—պատճառ՝ արքայի,
Մեր բարերարի սիրելին է նա:

Սմբատ:

Սիրէ՛ք, պատուեցէ՛ք, և վարձ սպասեցէ՛ք:

Ամբակ:

Վարձ, ասումե՞ս դու . . . .

Սմբատ:

Միթէ՞ սխալուեցայ.
Ինչ՞ ասեցի: Զ'գիտեմ ձեզ, չէ՛:
Թողնենք. գլխաւոր տանջումէ աւել
Մեզ քան Երուանդը: Է՛, նա իմ համար
Երբէք լինելու չէ վտանգաւոր:

Տաճատ:

Անկասկածելի՛:

Հրահատ:

Ենթադրել այժմս
Եւ աւելորդէ: Նա մեզ չի գրաւում:

Անտմօրական և գերաբնական
Մենք երևոյթներ պիտի իմանանք։

### Տաճար։

Դոքա մարմնական հիւանդութիւնից,
Վէրքից, ցաւերից տանջուածն ալեր։
Մօտէ, աւա՜ղ, մեզ և անսպասելին։
Բնութեան փոփոխմանց ակամայ կամօք
Սեաւ ապագայն քեզ գուշակումես։
Որպէս նաւարկող—ալէկոծութեան
Ժամին՝ յուսահատ, պանդուխտ, պանդանդեալ՝
Դէպ 'ի աստուածներ ձեռքը ուղղելով,—
Գեղեցիկ հեռուից գամ քան զգամ
Տեսիլ բացուածէ. ալիք բարձրացած
Եւ անասելի շնումն խորին
Գերեզման. տատան ընկնումէ մարմին
Անդեղ—իսկ խղճուկ ջրաչուղի.—
Տխուրէ և իմ ապագայս ուրեմն։
Այն ինչ—ինձ այժմուս շրջապատումեն,
Կ'հնչեն ականջիս և անխնայաբար.
«Արթուն դու եղիր, մեռձէ և խաւար» . . . .
Հեղափոխութեանց այսպիսի վերայ,
Ուշ ինչո՞ւ, ասա, չ'ես դարձնում, Սմբատ։

### Հրահատ։

Մեր հայրենիք—որ գեղատեսիլքով
Մեզ միշտ զմայլեցներ, կորաւ գլխովին.
Մեր հայրենիքը—որ անդորրութեամբ
Մեզ միշտ կրթեղմէր, աւազակների
Դարաւ ապաստան։ Մեր Հայաստանը—



Որի գահի վրայ քաջազունք միայն
Մեծ Արշակունիք նստածէին, վաղնեց
Իւր ոյժը. որ իւր փայլմամբ, Հայաստան,—
Որ իւր ճոխութեամբ, նա Հռոմայեցւոց
Կ'զարմացնէր, այժմուս չըկայ, աւումեմ. . .
Եւ այսօրինակ տարբաղդութիւնից
Ցեռոյ, բազմեցաւ Սանատրուկ աթոռ
Օգնութեամբ տոհմիդ, նաև Արծրունեաց,
Նրա անբաղդութիւն շուտ վերջացնելով։
Մենք այս բաների վրայ համբերութեամբ
Նայումենք, այո, յուէտ սաւչութեամբ։
Իսկ այժմուս յատաւ և համբերութիւն.
Տանել, համբերել զայրացնող չարին,
Հաւատացնումեմ ձեզ, անհնարինէ։
Եթէ, գուցէ նա—Երուանդ յափշտակի
Մեր գահը, ընկնել չ'են յապաղելու
Մօր Հայաստանի և մեր գլխերին։
Հեղափոխութեանց այսպիսի վերայ,
Ուշ, ինչո՞ւ, ասա, չ'ես դարձնում, Սմբատ։

### Տաճար։

Այն ինչ ժողովուրդ—մարմին հայրենեաց,
Այն ինչ զօրականք—ձեռքերը նորա,
Նորա և գլուխը—նախարարները,
Ինչո՞ւ ծուլացած, կամ անհոգութեամբ,
Իւրեանց չորս կողմը նայումեն անփոյթ։
Նոցա անդադար ուրե՞ հոգութիւն,
Ուրե՞ նոցա սէր, ուրե՞ն մտածմունք։
Հեղափոխութեանց վերայ, ո՜վ Սմբատ,
Ինչո՞ւ չ'ես դարձնում դու ուշ առանձին։

Ֆրահատ:

Արթնի՛ր, հեռանայ թող քունդ քեզանից,
Դիւցազն Սմբատ, ժամէ՜:

Սմբատ:

Մի՛ խոցէք
Վէրքերս. կացէ՛ք, դուք խաղաղացէք:
Տոչորեալ սիրտս, վշտոված հոգիս,
Կրել չարչարանքը չքնաղ հայրենիս—
Կարող չեն: Այո՛, լացըս գալիս է.
Արտօսր շիջուցի, լալով, ողբալով.
Կորուսի բազկիս զօր—հառաչելով.
Եւ աւաղելով—խելքս շփոթեցի.
Տանջուելով, մարմինս թուլացրի . . . աւա՜ղ
Ո՜վ, եթէ միայն կարողանայի,
Եթէ միայն հնար մի գտնէի ես՝
Օրօրոցիս իմ ողբալ վիճակը . . . .
Հայաստա՜ն—նախնեաց սիրած, և պաշտած,
Տեղի՛ք—ոսկեհոս, ամէնի պարսաւ,
Պատրաստեմ քո համար, թէ և ծերեմ,
Զոհել և անձըս և կալուածներըս:
Ազնիւ նախարա՛րք— զինուորք հայրենեաց,—
Հայոց Մեծաց դուք—տարաժամ պահնակք,
Ձեր մտածմունքներ թողեցէք: Արթուն,
Եղէք միայն արթուն, այո, և նոյնպէս,
Արքայի Սանատրուկ—Արշակունոյն
Դուք հաւատարիմ մնացէք մինչ ի մահ:
Մըտածէք լաւից և պահպանեցէք
Որդիք անարժան—մեր թագաւորի,
Որոց և վերայ շտապելով կընկնի,



Եւ կ՚կոտրի գայլակերպ Երուանդ,
Որպէս Սանատրուկ ինքն կոտրեց՝
Թագի պատճառաւ՝ որդիք Անանի:
Սեպհական արիւն կանանց ձեր համար,
Եւ ձեր մայրերի համար խնայեցէք:

Տաճատ:

Կրկնումենք վերստին մեր յօժարութիւն:

Ժողովուրդ (Բեմի քամակից):

Կեցցէ՜ Երուանդը, կեցցէ՜ հանապազ:

Տաճատ:

Լսումե՞ս, Սմբատ:—

Սմբատ:

Լսումե՜մ, լսո՜ւմ:
Անմիտ ժողովուրդ, ծախումես քո բաղդ,
Ծախումես սէրդ չնչին Երուանդին:
Յանձնի՛ր նորան քեզ, յարգի՛ր և պաշտի՛ր,
Ինքդ կ՚կործանես և քո դրած կռքին:
Քսակը կ՚դարտակուի,—կ՚դարտակուի և սէրդ:
Բնութեանդ օրէնքը այդէ պատուիրում,
Այդպէս է խրատում Մեծն Արամազդ:
Սակայն քեզ սիրող գոյ. գժուի՛ր, խռովի՛ր.
Մենք ենք քո պահքը, մենք քեզ կազատենք
Փորձանքից. գիտեմ, կ՚դառնաս դէպ ՚ի մեզ,
Կ՚բաժանուես յետոյ, դէպ ուրիշ կ՚երթաս,
Ձեռք կ՚վեր առնես ևս և նորանից,
Դէպ՚ի մեզ դարձեալ,—դաէ քո բնութիւն,
Եւ մոլորութիւն:—

**Ժողովուրդ** (քամակից)։

«Կեցցէ՜ Երուանդը . . .» :

**Հրահատ։**

Դարձեալ։

**Ամբակ։**

Այդ ինչո՞ւ, ես չ'եմ հասկանում,
Ամբոխի «կեցցէն» ձեզ չփոթումէ։

**Տուր։**

Թէ և այդ «կեցցէն» ինձ վերաբերի . . . .

**Սմբատ։**

Լռիր։ Սուքինի որդիք Հայկայ,
Վախութիւն հեռու. չէ՜ հաւասարվել
Համապազօրէն, մշտնջենաւոր
Բաղդի հետ, անցաւոր և առօրեայ
Երկրային բաղդը։ Պէտքէ մտածել
Ծերացած արքայ—Սանատրուկի վրայ։
Յափշտակողները շատ կան աշխարհում,
Այլ այժմ մեր հայրն է, նա է մեր սփոփանք։

**Տաճատ։**

Ճառդ ճշմարիտ, ոգիդ քո ազնիւ։
Սակայն իմ սրտիս զգացմունքը. կարծես՝
Բոլոր երկիրը պէտքէ որ շարժուի,
Մթնանայ երկինք։

**Հրահատ։**

Երեկ երեկոյ,
Ո՛չ լուսին իւր դէմք ցոյց չի տուեց. արեգ
Կորցրեց իւր փայլումն և տաքութիւնը։



**Տաճատ։**

Սպեւուտ—պառաւներ և սուտ կախարդներ
Բարձր աղաղակ, բառաչումն մայումն՝
Թէ դեւք—չար ոգիք պէտքէ ջնջուեն
Մարդկային ցեղը։ Տխուրէ երկիր.
Ջուրը ցամաքեց . . . Նալխ է աշխարհ . . .

**Հրահատ։**

Վատութեան գուշակ, ժամ զարհուրելի՜.
Ահէ մեզ համար։

**Սմբատ։**

Եղբարք—հարազատք,
Դուք հանդարտուեցէք. երեւակութեանդ
Պատճառ—արքայի զառամ ծերութիւն,
Նորա մշտական հիւանդութիւններ,
Մերձակայ մահը, որդւոց մանկութիւն։—
Ձեզանից միայն ես պահանջումեմ
Ուղղութիւն հոգւոյ, պարզամտութիւն։
Սիրել թագաւոր և նորա ժառանգ,
Դորանով հանգիստ կարողենք լինել։
Ոչինչից երբէք պէտք չէ վախենալ։
Եւ Արտաշիսի իշխանութեան տակ,
Զկնի մահուան ներկայ մեր թագաւորի,
Խաղաղածաւալ կ'վայելենք կեանքը։

**Տուր։**

Այդ բոլոր այդպէս, հակընթաց ոչ ոք
Քեզ, Սմբատ, գիտեմ և չէ լինելու։
Այլ ժամ է արքային մեզ ներկայանալ։

### Սմբատ:

*Դէպ 'ի Սեպուհներ, որոնք արարուածի սկզբից կայնածէին դրան մօտ. մինը աջ, միւսը ձախ:*

Հնարինէ արդեօք, Նորին մեծութեան
Դիմոյն յանդիման գալ մեզ երևան:

### Վռամ:

Ոչինչ խոչ ընդ ոտն մեզ չէ յայտնի,
Եւ չենք նկատում. բարեհաճեցէք:

### Մուշեղ:

Նորին մեծութիւն խորհրդանոցում
Շուտուց սպասումէ նախարարներիդ:

### Սմբատ:

Ուրեմն, նախարարք, ինձ հետևեցէք:

*Գնումեն:*

## ՏԵՍԱՐԱՆ 2.

Այգի Արտաշէսեայ.—Պարտիզամէջ Սրահի:

### Ժողովուրդ *(քամակից)*:

«Կեցցէ Երուանդը, կեցցէ յաւիտեան»:

*Մտնումէ ԵՐՈՒԱՆԴ քամակի դռունքից, և կայնումէ առաջի վերելակների վերայ, դէպ 'ի ժողովուրդ դառնալով:*

### Երուանդ:

Մեծ է իմ համար քո սէր, ժողովուրդ:
Կենալով, գիտացէք, կ'կեցցէք և դուք:



Որպէս այժմս կ'սիրէք, սիրեցէք յետոյ,
Եւ խաղաղութեամբ գնացէք այստեղից:
Յարաժամ ձեզ հետ. միամիտ եղէք:
Խնջոյք, և խրախճանք և ուրախութիւն
Ձեզանից երբէք չ'են պակասելու,
Որպէս պակասումն այս քսակ ոսկերուղիս
Ճանաչումն չունի: Ահա—ընկալէք:

*Գցումէ քսակ:*

### Ժողովուրդ:

Կեցցէ Երուանդը, կեցցէ յաւիտեան:

### Երուանդ *(ցածէ գալի վերելակներից, շտապելով ընդ առաջ)*:

«Կեցցէ Երուանդը, կեցցէ յաւիտեան»,
Քամակիցս գոչում, աղաղակումեն:
Խա, խա, խա. ինչքան զօրութիւն ունիս,
Քսակ. որքան թափել դու գիտես կըրակ.
Դու բերար փառքը, սէր ժողովրդեան,
Դոցանով բնաջինջ կարող եմ առնել
Իմ ոսոխներիս: Կեցցես, քսակ, ուրեմն,
Կեցցես Երուանդի քաջազնի նըման:
Թող մեծ թագուհին, ոսկեծին Անահիտ
Զարմանայ, որ դու և շքեղութեամբ,
Եւ հարստութեամբ վեհես բոլորից—
Միանգամայն: Թող անպակաս լինեն
Ոսկեքը քո մէջ, որպէս բազկիս մէջ
Աւելանումէ օրէ ցօր ոյժը:
Սէր, փառք, գահ, թագ, մահ և յաղթութիւնը
Քեզանում, քո մէջ միայն տեսնումեմ:

Դու, դու լոկ կարես սրտիս կատարել
Սփոփանքը. Թախիծ ինձնից հեռացնել:
Եթէ ժլատութիւն դրամների ցոյց տամ,
Ներողութիւն գտնել կեանքումս չի գալ.
Լինել ցոփ—շռայլ՝ վատասպարութեան
Հետևանք կ'տեսնես, ձեռքերդ կըմբռնուեն . . . .

Տեսնելով զինուորներին

Արքայի այգու պատշգամբի վերայ
Ի՞նչու էք կայնած:

**Առաջին Զինուոր:**

Արքայն մեծ այսօր
Նախարարների հետ ունի խորհել:

**Երկրորդ Զինուոր:**

Ոչ խորհրդանոցում, այլ պարտիզում.
Նուաղութիւնը թոյլ չէ տալիս նրան
Սենեակներում մնալ, քանզի բնութեան . . . .

**Երուանդ:**

Մայրս խօսելու ատա նշանակեց:—

Մտնում է ԲԵՐԳԻԱՀ այգու միւս կողմից:

Ահա և իմ մայր. սպասելով քեզ . . . Մա՛ր,
Այդ ինչ՞, մայր իմ, սպանանել գուցէ
Կամիս ինձ:

**Ներգիահ:**

Հանգիստ դու կաց: Ինձ երբեմն
Սուրը զւարթում է. երբեմն կարծելով
Ինձ քաջ զօրական. կախուեմ գոտիս . . . .
Տեսնումես սոցա, երթալ հրամայիր,
Թող մտնեն սրահը, կամ թող հեռանան
Այդւոյ խորութիւն:—



**Երուանդ** (Հրամայում է զինուորներին գնալ սրահ):

Զարմա՛նք. դեռ ես
Քո մէջ ժիրաժիր բնակւում է ոգի:
Ծերութիւնդ քո մէջ քո—արիութիւն՝
Երկի, երբէք, սպանանելու չէ:
Բոլոր և կանանց գերազանցես դու:
Սակայն այդ սրոյ, ես զարմանում եմ,
Ինչ՞ պատճառը. չ'լինի ուրիշ . . .

**Ներգիահ:**

Ոչի՛նչ ուրիշը. ես քաջանալով,
Կորիճ՝ դառնալով, խիստ կամենում եմ՝
Մատաղ հասակս և մտաբերել,
Երբ ուժեղութեամբ կ'գերազանցէի . . . .

**Երուանդ:**

Զբաղացնել ո՛չ թէ սրով,—այլ բանով
Վայելէ. այլ է գուշակում սուրդ:

**Ներգիահ:**

Ասածս իմ համար թերևս շատ փոքր է:
Սիրտս աւելի լաւնէ որոնում.
Ես ցանկանում եմ դրութիւնս փոխել:

**Երուանդ:**

Փոխել քո դրութիւն անհնարին է քեզ:
Եմ՛, հաւասարելի քաջութեան որի
Ոչ ոք չ'կարող. համեմատ սրտիս
Գտնել զբաղանք չեմ կարողանում:

**Ներգիահ:**

Իսկ ես քա[illegible] քեզանից,



ՀՍՍՀ-СССР Гос. Публ. Библиотека им. А. Мясникяна
1066-2013 (360/40)

Մի վեհ, յոյս ունիմ, դառնել զբաղանք.
«Թագուհի լինել . . . .»

**Երուանդ:**

Թագուհի լինե՞լ.
Միթէ՞ այդ ազնիւ, պերճ ծառայութիւն
Վեհ զբաղանք կ՚բերի ում որ և լցէ:

**Ներգիահ:**

Բաց ՚ի դորանից. ես ցանկանումեմ,
Որպէս աշտարակ հին Բաբելոնեան,
Բարձրանալ, ապա ժողովրդեան վրայ
Մտածել: Իղձս իմ—բարձրանալով,
Որդւոյս բարձրացնել. «Թագաւոր կոչել»:

**Երուանդ:**

Այդ ուրեմն ձախրում, կին արևելքի.
Դեռ չէ՞ք ազատուել իշխանի նեղոց,
Դեռ ևս անկասկած և սեղմիչ ձեռքը
Տակաւին ձեզ վրայ, սփռում, կ՚տարածի,
«Թագուհի լինել . . . .» դուք մտածումէք:
Մայր իմ, զգուշացի՛ր, մեր խօսակցութիւն
Գուցէ լսելիս, իսկոյն երկուսիս
Կործանելու են:—

**Ներգիահ:**

Դժուարէ, որդեա՛կ:
Դու գիտես, արդեօ՞ք, ինչէ մեզ սպասում—
«Թագուհի լինել, և քեզ—Երուանդիս
Հայոց Թագաւոր կարգել և կոչել:
Սէր դէպ Սանատրուկ, մտածել, գիտեմ,
Թոյլ չէ տալ (շուտով արգելքը կ՚դառնայ),



Ձոխութիւնների, և փառքի վերայ,
Որոնք արքային շրջապատումեն:
Գա՛հը քո առաջ, զօրականք քամակդ,—
Դոքա մշտական քո պահապաններ.
Առաջիդ պատիւ նախարարների.
Ծիրանի հագած, աթոռ կը նստես,
Իրաւունք կ՚ստանաս ողջ ցանկութիւններ
Ածել ՚ի կատար: Անկախ և ազատ
Դու հրաման կ՚տաս քո ծառաներին:
Եւ շրջապատած կ՚լինես համախոհ
Քո ընկերներով: Կ՚վանես ոսոխիդ,
Որքան գեղեցիկ դու կ՚թագաւորես,
Նոյն քան և գահդ կ՚ձոխանայ, կ՚փայլէ,
Եւ կ՚պայծառանայ արեգակի պէս:

**Երուանդ:**

Ա՜հ, եթէ մի ժամ լինէի արքայ:

**Ներգիահ:**

Այդ փոքրէ: Յետոյ ե՛լ դու հրապարակ,
Ժողովուրդ, «Կեցցէ» գոչելով, կ՚ընկնի
Ոտիդ. յանկարծուստ յայն ժամ կ՚տեսնես,
Բերելով կ՚դնեն երեսիդ ընդդէմ
Իւրեանց գոյք. գանձը ձեռքումդ կ՚լինի:
Դորանով գրաւել բոլորին կ՚կարես,
Նախարարների աչաց սիրելի
Լինել հանապազ:

**Երուանդ:**

Մի՜ օր, օր միայն,
Այլ ոչ աւելի:

Ներգիաս։

Ա՛հ, փոքրէ և այդ։
Եւ դատաստանում գահի վրայ կ՚բազմես,
Քո դէմ, քո առաջ խեղճ, ողորմելի
Յանցաւորները կդիմեն անյապաղ։
Առաքինաբար դատելով նոցա, —
Եւ ճշմարտապէս, վեհ իմաստութիւն
Մեծ Սողոմոնի արդարև կ՚ստանաս։
Արտաքին արքայք լսելով վերայ
Բազում գովասանք, արդարդատութիւնդ,
Նոյնպէս ճոխութիւնդ, և զօրութիւնդ,
Շտապաւ կ՚ուղարկեն քեզ պարգևները,
Բարեկամ դառնալ, հետդ միանալ
Նոքա և անշուշտ կ՚սկսեն իսկոյն։
Անունդ, որպէս հնչումն բամբռան
Կ՚հնչուի ամեն տեղ, ծովից մինչ ՚ի ծով։

Երուանդ։

Մի ամ, մի տարի, թագաւոր լինեմ։

Ներգիաս։

Ո՜—այդ եւ փոքրէ։ Կ՚դառնաս և յետոյ
Դէպ ՚ի ժողովուրդ, դէպ ՚ի հայրենիք,
Քանդուած քաղաքներ կ՚նորոգես. նորեր
Կ՚շինես. աստուածներ քեզ կ՚յաջողայնեն,
Ըստ որում նոքա քաղաքաշինեաց
Սիրումեն, կեանքը երկարայնումեն։
Աշխարհում սրանից ցանկալին միթէ
Կայ. սորանից վեհ, ուրե՞, իմ որդեակ։
Բայց այժմը, Երուանդ, ինչի՞ նես նըման.
Ով է՞ քեզ ծանօթ, ով է՞ ճանաչում։



Երուանդ։

Սանատրուկ։

Ներգիաս։

Մի մարդ, որի զօրութիւն
Քո մէջնէ. եթէ դու չ՚լինէիր
Նա ոչնչութիւն միայն ցոյց կ՚տար։
Բայց սակայն երկիր, բոլոր աշխարհը։

Երուանդ։

Ո՜վ, ցանկանումեմ ես թագաւորել
Ողջ կեանքս. մինչ ՚ի մահ լինել արքայ։

Ներգիաս։

Երուանդ, կարողե՛ս, եթէ սիրտ ունես։

Երուանդ։

Այդ ՞ինչ,—ի՞նչ հնարքով։

Ներգիաս։

Արիւնհեղութեամբ։

Երուանդ։

Ո՞ւմ։

Ներգիաս։

Թագաւորիդ, քո Սանատրուկի։

Երուանդ։

Իմ Սանատրուկին զոհեմ, և թափեմ
Արիւն։ Խելացնո՞ր, դաղա՞ն, ի՞նչ ասար.
Իմ Սանատրուկիս, որի պատճառաւ
Այս տեղ արքունիք ես ընդունուածեմ։
Նորա սէր, պատիւ, հաւատարմութիւն

Բերեմ զոհ, մայր իմ, փառասիրութեա՛նդ:
Ո՜վ, ինչու իմ մէջ սպանեցիր դու գութ.
Թունաւոր դու ի՜ժ, թունաւորեցիր
Մարմինըս. հապա տո՛ւր ինձ քո սուրդ,
Տո՛ւր, տո՛ւր, եթէ դու դիտաւորութիւն
Չ'ունիս իմ ձեռքիցս . . . .

Անկանում է մօր վերայ:

Բերգիահ:

Որդեա՛կ իմ, Երուանդ.
Խեղդում ես, Երո՛ւանդ . . . . անօրէն որդեակ . . . .

Երուանդ:

Որդեա՛կ . . . ա՛հ—մայր իմ, հեռացիր, գնա՛:
Թող ինձ վայելել կեանքս խաղաղութեամբ:

Բերգիահ:

Ցնորւում ես, որդեակ, ցնորւում ես սաստիկ:
Միթէ՞ մոռացար, որ մարդս ծնուած է՝
Անմոռանալի վեհ գործ անելու:
Այդ գործը մնում է սերնդոց համար,
Եւ յորդիս որդի դրան ժառանգելով:

Երուանդ:

Թագաւորութիւն՝ որ իրաւ կը տայ
Կատարել սրտիս իղձերը: Բերգիա՛հ:

Բերգիահ

Իսկ այժմը կախուած, ձեռքերդ կապած,
Դու բոլորեցունց ըստրկի-մի պէս
Հնազանդես: Եւ մինչ, դու կատարում ես
Ամենու հրամանք: Երուանդ, ա՛հ—Երուա՛նդ,



Մտածի՛ր, ինչպէս վերադ ծաղրելով
Քո դժբաղդ ծնունդը մըտաբերումեն:
Նոցա, խոստացար ինձ, կորուսանել:

Երուանդ:

Այո՛, տակաւին ես չեմ մոռացել
Նոցա, որո՛նք ինձ միշտ կշտամբելով
Զայրացնումէին: Թո՛ղ այժմուս տեսնեն
Պատուհաս իւրեանց: Ես թագաւորեմ:—
Արքայ ես, Երուանդ, դու Հայոց Մեծաց:

Բերգիահ

Ա՛ռ ուրեմն և սուր, տես դու և պատճառ:

Երուանդ:

Դի՛ր քամակ—դօտիս մէջ: Ո՜վ—Բերգիա՛հ,
Մայր իմ, Բերգիա՜հ, եթէ չ'յաջողուի,
Կամ ժողովուրդը չ'ընտրի:

Բերգիահ

Ժողովուրդ

Վաղուց սիրում է քեզ, դու տեսնում ես:
Նախարարներին դրաւիր. այլ Սմբատ,
Առաքինաջան Սմբատ կարող է
Լինել քեզ արգելք:

Երուանդ:

Արգե՛լք իմ համար.
Ո՛չ երբէք. արգելք չկայ այսուհետև
Իմ համար:

Բերգիահ

Երուա՛նդ, այլ իմն զգուշութեամբ,
Նայի՛ր, քաջ, ո՛չք չիմանի: Մտի՛ր,

Ննջարան, երբ նա քաղծրութեամբ՝ գրկում
Նանէի կ՚լինի ծուլալից պարկած,
Անդ արխայի՜ր, հարուածով—մի խլէ՜ր
Նորանից փըլթած, ոչնչած—ոգին։
Կամ թէ առանձին դու տեսնես նորան,
Կապիր աչերը, և անկանելով,
Մի խնայէ՜ր, յանկարծ զարկիր դու կրծքին։

### Երուանդ։

Դու մի՛ կասկածիր, մայրիկ, ես ընդդէմ
Նամ բլրի կ՚գնամ. լեառ.ք տապալելեմ,
Կ՚գլորեմ բլրին։ Դուրս եկ, լոյցխ դեղ,
Դուրս եկ, փոքրադոյն սո՞ր . . . Սանատրկի՞ն—
Իմ բարերարի՜ս, որ ինձ որդւոյ պէս
Գորովեց, սիրեց։ Ո՜վ անգթութիւն . . . .
Զէ, երբէք, ես . . . ես հրաժարուումեմ։ Գա՜հ,

### Ներգիսահ

Թագ, և՛ անկախութիւն սպասումեն, Երուանդ։

Հեռանումէ։

### Երուանդ։

Սպասումե՞ն ինձ. թո՛ղ սպասեն անպատճառ.
Կ՚կատարեմ մօրիս դըրածը։

Ձայն հեռուից։

Ձայնե՜ր,
Զինուորք դիմեցին, թագաւոր, գուցէ,
Գայ—երթայ, վայելէ ինձ հեռանալ
Այս տեղից։

Պահումէ սուրը և հեռանումէ։ Բացւումեն դռները սրահի. մտնումեն Սեպուհք և կայնումեն պատշգամբի վերայ։



Մտնումեն—ՍԱՆԱՏՐՈՒԿ յեցնլով ՍՄԲԱՏԻ և ՏԱՃԱՏԻ վերայ, ԱՐՏԱՇԷՍ, ՎՐՈՅՐ, ՏԻԳՐԱՆ, ՀՐԱՀԱՏ, ՏՈՒՐ, ԱՄԲԱԿ և ԳԻՍԱԿ։

### Սմբատ։

Աթոռի վերա՛յ, տէր իմ, նստացնել ձեզ։—

### Սանատրուկ։

Տարէք, նուաղումեմ . . . Սենեակում ինձ դըժուարէ կենալ։ Խորհել կարողենք և այս տեղ։ Բնութեան գեղեցկութիւնը, օդը այգւոյ՝ զուարթացուցանումեն գաղափարները։ Երուանդը, արդեօք, մինչ այժմս չէ վերադարձել։

### Երուանդ (Յառաջ գալով)։

Կատարեցի հրամանդ, տէր իմ, հրամայեցի զօհ մատուցանել դիցն մեծաց։ Ժողովուրդը հարցուցանումէ առողջութեանդ մասին։

### Սանատրուկ։

Կարողես յայտնել, որ ողորմութեամբ աստուածների, առողջեմ. ողջունիր սիրելիներիս։ Շուտով, տան, օգնութեամբ Արամազդի, կ՚ազատուեմ հիւանդութիւնից, և կ՚արժանանամ տեսանել ինձ։ Սիրելի որդիք, ձեր մնուցիչ նշանակումեմ ասպետ Սմբատին, և յուսով եմ—նա կամքիս ներհակ չի գտնել։

### Սմբատ։

Արդարև հրամայեցիք. ներհակել ձեզ հակառակ է իմ բնութեան, և ես մնուցիչ արքայազանց դառնալով, ոչինչ խնայելու չեմ զարգացնել նոցա, որպէս հարկն է։ Գալով ձեր դուռըն՝ իմ միակ ցանկութիւնս էր—օգնական լինել որդւոցդ։

### Սանատրուկ:

Գովելի ես, Սմբատ, և սիրելին ինձ:

### Արտաշէս:

Ես շատ ուրախեմ, հայր իմ, որ Սմբատին ընտրեցիք մեզ համար սնուցիչ:

### Վրոյր:

Ես ևս ուրախեմ:

### Տիգրան

Ես ևս ուրախեմ:

### Սանատրուկ:

Որդեակք, նշանակելով Սմբատին, ես պահանջումեմ, որ դուք աշխատէք լսել նորան,—ցուցմունքը սերտել, և հնազանդ լինել նորան, որպէս և ինձ:

### Արտաշէս:

Խոնարհենք:

### Սանատրուկ:

Իսկ քեզ, Գիսակ, փոխարէն հօրդ—Արտաշէսի սնուցի, որ իւր կարողութիւն կորցրեց ծերութիւնից, յանձնումեմ որդիքներիս, որոց ամենայն մի ցանկութիւնը պարտականես լցուցանել: Եւ եթէ մի բան պատահի որդւոցս հետ, պատասխան կ՚լինի արիւնդ:

### Գիսակ:

Գիշեր և ցերեկ, արթուն և անքուն
Մինչ 'ի մահ կ՚լինեմ արքայազանց մօտ.
Արքայ, որոտմունք, կայծակ ուղարկեն
Ինձ աստուածները, եթէ յանդգնեմ
Խօսքս հրապարակաւ տուած չիջուցանել



### Սանատրուկ:

Բղնունեաց Տաճատ, ոչինչ դեռ ես չունիս լուր Բասէներից:

### Տաճատ:

Ոչի՛նչ, տէր:

### Սանատրուկ:

Դուք. Խորխոռունի և Առաւենեան, յայտնեցէք մեզ, զօրականք մեր չե՞ն կրում պակասութիւններ:

### Հրահատ:

Զօրականք առաջի ձեր ողջոյն մատուցանելով, վկայումեն ձեզ իւրեանց պատրաստութիւն . . . .

### Ամբակ:

Պարիսպ լինել ձեր մեծութեան:

### Սանատրուկ:

Շնորհակալ եմ, շնորհակալ. պարգևեցէք նոցա դրամ:

### Երուանդ (Մեկուսի):

Կատարե՜լ. սպանե՜լ մինչ ժամանակ կայ:
Կամ սպասե՜լ պատեհ ժամին, վայրկենին:
Անհամբերութիւն գրգռումէ ջիղեր:

### Սանատրուկ:

Տուր Մանաւազեան, այսօր ես հրամայեցի զրկել Զարեհին իւր ծառայութիւնից: Դու կ՚փոխադրես նորան: Արքունիքը քո ձեռքում թող այսուհետև լինի:

### Տուր։

Մեծ սիրով և ուրախութեամբ ընդունումեմ ձեզանից այդ պարգև։

*Համբուրում է սուրը։*

### Երուանդ (Մեկուսի)։

Բարերարի վրայ ձեռք . . . . Բայց թագը, գա՛հ։
Ինչո՞ւ խեղդում է անհամբերութիւն։

### Սանատրուկ։

Երուանդ, ուրեմն. այստեղ, մօտիկ, ինձ մերձ կայնիր։

### Երուանդ։

Այո, տէր, ձեր առաջ։

### Սանատրուկ։

Խաղաղեմ այժմ, երբ մտերմի մերձակայութիւնը կարողեմ զգացուցանել։ Այսպէս, ուրեմն, նախարարներ, ես ձեզ յայտնեցի ցանկութիւնս։ Մնում է ձեզ կատարել բոլորը, և ինձանից առատ և արդիւնաւորեալ բաւանք ընդունել։ Իմ յոյս միայն ձեզ վերայ եմ դնում. Ծերութեանս և վերջի օրերումս, աշխատեցէք, իմ պաշտնակներ, չ'վրդովել ինձ։ Առաքինացէք և ուրախացրէք ինձ։ Իսկ արդ, դէպ 'ի քեզ, Երուանդ։

### Երուանդ (Մեկուսի)։

Դէպ ինձ . . . գուցէ . . .

### Սանատրուկ։

Ես զգումեմ, որ աստուածները տակաւին ինձ չ'են կամենում կոչել իւրեանց մօտ դառնելու, և անդունդը գցելու իմ չարագործութեանց պատճառաւ, և ողոր-



մաբար կեանքս լայնացնել շարունակումեն։ Քո յաղթ ինձ առողջութիւն բերեց. յուսովեմ լաւանալ այս օրերումս։ Առաջին դուրս գալս—կ'լինի որս, իմ սիրած որսը։ Հրամայիր պատրաստութիւն տեսնել. մի առանձին, գեղեցկագոյն և ինձ վայելալեց որս կարգել, հրաւիրելով բոլոր նախարարներին, և որսատենչներին։ Տարէք ինձ . . . փոքրիկ ճամուկ այգում անեմ։

*Յեցած Երուանդի և Սըմբատի վերայ — գնում է։*

## ՏԵՍԱՐԱՆ 3.

*Անտառախիտ եղուր. վայրենաբնակ սրահան։*

*Յածեն դալ ելեց ՈՐՍԱԿԱՆՆԵՐ։*

### 1 Որսական։

Վարեցէք այս կողմ կինջերին. արքայն կ'հանի նետելու նոցա։

### 2 Որսական։

Արքայն որսում է ըլի քամակից, հեռու անտառում։

### 3 Որսական։

Եւ ոչ մի վարազ չ'յաջողեցաւ նորան սատակացնել մինչ ցայժմս։

### 1 Որսական։

Յրվելեն ամենքը. նախարարները—առանձին, զինւորքը առանձին. ամեն մինը նոցանից ուզում է պարծենալ արքայի առաջև իւր առատ աւարով։

**3 Որսական։**

Քաշուեցէ՛ք շուտով, թէ չէ Ներուանդը տեսնելիս մեզ պարապ, կ'պատժի։ Գլաջարդ կ'անի։

**2 Որսական։**

Վա՜շ, վա՜շ. լսումե՞ք շաչիւն։.

**1 Որսական։**

Ապա՛ շտապ նիզակներդ, լարեցէ՛ք նետեր։

Մտնում ՄԱԺԷԺ։

Որսականները ուզումեն փախչել։

**Մաժէժ։**

Կա՛ց, մնացէ՛ք. դուք այստեղ ինչո՞ւ էիք կայնած։

**1 Որսական։**

Վարումենք գազաններ բլրի մօտ, ուր Թագաւորը պէտք է որսի։

**Մաժէժ։**

Հատուկ գիտէ՞ք, այս տեղ է՞ որսալու։

**1 Որսական։**

Այո՛։

**3 Որսական։**

Գտաք խօսելու տեղ. ժամանակէ, գնանք։

**Մաժէժ։**

Հապա՛, դէ՛ն . . . վազէ՛ք, թէ չէ գլուխներդ կ'ջարդեմ։

Որսականները փախչումեն զանազան կողմերը։

Կորցրեցի տիրոջս. թանձրասաղարթ հովտում որպէ՞ս գտնեմ։ Հրաման տուեց ինձ հետեւել Թա-



գաւորին, և երբ նա մենակ որսալիս լինի, յայտնեմ նորան։ Առաւօտվանից արքայն մենակ է, բայց յայտնել չե՛մ կարողանում։ Ո՞ր տեղ որոնեմ։ Ա՜հ— Մաժէժ, Մաժէժ, թշուառես դու, երբ տիրոջդ— Ներուանդին մի հաճոյական բան չ'ես ցոյց տալի։

**Ներուանդ** (Բլրի վերայ)։

Է՜ի, Մաժէժ, Մաժէ՜ժ, Մաժէժ։

**Մաժէժ։**

Այս տեղեմ,—նախարա՛ր, ձեզեմ որոնում։ Վերջացաւ չարչարանքս, գտայ ձեզ։

**Ներուանդ** (Ցածէ գալի)։

Խելագա՛ր, ես քեզ ի՞նչ ասացի, ի՞նչ հրամայեցի։

**Մաժէժ։**

Մեղա՛յ, առաւօտվանից ձեզ մանէի գալի, և չ'եմ գտնում

**Ներուանդ։**

Յիմա՛ր, դու սպասումէիր, որ ես ինքըս ընկնեմ բերա՞նդ, ծամելը հեշտ է։

**Մաժէժ։**

Մեղայ, Նախարար։

**Ներուանդ։**

Հանդիպեցա՞ր Թագաւորին, տեսա՞ր, մենակէ՞, թէ մարդ կայ մօտին։

**Մաժէժ։**

Մարդ չ'տեսայ, մենակէ որսում

**Էրուանդ:**

Գնա՛, վազի՛ր նորից, տե՛ս և յայտնի՛ր ինձ: Բլրի մօտ սպասելու եմ քեզ:

*Գնում է Մաժէժ.*

Գոռայ վերջապէս, գոռայ ժամանակ,
Այսպիսի պատեհ տեղ չ'եմ գտնելու.
Ծառի տակ նստած, կամաց կ'նկատեմ,
Կ'լարեմ նետս, ուժ գին . . . .

*Գալիս է ՍԱՆԱՏՐՈՒԿ սուլելով:*

Ահա նա. քաշուեմ:

**Սանատրուկ:**

Ա՜յ փուշ կենդանիք, ձեռքիս չ'էք ընկնում,
Որ ձեզ սատակեմ. միա՛յն ընկնէի՛ք:
Ա՜ դու . . . ա՛խ—Երուանդ, դո՞ւ ես, ուր էի՞ր:
Երուանդ, տխուրե՞ս, այդ ինչեմ տեսնում:
Միթէ՞ պատիւներ քեզ չ'են բաւական,
Իմ սէրըս, գահիս կէսը համարեայ,
Չ'են ուրախացնում: Ասա ինձ, Երուանդ,
Ինչէ՞ ցանկութիւնդ, ինչէ՞ քո խղճը:

**Էրուանդ:**

Ո՜վ, արքայ, իմ խղճս ոչ ոք չէկարող
Իմանալ, ոչ ոք բաց 'ի իմ սրտից,
Աշխարհումըս չէ կարող կատարել:

**Սանատրուկ:**

'Ի զուր: Միտք բե՛ր, որ թագաւորեմ
Ես Վերին—Փոքուն Հայոց. միտք բե՛ր,
Որ ձեռքում բռնած Հայաստան ունիմ:
Իղձդ այդպիսի մեծէ՞, անկատա՞ր:



**Էրուանդ:**

Լաւ յարմարեցիր. մեծէ, անկատար:
Թագաւորես դու միայն անունով,
Կառավարչութիւն չ'ունիս —

**Սանատրուկ:**

Բայց սակայն՝
Զօրութիւնդ քո իմյս համեմատ:

**Էրուանդ:**

Ոսկիներ ունիմ, կարողեմ զրկուիլ
Քո սէրից, նոյնպէս և զօրութիւնից:

**Սանատրուկ:**

Դո՞ւ: Ինչպէս, ասա, կարողես զրկուիլ.
Յայտնի՛ր, ինձանից ինչո՞ւ ես ծածկում:
Ոսկիդ գիտես, և չ'ե՞ս սպանանում:
Այս փայրկենիս քեզ՝ ես թոյլ եմ տալիս,
'Ի սուր հանել քո պիղծ ոսկիդ:

**Էրուանդ** *(չորս կողմ նայելով):*

Ասպաբաղդ արքա՜յ, դու թոյլ ե՞ս տալի:

**Սանատրուկ:**

Այո, աստուածներ վկայեն՝ այս տեղ
Քեզ արձակում եմ սպանել արգելքիդ,
Եւ ընտանիքով նրան կորուսանել: —

**Էրուանդ:**

Բայց եթէ ինքդ ես իմ արգելք:

**Սանատրուկ:**

Ե՞ս.
Ես քո արգելքը՞ . . . . Ծպի՛րհ նախարար,
Ստրուկ չնչին:

### Երուանդ:

Այո՛, դու ես իմ արգելք:
Ուրիշ ոչ ոքին իմ ճանապարհում
Չ՚եմ ես նշմարում, բաց ՚ի քեզանից:
Եւ քեզ՝ ես ՚ի սուր բարուք հրամանքովդ,
Մեծ ուրախութեամբ սկսումեմ անցնել:

Հանում նետ. Սանատրուկը հետէ քաշւում:

### Սանատրուկ:

Լսի՛ր ինձ, քեզ գահս....

### Երուանդ (յարձակուելով, զարկում կուրծքին),

Կ՚ընդունեմ փառքով:
Տո՛ւր, ինձ տեղ. մեռի՛ր, Սանատրուկ—արքայ,
Կորի՛ր իմ արգելք. երկրի երեսից
Խուսափուի՛ր... Երկինք....

### Սանատրուկ:

Անգո՛ւթ—բարբարո՜ս....
Ուրե՞ն որդիքըս:

### Երուանդ:

Նա հոգս կ՚քաշեմ:

Վազում:

### Սանատրուկ:

Արտաշէս, Սմբատ....օգնեցէք...Երուանդը....

Մտնում ՄԱԺԷԺ:

Սանատրուկը ընկնում գետնի վերայ:

### Մաժէժ:

Նախարա՛ր իմ, Թագաւորը դէպ այս բլուրը գար-



ձաւ: Բարէ՜... Երուանդը այս տեղ չէ՛...Այս ո՞վէ անկած...ծերունի՞....Վա՜յ. արքայ է...մեռած... նետով զարկած....Ա՜յ, ո՜յ, ո՜յ—հասկացա՛յ, առաւօտվանից որոնուածը սփռածէ.—հասկացա՜յ.... ծամելը հեշտ է՝ եթէ բերանում ինքն ընկնի....Տիրոջս իմաստութիւն խորին է: Գնամ, Թագնուեմ, թէ չէ կ՚ասեն, որ ես եմ սպանել... Թող ուրիշը առաջին բացանի սորա մահը:

Գնում:

Զանազան կողմերից վերադառնումեն ՈՐՍԱԿԱՆՆԵՐ:

### 1 Որսական:

Դարձեալ բլրին հասա՛նք.—

### 3 Որսական:

Ահա՜ քեզ որս:—Գո՛նէ մի գազան գտնէինք:

### 2 Որսական:

Այս ո՞վ պէտք է լինի տարածուածը գետնի վերայ:

### 1 Որսական:

Երեւի քնածէ:—

### 2 Որսական:

Տեսէ՞ք, Թագաւորէ...

### 1 Որսական:

Ի՞նչ:

### 3 Որսական:

Սպանածէ, նայեցէք, նետը կրծքին:

### 1 Որսական:

Եղջիւրահար, ածի՛ր եղջեր. բամբիռն խփեցէք:

Հնչումեն եղջեր, և խփումեն բամբիռն:

Հաւաքվում են ՍՄԲԱՏ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐ, ԳԻՍԱԿ, ՍԵՊՈՒՀԻՔ և ԶԻՆԻՈՐՆԵՐ:

**2 Որսական:**

Շտապեցէք, տեսէք:

**Սմբատ:**

Ինչէ՞ պատահել:

**Տաճատ:**

Չ՚լինի սպանուեց որսականներից մինը կինջեց:

**1 Որսական:**

Ո՛չ. արքային գտանք մեռած:

**Սմբատ:**

Տէր իմ—արքայ:

**Տաճատ:**

Արքա՛յ—քաջածին:

**Գիսակ:**

Բարերար իմ:—

**Հրահատ** (Գնում է Սանատրկին):

Թագաւորը վիրաւորած է . . . կուրծքը բաց . . . ալուցը զարկած . . . մահ անխորշելի:

**Տաճատ:**

Որ տեղէ՞ց եկան սպանողները: Ո՞ւրեն պահապան զինուորք. ո՞ւրէիք դուք, որսականներ: Ո՞ւրէ՞ Երուանդը:

**1 Որսական:**

Մենք որս . . . վարումէինք . . . .

**Երուանդ** (Բլրի վերայ երևում Մաժէժով):

Զարկեցի՜ հրէշին . . . . հասէք որսականներ. Մա-



ժէ՜ժ, տար շուտով արքային—նուիրիր ինձանից:

**Սմբատ:**

Ա՜հ—ուրեմն, Երուանդ. սիրելույդ կեանքը հանգչուեց:

**Երուանդ** (Ցած է գալիս բլրից):

Արքային անկած է՞ . . . մեռա՞ւ . . . հիւանդէ՞ . . . .
Ահա պատճառը մեծ չփոթութեան
Բամբուան, եղջերի . . . Ո՜վ անիծիալներ,
Գազաններէք դուք, այլ ո՛չ թէ մարդիկ,
Այդպէս էք պահում ձեր տիրոջ:

Լալով:

Արքա՛յ.
Բաջաղն արքա՛յ, Սանատրուկ—զարթիր.

Գնում է:

Մեռած չէ դեռ ես:

Սկսում է խեղդել:

**Գիսակ:**

Այդ ի՞նչ ես անում:

**Տաճատ:**

Մի տանջիր. իւր շունչ խաղաղ թող յանձնի Աստուածոյ:

**Երուանդ:**

Կացէ՛ք . . . սուս . . . ո՜վ կացէք դուք,
Ես կեանք կ'դարցնեմ իմ բարերարիս:

Սկսում է խեղդել, երբ զգենով:

**Սանատրուկ** (Բարձրանալով):

Խըլե . . . Երուանդը՜ . . . Երուանդը՜ . . . (ընկնում է)..
սպան . . .

### Երուանդ:

Ձեզ մօտեմ, տէր իմ, սպանողին կ՚սպանեմ:
Շտապեցէ՛ք տանել այս տեղից սորան
Արքունիք:

### Ամբատ:

Այն տեղ մենք կ՚ողբանք, կոգենք,
Կը կոծուենք: Վաղը՛, Տէր, պատրաստութիւն
Տես. Հրաման դու տուր պնդել սպանողին:

Գնում՝ Տէր:

### Երուանդ:

Ունիմ խօսք ասել մի:

### Ամբատ:

Ես պատրաստեմ:
Նախ քեզ—Թագո՞ւն, թէ արձակ:

### Երուանդ:

Թագո՞ւն.

Փաշուումեն կողմը:

Շտապումես 'ի դուր պնդել սպանողին:
Պիտոյ չէ իսկոյն յայտնել ամենին՝
Թէ արքայն սպանուեց—այստեղ, մի մարդից:
Եւ բարեպատեհ կ՚լինի, կարծումեմ,
Եթ՝ հրատարակենք, ամբոխին ասենք՝
Թէ թագաւորը որսում նետահար
Մեռաւ իւր դատերց կողմնապահներից.
Ըստ որում դատերք կրելով չարչարանք—
Արքայի հրամանքով—ոչ թէ մէկին,
Այլ և շատերին—գորով շարժեցին,
Որք քինախնդիր դատերց պատժառաւ,



Հանդիպելով որսում թագաւորին—
Նորա—սպանողներ եղան դաղտաձիգ:

### Ամբատ:

Ըստ մասին, միայն մասամբ քո ասած
Դիտաւորութիւնդ ես բաժանումեմ,
Թէ և ոչ ամեն հասկանալի է . . . .
Հրաժա՞ն, դու Տուրին շուտ վերադարձրուր:

Գնում՝ Հրահատ:

Երուանդ, առանձին առաջարկութիւնդ
Մենք խոր կքննենք: Իսկ դու, պարզ Գիսակ,
Խեղճ արքայազուն որբերին հասիր:
Նկէ՛ք դու՛ք տարէ՛ք ձեռքերի վերայ
Ձեր վերջի սփոփանք, որին պահպանել
Հմտութիւն չ՚ունէ՛ք: Պատասխան կտաք:

Տանումեն Սանատրուկին:

## ՏԵՍԱՐԱՆ 4.

Փողոց—արքունեաց առաջին:

Անցանումեն—զանազան մարդիկ, ժողովուրդ մասամբ. զօրականք բաժան բաժան դէմ առ դէմ:

Մտնում՝ ԲԵՐԳԻԱՀ համարեայ ծածկուած և սևազգեստ:

### Բերգիահ:

Պրծաւ, վա՜շ, պրծաւ, և նպատակիս
Հասայ վերջապէս. ծիրանի հագած,
Զօրականք քամակ, և սրտրկութիւն
Ամենայն ուրեք, նուաստամտոյց
Ծառայութիւններ. նուաճէ բոլոր

Թէպէտ ընդդէմ է ազգիս օրինաց,
Նոր օրէնք կ'հանենք. Թագուհի եմ ես,
Թագաւո՛ր Երուանդ, Երուազ քրմապե՛տ։
Սակայն Արտաշէս, Վրոյր և Տիգրան.
Է՜հ, մանուկներն նոքա տակաւին։
«Պառնիկ Արշակեան» թո՛ղ նոքա գոչեն,
Թո՛ղ արդ յանդգնեն թագուհւոյն ծաղրել։
Իսկոյն, նոյն ժամայն կ'հրամայեմ թրցնել
Գլուխները նոցա։ Դժուարէ կռուել,
Դժուարէ կնոջ հետ և վիճաբանել։
Անյայտէ նոցա՝ որպիսի լեզուով
Եւ որոգայթներով իշխումեն կանայք։
Նոցա կ'իմացնեմ զօրութիւն բառի
«Կին», երբ ուռկանում, որպէս ձկներին,
Նոցա կ'ըմբռնեն։

Աղաղակ և զանգահարութիւն։

Աղաղա՛կ, զանգա՛կ։

Վա՛շ. զանգի հարիլն նշանէ մահուան։
Ա՜, մեռաւ ուրեմն երկրային մոլակ,
Մեռաւ խարազան։ Թող կեցցէ Երուանդ։

Մտանէ ԵՐՈՒԱՆԴ։

Սա ո՞վ է գալի. Երուանդնէ երթում,
Տխո՜ւր, փոխանակ ուրախութեան, նա . . .

**Երուանդ։**

Փախաւ, գնաց արքայն. մեռաւ ծիրանին,
Մեռաւ Սանատրուկը իմ չուառ ձեռքից։
Փառասիրութեան ծընունդ, ո՞ւր տարար,
Ո՞ւր ինձ հասուցիր։ Ո՜վ, հազար աւաղ։
Այս ինչ գործեցի. մարդկային ականջ



Դեռ ևս չէ լսել. աչքը սորա նման
Դեռ ևս չէ տեսել։—Եւ ես առաջին,
Ես միայն,—գրաւելով՝ իմ ապշեցուցած
Բարձրացի ձեռքս տիրոջս վերայ։
Ո՞վ ինձ այդ խրատեց, ո՞վ ինձ տուեց նետը,
Որով սպանանել համարձակուեցայ
Հօրս, արքայիս, իմ Սանատրուկին—
Ինձ միայնակ կինը կարողէր խաբել.
Դա իմ մայրս էր . . . մայր իմ—Ներգիահ,
Սանդարամետի զաւակ, դըժոխքի
Պտուղը։

**Ներգիահ** (Յետ յետ քաշուելով)։

Երուանդ, որդեա՛կ իմ Երուանդ։

**Երուանդ։**

Ո՞վ ինձ կոչումէ. ո՞վ կ'համարձակուի։

**Ներգիահ։**

Գահը . . . .

**Երուանդ։**

Գա՞հ։

**Ներգիահ։**

Փառքը . . . .

**Երուանդ։**

Փա՞ռք։

**Ներգիահ։**

Թագը . . . .

**Երուանդ։**

Թա՞գ։

**Ներգիահ:**

Եւ անկախութիւն աննիրհ սպասումեն:

Գնումէ:

**Երուանդ:**

Եւ անկախութիւն աննիրհ սպասումե՞ն:

Հեռուից երևումէ ԺՈՂՈՎՈՒՐԴ:

**Ժողովուրդ:**

Կեցցէ Երուանդը, կեցցէ Թագաւոր:

**Երուանդ:**

Ժողովուրդը ինձ Թագաւոր ընտրեց,
Փոխանակ լալոյ և շփոթութեան—
Ժողովուրդը ինձ «Կեցցէ» է գոչում:
Որոնեալ գահը, ցանկացած Թագը
Ստացայ, ընկալայ: Այլ ի՞նչէ մնում.
Դու քաջալերուիր, Երուանդ, արքայես:
Զ՚ունիս ոսոխներ, գնա, ըմպի՛ր բաժակ
Քաղցրութեան: Գնա, նստի՛ր գահի վրայ.
Առաջիդ արգելք դու չ՚ես ունենալ:
Երուանդն արքա՜յ. ՚ի բա՜ց—արքայից:
Ես Թագաւորեմ: Հայկազնեան գնդի
Մեծ իշխանեմ ես. ոչ ոքի ցասման
Բնաւ չ՚եմ վախենալ, հարուստ բոլորից
Գոլով խսկալէս: Կ՚ժողովեմ զօրքը,
Հայերին կ՚ասեմ. վերկա՛ց տաղնապաւ,
Թէ հարստութիւն կամիս ունենալ,
Դորան կ՚ստանաս ինձանից շտապաւ:



**Ժողովուրդ** (ընդ. առաջ, դէպ ՚ի Երուանդը):

Կեցցես դու, Երուանդ, կեցցես մեր արքայ:

**Երուանդ:**

Ես եմ ձեր արքայ, ես եմ Թագաւոր:
Հնչեցէք փողեր. հնչեցէք անունս:
Վաղումեմ քսակով.—կեցցէ ժողովուրդ:

Գնումեն:

# ԱՐԱՐՈՒԱԾ

## ԵՐԿՐՈՐԴ

## ՏԵՍԱՐԱՆ 1.

Ապարանք Սմբատի։

Մտնումեն ՏԱՃԱՏ և ՀՐԱՀԱՏ։

**Հրահատ:**

Դու համաձայնե՞ս, որ Սմբատունի
Սպանողը պէտք է լինի Երուանդը։
Մտաբերումե՞ս, երբ մենք վազելով
Եկանք բամբռան՝ եղջերի հնչման,
Նա շունչը տալով. «Երուանդը սպան . . . . » — «եց»
Չ'արտասանելով ուշաթափ եղաւ։

**Տաճատ:**

'Ի հարկէ միտըս է։ Այլ նկատեցի՞ր
Նորա ձևացման ընդունակութիւն։
Ինչի՞ է նըրան «Թագաւորի գահ»,
Երբ Թատրոնական ամբիոնի վրայ
Կայնած՝ նորա լաւ յատկութիւնները
Առաւել օգուտ կ'բերեն, կ'զարմացնեն։
Յաւիտենական չէ նորա բաղդը։
Եթ՝ անկարծելի նորան ժողովուրդ,
Դոյզն ինչ նախարարք, միամիտները,



Շտապով ընտրեցին—արքայ, սակայն շուտ
Եւ կ'արհամարհեն։ Կ'տապալեն, գահից
Վեր կ'գցեն իւրեանց կուքին, բերելով
Զոհ ագահութեան և անմըտութեան։
Օրինակաւոր մերժել ժառանգը,
Եւ ընդդէմ նորա նստել աթոռը . . . .
Այդ վերէ, Հրահատ—սիրելի, վերէ
Անսովորական չարագործութեանց։
Սոված առիւծը ոչխարի վերայ,
Չ'էր ընկնիլ այնպէս ուժգնութեամբ, որպէս
Գահի վրայ Երուանդը։

**Հրահատ:**

Այո. հեռու չէ,
Երեգ յարգանօք, դէպ 'ի մեզ պատուով,
Դառնումէր. իսկ այժմ նայել հաճելի
Չէ նորան անգամ։

**Տաճատ:**

Ո՛չ ժողովրդեան
Սէրը, այլ քսակը նորան բարձրացրեց։
Կը փթի քըսակ, սէրը կ'հանգչուի.
Իսկ մինչ 'ի փթիլը, որքան չարութիւն
Նա պէտք է գործի, և անմեղների
Արիւնը թափի . . . . և նախ մեր անձանց,
Քանզի մեզ Երուանդ, նպատակների
Իւրեան՝ հակառակ համարումէ։

**Հրահատ:**

Չէ,
Տաճատ, մեր արիւն թափելով, նայիր,

Գահից չ'զրկուի. ըստ որում Հայկայ
Ցեղից գոլով, մեզ կ'սիրէ ժողովուրդ,
Պատուումէ։ Տուրին, ամարդ Ամբակին,
Ունիմ յոյս, որբէք չ'նմանել։

**Տաճատ։**

Նոքա
Պահապանք դառան արքայ Երուանդի,
Ամաչացնելով իւրեանց ազգատոհմ։
Մոռացան երդում, մոռացան և մեզ,
Նոյնպէս Սմբատին, որի առաջև՝
Չ'խնայել իւրեանց կեանքը երդուեցին,
Երբ պիտոյ լինի, կամ երբ պահանջուի։
Ազնուութիւնը . . . .

**Հրահատ։**

Ի՞նչ, ազնուութիւն.
Այդ արժանաւոր կորածէ կայծը,
Թաղածէ դոցա համար։ Երուանդին
Դոքա նմանեցին։ Արդարէ, Տաճատ,
Զրոյցըդ. մրտածել սեպհական անձանց
Մեր վերայ, այո՛, պէտքէ անպատճառ։—

**Տաճատ։**

Ուշացաւ Սմբատ։ Ինչո՞ւ մեզ կանչեց։

Մտնում ՍՄԲԱՏ։

**Հրահատ։**

Ահա՛ և ասպետ—Սմբատ։

**Տաճատ։**

Դիւցազնին
Ողջոյն։



**Սմբատ։**

Հայրենեաց վճիռը, նոցա
Որդւոց սրտումէ անխախտ անփոփած։
Տաճատ—անշփոթ, և բարի—Հրահատ,
Միայն դուք էք մնացել. Տուր և Ամբակը
Մոլորուած, անկած Երուանդի առաջ,
Կանայք, հայրենիք իւրեանց թողնելով,
Լքումէն ահեր։—Անարժա՛ն որդիք,
Երուանդին վիճակ ձեր՝ դուք յանձնեցէք.
Երուանդը կ'մեռնի իմ ձեռքից, և դուք
Ջերծանելու չէք։—Անոյշ հայրենի՜ք,
Ա՛հ, սիրուն իմոյս բնակութեան դու տեղ,
Ինչո՞ւ աստուածներ ծաղրումէն վերադ,
Մարդանման վայրեք քեզ ուղարկելով։
Մինչ երբ տանջուես դու, մինչ դեռ աւաղես.
Սահման չ'ունի՞ քո նուաղութիւնըդ,
Կամ վերջը չ'կայ քո չարչարանաց։
Պայծառ փայլերից—մինը՝ քեզ կորուստ,
Ես դուշակումեմ։ Խեղճ և տարաբաղդ
Բնակիչներ,—բոլոր սրտով ողբումեմ—,
Եւ քեզ մարդկութիւն. ինքդ ցանկացար
Չար, ինքդ մորակի հարուած զրկեցիր։—

**Տաճատ։**

Հանդիստ չէ կարող վայելել Երուանդն
Գահը և թագը, մինչև մենք, Սմբա՛տ,
Եւ դու՝ կենդանի ենք Հայաստանում։

**Հրահատ։**

Սաստումէ մահ, և տոհմիդ կատրած,
Սմբատ, անշուշտ քեզ։—

## Ամբատ:

Ի՞նչ. որովհետև
Նորա գլխին ես Թագը չի կրեցի:
Ձէ, եղբարք. Երուանդ, Տուր և Ամբակը
Ինձ վախեցնումեն այնքան, որքանի
Աղուէսը գայլին: Մենք ապահովենք.
Մտածեցէք միայն գառների վերայ,
Վրոյր, Տիգրանի և Արտաշէսի:
Պատրաստած եղէք, իբրև ձայն լսէք,
Կոծոյն դուք լռէք, աճապարելով
Հասէք օգնութիւն:—Երուանդը նստա
՚Ի գահ, սեպհական ձեռքով նա դրեց
Իւր գլխի վերայ Թագը: Թագաւոր
Օրինաւոր նա է, որի վերայ
Թագը կ՚դնի մին Բագրատունի
Ցեղից, կ՚հագցնի նորան ծիրանին:
Փութանցիկէ նրա բաղդը, և յետոյ
Մահուան ատամներ կրճտելուեն:
Իսկ արդ, իմ եղբարք, բարեհաճեցէք,
Հոգաբեկ ծերունւոյն—ասա մօտենալ,
Եւ ականջալուր շտապեցէք լինել
Նորա պճնազարդ առաջարկութեան,
Որի պատճառաւ ձեզ հրաւիրեցի:
Երեքներս այս տեղ երդուենք միասին,
Երդուենք սքանչելի, մեծ Արամազդով,
Եւ Նորա ծընունդ Տիկին Անահտով,—
Փառօք ազգիս,—մօր ողջախոհութեան,
Որից կեանք ենք ստանում, որը կ՚սիրէ
Մեր քաղցր երկիր. Նախարարք, երդուենք



Սրտեռանդութեամբ—սիրել Հայաստան:
Սլաք սըրոյ վերայ ձեռքեր տարածէք:—
(Հանում Թուր):

## Տաճատ:

Սփռումենք ձեռքեր—մեր՝ Թըրոյ վերայ:

## Հրահատ:

Մեծ Արամազդով երդուումենք, նոյնպէս
Նորա ծնունդ Տիկին Անահտով, մեր ազգ
Սիրել:

## Ամբատ:

Նանէով, դստերը Որմզդի
Երդուենք մենք, զոհել նրա օգտի համար
Մեր կեանքը, ապէս և կալուածները:

## Հրահատ:

Սփռումենք ձեռքեր—մեր՝ Թըրոյ վերայ:

## Տաճատ:

Կ՚երդուենք Նանէով—դստերը Որմզդի,
Զոհել մեր կեանքը և կալուածները:
(Տուեկն Թեքումեն):

## Ամբատ:

Երդուենք և բնութեամբ, երդուենք և Միհրով,
Ի՛ այլ աստուածներով անքակ ներգործել,
Միախոհ երթալ, միամիտ հանել
Մեր նպատակին, և արքայազարմ
Ժառանգին, նորա և եղբօրներին՝—
Սիրել:

## Հրահատ:

Երդուումենք:

**Տաճատ։**

Նրգւում անաչառ։
(Վերևն կենում)։

**Սմբատ։**

Համբուրենք միմյանց։ Հա՛.—այսօր Նրուանդ
Նրստած գահի վրայ խրոխտապանծ, հպարտ,
Շնորհաւորութիւն պէտքէ ընդունի,
Ողորմութիւններ բաժանի, բաշխի
Պատուանշաններ և աստիճաններ։—
Գնանք, ներկայանալ և մեզ պիտոյ է։

**Հրահատ։**

Ներկայութիւնըդ քո աւելորդէ։—

**Տաճատ։**

Ամենու առաջ կարողէ Նրուանդ
Առաջարկել կամ—կրկին ստիպել քեզ
Թագը իւր գլխին դնել։

**Սմբատ։**

Համարձակուի,
Առաջարկել նա թող միայն փորձի,
Որ ես լուի լու կատարեմ հրաման,—
Որպէս Թագադիր—հայ Բագրատունի,
Դնեմ նորա գլխին թագը,—ես գիտեմ,
Ի՛նչ պատասխանը կըտամ մեծութեան։—
Չէ. չ'առաջարկիլ, կ'վախենայ ստանալ
Խնձանից մերժումն։ Մեզ ինչ և իցէ
Պէտքէ Նրուանդին՝ ընտրած—արքային,
Արդ ներկայանալ։ Ուրեմն, հարադատք—



Ըստ մըտաց, երթ՛նք սրահ Թագաւորի,
Ակամայ կամօք ուր ծըռենք վիզեր
Յափըշտակողի առաջև, մինչև
Քինախնդրութիւն կարենք պահանջել։
(Գնումեն)։

# ՏԵՍԱՐԱՆ 2.

Սրահ [illegible] Նրուանդի արքունիքում։

Մտնումեն ՍԵՊՈՒՀԻՔ և կայնումեն գահի մօտ. մին աջ, միւսը ձախ։
(Հնչումեն փողեր)։
Մտնումեն ՏՈՒՐ և ԱՄԲԱԿ զօրականօք և կայնումեն ձախ։
(Հնչումեն փողեր)։
Մտնումեն ՏԱՃԱՏ և ՀՐԱՀԱՏ զօրականօք և կայնումեն աջ։
(Հնչումեն փողեր)։

Մտնումէ—ԱՐԳԱՄ զօրականօք, որոնք շրջապատումեն գահը—քամակից, իսկ Արգամը կայնումէ գահի ձախ կողմը։

Մտնումեն—ԵՐՈՒԱԶ, կայնումէ ձախ կողմ. ԱՐՏԱՇԷՍ, ՎՐՈՅՐ, ՏԻԳՐԱՆ—սևազգեստով. Վրոյրը կայնումէ գահի բազրոանի վերայ—ձախ, Տիգրանը—աջ, իսկ Արտաշէսը՝ գահի դէմ ու դէմ. Նոյա քամակից ՍՄԲԱՏ և ԳԻՍԱԿ, և կայնումեն աջ կողմը։

**Տուր։**

Ողջոյն և յարգանք քեզ վեհապազն—Արգամիդ։

**Սմբատ։**

Կարծեմ՝ է սկզբանէ ողջունել հարկնէ արքայազարմ երեխաներին։

**Տաճատ։**

Կեցցե՛ն արքայազունք, ողջոյն քաջազանցդ։—

### Արգամ։

Ողջոյն և յարգանք ձեզ՝ ուղւոյդ արքայի, և ձեզ՝ գլուցազանց նախարարներիդ։

(Արքայադուռնք ողջունումն Արգամին)։

### Ամբատ։

Կեցցէ՛ք և դուք—սիրելի խնամատարք հայրենեաց։

(Հնչումն փողեր)։

Մտնումն երկու ՈՍՏԱՆԻԿՆԵՐ բերելով մի բարձ, որի վերայ Թագն դրած, կայնելով գահի դէմ ու դէմ, նոցա քամակից մտնում ԲԵՐԳԻԱՀ ՆԱԺԻՇՏՆԵՐՈՎ, որոնց կէսը կայնում աջ, միւսն ձախ,

(Բարձրաձայն հնչումն փողերը երկու անգամ)։

Մտնում ՆՐՈՒԱՆԴ. մօտենում պատանի—ոստանիկներին, դնում Թագ և բոլորեքեանք Թեքումն ծունկին։ Բազմում գահի վերայ. այդ ժամանակ մերձենում ԲԵՐԳԻԱՀԸ. Մտնում ՄԱԺԻԺ. և կայնում գահի քամակ. վերին կենում ամենեքեանք։

### Նրուանդ։

Բազմելով ահա, գոհութեամբ գլոյ,
Աթոռ—նախնեաց, մեր պարտիքէ յայտնել՝
Ի՛նչ որ կախուածէ մեզանից։ Այո՛,
Համաձայնութեամբ ձեր—ընտրածենք մենք
Թագաւոր։ Սէրը ժողովրդական՝
Եւ վստահութիւն ձերը մեզ վերայ,
Ձեր առաջև բացանել ստիպումեն
Նպատակ, միտքը և մեր ցանկութիւն։
Մեր առած գործը—սուրբէ մեր համար։
Որպէս սերունդըն մեծ աստուածների,



Եւ Արշակունի—քաջազարմ, որ մենք
Ցոյց կըտանք գործով, ոչ թէ խօսքերով,
Անշէջ մեր սէրը դէպ 'ի հայրենիք,
Դէպ 'ի բնակիչներ նորա։ Մեր վերայ
Ընդունելով այս նշան պատուելի,
'Ի բոլոր սրտէ մենք կ'աշխատենք ես—
Արդարացնել ձեր ապաւինութիւն։
Մեր սեպհականը պատւում—սիրումենք.
Նրա բաղդի, փառքի, և խաղաղութեան,
Եւ հարստութեան համար, ես այստեղ,
Ամենից առաջ, Մեծ Արամազդով
Երդւումեմ, նոյնպէս՝ վկայ բերելով
Եւ ոսկեհատ դիցուհի Անահտին,
Զոհել իմ կեանքըս և բոլոր իմ գոյքը։
Միաւորումենք մեր խաղաղութիւն՝
Ազգային բաղդի—խաղաղութեան հետ։
Իմ նախարարնե՛ր և ազնուականներ,
Առաջարկումենք մենք մաքուր սըրտով՝
Լինել մեր գահի սիւն, որպէս նախնեաց
Թագաւորներին։ Դուք պարտականէք,
Նմանելով հարանց ձեր, նոցա գործը
Շարունակել և հաւատարիմ մեզ
Լինել։ Ուրեմն միաւորեցէ՛ք
Ձեր անձը մերի հետ, ձեռք ձեռք բռնած,
Համախոհ, երթանք միասիրտ ընդդէմ
Ցանկացողների մեզ չար և ընդդէմ
Թշնամիների մեր Բնոյն։ Վաստակե՛նք
Յօգուտ և փառքի մեր ժողովրդեան,
Արժանաւորեալ ընդունել պատիւ։

Շմբատ։

Յօժարենք՝—պատրաստ։—

Տուր։

Կեցցէ՛ք յաւիտեան։

Երուանդ։

Նախնեաց գործերը, նոցա քաջութիւն
Առաջի աչաց իմոց կ՚արկանեմ։
Ամենայն քայլս կը համեմատեմ
Նախանձելի հին արքայից քայլին։
Նախարարներին, և նոցա ցեղը,
Կ՚պատուեմ, կ՚յիշեմ տառապեալներին,
Յանցաւորներին ես։

Շմբատ։

Անմահութիւն.
Կեցցէ՛ք։

Տուր։

Թագաւոր, կեցցէ՛ք յաւիտեան։

Երուանդ։

Ձեր երեսները, նախարարք, լաւ
Մեզ ցոյցեն տալի այն տխրութիւնը,
Որ ձեզ պատճառեց քաջազնի մահը։—
Սակայն ցնծացէ՛ք, խնդրումենք, այսօր
Ուրախալի է. անցածի վերայ
Մարդ մտածելով, ապագայն բնաւին
Նրանից կ՚հեռանայ։ Ողբը և լացը
Վերադարձնելու չ՚են նորան, որի
Կեանքը առած է վեր—աստուածների



Կամօք. ապատուել ես մահկանացուն
Վերջից չէ կարող. սակայն՝ և դուցէ
Յած դան արալեզք—վերադարձնելու
Նորան կեանքը . . . Եւ ես պէտք է զրկուեմ . . . .
Թախծութիւն, այո, ունի իւրեան տեղ։
Այլ այժմ, հեռու սրտի տոչորմունք։

Տաճատ։

Հովանութեան տակ ձերայն մեծութեան՝
Պատրաստենք և մենք մոռանալ նորան;
Որի պատճառաւ սիրոյն՝ բազմածէք
Գահի վերայ։

Երուանդ։

Դու ուղիղն ասացիր.
Ժողովրդական, նորա, ձեր սիրոյն։—
Եւ ձեզ յայտնումեմ, որ ես առնումեմ
Զօրաց գլխաւոր—սպարապետութիւն։
Մեր պատերազմներ նշանակութիւն
Պաշտպանողական կ՚ունենան, ոչ թէ—
Յարձակողական։ Մենք յարգումենք ես
Անկախութիւն ուրիշի. մենք միայն
Հայոց Մեծացը սահման կ՚ամփոփենք։

Որահատ։

Ուրեմն կեցցէ՛ք դուք—հայրենեաց համար։

Երուանդ։

Այժմ դէպ ՚ի քեզ մեր սիրելի ժառանգ,—
Յանկած Արտաշէս, չէ այդ քո տեղը։
Փութացիր գալ մօտս, տես իմ աջ ձեռըս

Քո պահպանիչնէ մշտնջենաւոր։
Նստիր աթոռիդ վերայ, մինչ հասակդ
Փոխել քեզ կ'թողնի ինձ—խնամակալիդ։

Արտաշէս։

Ձեզնից շնորհակալ եմ ես, թագաւոր։
Ինձ այս տեղ լաւ է. բայց սակայն ձեր մէջ
Աւելորդ միայն երևելու եմ։

Ներգիհաց։

Ի զուր կարծումես, ի զուր, որդեակ իմ։—

Արտաշէս։

Ո՛չ. ես լաւ տեղնեմ ընտրել, թագուհի։
Նայէ՛ք, կայնածեմ, տակաւին տեղս
Չ'են հոգնել։—

Երուանդ։

Ժառանգ, ցանկութիւնըս է
Գալ մօտըս, և դու՝ հօրըդ հրամանքը
Պարտ ես կատարել անհակառ, իսկոյն։

Արտաշէս։

Հօրըս հրամմ՜նքը. արքայ, ներեցէ՛ք,
Չ'ունիմ ես հայրը, ճշմարիտ ասեմ,
Հօրու ունենալ չ'կամիմ։

Երուանդ։

Հօրո՞ւ
Չ'եմ ես քո, այլ հայր։ Քո խոսակցութիւն
Ուղղէ՛ր. քեզ Հայոց Մեծաց թագաւոր
Կրկին կ'հրամայէ գալ—բարեհաճել
Հնազանդուել։—



Արտաշէս։

Եթէ իրաւունք ունիք
Ինձնից պահանջել. . . . ես . . . . ես . . . .
(Մտածնում է)։

Սմբատ։

Ո՞վ արքայ,
Ինչո՞ւ այդպէս խիստ և տաժանելի
Երեխայի հետ վարւումես։ Ինչո՞ւ
Չ'ես թողնում անել սեպհական սրտի
Ցանկացածին պէս. մարդկային չէ՛ գործդ։

Երուանդ։

Սմբա՛տ, Սմբա՛տ, ինձ—դու մոռանումես։
Իմացի՛ր՝ որ ես նստած գահի վերայ,
Համուր ընտրութեամբ՝ Ամենայն Հայոց,
Կոչվումեմ, արքայ։

Սմբատ։

Չէ. չեմ մոռացել,
Գիտեմ, լաւ գիտեմ, մոռանալու չեմ,
Որ առանց իմոյ և թագադրութեան
Դու գահ հայրենեաց և Արշակունեաց,
Նստեցիր ինքդ.—ինքնարքայես դու։

Երուանդ։

Մո՛ւնջ, լռի՛ր, մինչդեռ ցասումս վրդովէ՛լ
Չէ ինձ։ Խնայի՛ր դու, Սմբատ, քո կեանքդ
Քո տոհմիդ համար։—

Սմբատ (Մեկուսի)։

Ո՞վ—սէր հայրենեաց, պիտոյք իմ տոհմիս,

Դուք հարկադրումէք համբերել օձին։
Կ՚համբերեմ, այո, թող նա կատաղի՝
Եւ բոլորեցունց դրդրուի։

**Տաճատ** (Կամաց)։

Խնդրեմ,
Սմբատ, հանդարտուիր. մտնելով անձդ,
Կարողես ազգդ դու կորուսանել.
Որին դու արդէն կեանքդ նուիրելես,
Եւ զօրութիւնդ։—

**Սմբատ** (Կամաց)։

Ուղիղէք ասում։

**Երուանդ։**

՚Ի պատիւ գահի վերայ բազմելոյ,
Մենք կամենումենք, ազնիւ օգնականք,
Եւ ձեզ բարձրացնել մի աստիճանով։
Սկսումեմ, ուրեմն, քեզնից՝ Առաջին
Նախարար, անցեալ սպարապետ զօրաց,
Այր Բագրատունի։

**Սմբատ** (Մեկուսի)։

Մի խռովիր սիրտս։
(Մօտենումէ գահին ծունկն դնելով)։

**Երուանդ։**

Հաստատումեմ քեզ ասպետութեանդ մէջ։
Օղ մի ականջիդ, և կարմիր կօշիկ
Մի ոտի վերայ, ես թոյլեմ տալիս,
Հագնել։ Տալիսեմ նոյնպէս իրաւունք՝
Ոսկեայ գդալով, պատառաքաղով



Ուտել հաց. ոսկեայ և բաժակներով
Ըմպել, կոնծել։

**Սմբատ** (Համբուրումէ արքայի ոտը)։

Թո՜ղ անմահ աստուածներ
Կեանքդ լայնացնեն, բազուկդ զօրացնեն,
Տան ձեզ ոյժը մեր պահելու աշխարհ։
Այսքան և եթ։
(Գնումէ իւր տեղը)։
Ի՜նչ ստրկութիւնէ,
Ոտերի տակը սպանողի ընկնել,
Եւ ընդդէմ կամաց, եղո՜ւկ, թաւալել։

**Երուանդ։**

Դէպ ՚ի քեզ—Արգամ, իշխան վիշապանց,
Դու տէր Մուրացան, ուրախեմ անչափ,
Կատարել այսօր իմ խոստացածըս.
Երկրորդական գահ քեզ պարգեւումեմ։
Օղեր ականջացդ, և կարմիր կօշիկ
Մի ոտի վերայ, կարես ագանիլ։
Կալուածքդ Հայկական թագաւորներից
Շնորհած քո ցեղին, ես հաստատումեմ՝
Ունենալ։

**Արգամ** (Գահի մօտ ծնկած)։

Այս տեղ, ես հրապարակաւ,
Նուաստութիւնը մատուցանումեմ
Բացերևակի ձերում մեծութեան։
Մի և նոյն ժամին երդուումեմ մաքուր
Անուամբ աստուածոց և իմ ցեղապետ
Աշդահակի, որ մինչև ՚ի մահըս

Ես այս բազկովըս—գահդ կ'պահպանեմ:

(Համբուրում է ոտը և գնում իւր տեղ):

**Երուանդ:**

Սիրելի՛ Երուազ,—եղբայր ծընընդեան:

(Մօտենում է Երուազ գահին, ծունկն դնելով):

Ա՜—քրմապետի հագելես արդէն
Զգեստ. այո, և մեր ցանկութիւնն է այդ:
Այդ ծառայութեան մէջ քեզ կարգումեմ:
Բոլոր կռքերը, նրանց հարստութիւն՝
Յանձնումեմ քեզ, և նշանակում եմ—
Հինգ հարիւր—զօրքը քրմերի երկրից
Պահապան քեզ: Դու բնակուիր Աշտիշատ,
Մինչև նոր քաղաք քո համար շինեմ:

**Երուազ:**

Այն երախտիքը եղբայր—թագաւո՛ր,
Հաւատարմութիւն, որոց անաչառ
Զգումեմ դէպ 'ի գահդ, մարդկային լեզուով,
Ո՛չ, արտայայտել անկարելի է.
Թո՛ղ այս համբոյրը ոտիդ՝ սակաւ ինչ
Բացայայտէ.—

(Համբուրում է ոտը, և վեր է կենում):

**Ներգիհաւ:**

Ո՜—քաղցր է քո բարբառ.
Որդեա՛կ իմ—Երուազ, և մեծ քրմապետ,
Յուսով եմ՝ որ դու օրինակ կ'առնես
Քո նախընթացըն քրմապետներից:
Արամանեակը և Վահունիքը,



Եւ սոսանուէր Անուշաւանը,
Իւրեանց գեղեցիկ, ծառայութեամբըն—
Աննըման նայիր, չի խաւարացնեն
Քեզ:

**Երուազ:**

Ես կ'աշխատեմ, կ'ջանամ, թագուհի,
Երբէ.ք, ո՛չ մի խօսքը ձեր չի մոռանալ:

(Գնում է իւր տեղ):

**Երուանդ:**

Այժմ դէպ 'ի ձեզ, իմ նախարարներ.
Ամբա՛կ, յանձնումեմ քեզ արևելեան
Զօրք: Թող եմ տալիս քեզ ստանալ անվախ
Մուտք կալուածների Աղձնեաց աշխարհի:
Տո՛ւր, հաստատումեմ ծառայութեանդ մէջ.—
Մեր պալատների լինել քեզ իշխան:
Ձեզ—Տաճատ, Հրահատ, ես հրամայումեմ,
Իշխել ձեր նախնեաց Տուրուբերանի
Գաւառների վրայ, աւելացնելով
Դալար, Աղմունիք և գաւառները:
Իսկ ինքեանքդ մնացէք ինձ մօտ պալատում:

**Ամբակ** (Ծնկած գահի մօտ):

Մեծ է շնորհդ, մեծ է բարերարութիւնդ:

(Համբուրում է ոտը և կայնում է իւր տեղ):

**Տուր** (Ծնկած):

Յանձնումեմ անձըս ձեր մեծութեանը.
Ստրուկեմ ձեր, բնաւի՜ն:

(Համբուրում է ոտը, և գնում է իւր տեղ):

**Հրահատ** (ծնկած)։

Զան ՚ի գործ կ՚դնեմ
Լինել օգտաւէտ մեր ժողովրդեան։

**Տաճատ** (ծնկած)։

Նորա ամենայն հառաչանք ազդել,
Յայտնել ձեզ, քաջաղն—Թագաւոր Հայոց։
(Համբուրումն տալ, և կայ-
նումն իւրեանց տեղեր)։

**Երուանդ։**

Մօտեցիր Գիսակ, քեզ վերայ մեր յոյս։
(Գիսակ ծունկն անկանումէ
գահի առաջև)։

Սիրուն ժառանգին, մեր Արտաշէսին,
Նոյնպէս Վրոյրին, փոքրիկ Տիգրանին,
Խնամատարութեանդ յանձնումենք նոցա։
Պատժից չ՚ես պրծնիլ, եթէ նոցանից
Դու մի օր, մի ժամ բաժանուես, անտէր
Նոցա դու թողնես։ Եթէ կ՚կատարես
Պատուէրս իսկապէս, իմացիր, յայնժամ
Որ աշխատութեանդ և արթնութեանըդ
Վարձը կ՚ստանաս։ Ուրախէ՞ք, որդեակք։—

**Վրոյր։**

Այո՜, ուրախենք։

**Տիգրան։**

Բայց մեր ուսուցի՞չ...

**Երուանդ։**

Սմբա՛տ, ՚ի հարկէ, հանապազօրէն
Ձեզ հետ կը լինի, նորան յանձնուածէք։



**Գիսակ։**

Ուրախութեանըս և զուարճութեանս՝
Չ՚գիտեմ սահման։ Ես ընդունումեմ
Իմ ծառայութիւն։ Մէջքըս, բազուկըս
Պարիսպ կ՚դարձնեմ մեծազներին։
Եթէ բարձրացնել մինը յանդգնի
Նոցա վերայ իւր գարշելի ձեռը,
Սուր սըլաքները—կըթափեմ, և անձս,
Ինձ հաւատացէք, կ՚բերեմ զոհ նոցա։—

**Երուանդ** (Մեկուսի)։

Ինչպէս սխալուեցայ յանձնելով սորան . . . .
(Գիսակ համբուրումէ տալ,
և գնումէ իւր տեղ)։

Նախարարնե՛ր. Տո՛ւր, գովելի Ամբակ,
՚Ի պատիւ մերոյ թագաւորութեան,
Զօրականներին դուք պարգևեցէք
Դրամներ։ Դուք Տաճատ, Հրահատ միւսներին,
Նոյնպէս Արգամի և առոյգներին՝
Կ՚բաժանէք դրամներ առատ ձեռքերով։

**Զօրականք։**

Կեցցէ՜, կեցցէ՜, կեցցէ՜։
(Պալատի սենեակներից լսումէ
նուագածութիւն)։

**Երուանդ։**

Այսպէս տօնելով ուրեմն մենք այսօր,
Խնջոյք ձեզ համար—մեծ պատրաստեցինք։
Բարեհաճեցէք ամենքըդ լինել

Իսկ հաղորդակից մեր խրախճանութեան։—
Դուք ներկայացէք, Թագուհի, անձամբ
Նրանց ոգի տալով։ Հետդ հրաւիրեցէք։

(Գնում են բոլորեքեանք զանազան կողմից բացած դուռները սենեակների)։

Թագաւորես դու վերջապէս, Նրուանդ։
Վերջապէս հասար քո նպատակիդ։
Ոչի՛նչ արգելքը չ՚կայ այսուհետև։
Եւ խաղաղ, անդող կարողեմ ցածգալ
Գահից... և դարձեալ... գնալ... բազմել... ՚ի... գահ...
Արգե՜լք, խէ՞թ. . . . Ինչպէ՜ս. տեսնումեմ ընդդէմ
Սմբատ սըրերով ընկնում է վերաս,
Արտաշէս, Վրոյր բռնումեն ոտերս,
Փոքրիկ Տիգրանը վիզըս կախուած,
Նետումեն Հրահատ, Տաճատ, անխրա՜ւք.
Հեռո՜ւ ինձանից, ՚ի բաց այս գահից,
Թողեցէք բազմիլ սեպհական իմ գահս։

(Հանում է Թուրը)։

Թո՛յն ձեզ, ո՜վ—մահ ձեզ, հակառակորդնե՜ր։
Թողէ՛ք, անիծեա՜լք, ինձնից հեռացէ՛ք։—
Ա՜. . . ընդ միջումե՞ք . . . բռնումե՞ք ոտերըս . . .
Կապումե՞ք ձեռքերս . . . ո՜վ—գոլորումե՞ք . . .

(Ընկնում է)։

Ո՞ւր եմ ես. ինչո՞ւ անկածեմ գահի
Բազրոնների վրայ. քընածեմ արդեօ՞ք։—

(Վեր է կենում)։

Միթէ՞ ոյժ չունիմ նստել իմ աթոռ . . .
Հասկացա՜յ։ Նստել անկարելի է,



Մինչ չ՚անցուցանեմ սուր Սանատրուկի
Որդիքը։ Կ՚սպանեմ և կ՚կոտորեմ
Սմբատին. կ՚կախեմ Հրահատին, նոյնպէս
Կ՚ջնջեմ Տաճատին, և հանգստութեան
Ես այն ժամանակ կարողեմ տիրել։
Մաժէ՜ժ, է՛յ—Մաժէ՜ժ, վազէ՛ր.

Մտնում է ՄԱԺԷԺ

Ինձ լսիր։

### Մաժէժ։

Տէր իմ, Թագաւոր, այս տեղ եմ ձեզ հետ։
Ինչո՞ւ այլայլած, դուք վրդովածէ՞ք։
Հրաման ինձ տուէք, ձեր հաւատարիմ
Կայնած սպասարեմ։

### Նրուանդ։

Մտի՛ր խնջոյք
Հանդարտ, և այնպէս՝ որ ուշ ոչ ոքի
Չ՚դարձնես վերադ. կամաց, մօտեցի՛ր
Տուրին, նորան դու ականջին կ՚ասես՝
Թէ քեզ մեծ արքայն հրամանէ տալիս—
Գալ, ցանկանում է քեզ ասել մի բան։
Հապա՜, ուղարկի՛ր դու շուտով նորան,
Իսկ ինքդ այնտեղ կ՚մնաս անպատճառ։

### Մաժէժ։

Կ՚կատարեմ հրամանքդ, որպէս խրատեցիք։

(Գնում է)։

### Նրուանդ։

Շտապի՛ր։—Մի քայլ ևս, և այն ժամանակ
Բոլոր Հայաստան կ՚լինի քո ձեռքում։

Մի քայլ ես, և չ՚ես ունենալ խափան։
Երկբայութիւնից և կասկածանքից
Կ՚ազատուես, Երուանդ, և չ՚ես կորցնելու
Սէր ժողովուրդի։

(Նուագածութիւն, և պար նաժիշտների)։

Անդ, սրահում պարից,
Ամէն սենեակում՝ և խրախութիւնից
Զզուելէն արդէն, սակայն դու—արքայ,
Վայրկեան—անգործ կարող չ՚ես վայելել։
Ա՜հ, ի՞նչ անեմ, ի՞նչ հոգըս ես տանեմ . . .
Արդեօք ամրացնե՞լ և շինել պարիսպ.
Բոլոր մտերիմ և անձնանուէր
Նախարարներին կոտորե՞լ, ջնջե՞լ,
Կոտորողներին—և անգըթաբար
Տանջե՞լ առաջև աչաց ամբոխի.—
Ոչինչ չի՛ մնացել։ Ինձ չե՞ն ճանաչում,
Ո՞վ, չ՚են ճանաչում հրաշալի ձիրըս—
Ցանցանքը գործել, երբ ինձ խթումեն,
Կամ հարկադրումեն։ Երկիր Արամայ,
Մի՛ մի րոպէում, ահով դողացնել
Կարողեմ։ Այո՜, ինձ պէտքէ միայն
Տիրել ամենու հարստութիւնը,
Եւ ապա գտնել, շահել, և ստանալ
Այն սէրը,—որը պատըսպարանէ
Երկարկեցութեան, գահի և բաղդի։

Մտնում է ՏՈՒՐ։

Արագընթաց Տուր, արդէն եկա՞ր դու։

**Տուր** (ընկնելով ոտքն)։

Ահա՛, տէր արքայ, ընկածեմ ոտիդ։



**Երուանդ։**

Տո՛ւր, ուշք պարգևիր։ Տեսնումե՞ս դու ինձ։

**Տուր։**

Երբ ակն արեգի,—ակն Արամազդի,
Փայլահեղ հերոսն, կէս օրին, հզօր
Իւր ասպարեզը նա ընթանումէ,
Անապատները բեղմաւորելով,
Հարաժամ աններհ, երկրի պաշտպանողն,—
Զգումէ իւր փայլը աչացս վերայ,
Նայել համարեայ դժուարէ նորան . . . .
Բայց ձեր, քաջածին—աստուածազաւակ
Դիմոյն շողշողիւն և պայծառութիւն
Յանդգնել բնաւին տակաւ տակաւ ինձ
Ներում չ՚են նայել։

**Երուանդ։**

Թագըս և իմ գահ
Դու նկատումե՞ս։

**Տուր։**

Սեպհական աչօք,
Այլ ոչ ուրիշից փոխառած, կամ գնած,
Տեսնումեմ գլխիդ ակնակուռ Թագը,
Տեսնումեմ նոյնպէս գոհարաշար գահ։

**Երուանդ։**

Եւ ո՞վ է կայնած, գիտես դու արդեօք։

**Տուր։**

Թագաւոր Հայոց, որոյ ես համար
Պատրաստեմ մեռնել ուրախ ժպտով։

**Երուանդ։**

Մահ հարկաւոր չէ, այլ օգնութիւնըդ։

**Տուր** (Վեր է կենում)։

Տէր, մի՛ յապաղէք, ինձ հրամայեցէք,
Պատերազմ բանալ լեառների հետ, շուտ
Ինձ ուղարկեցէք, թէ և դուք ասէք
Վեր 'ի վայր բերել մեր բոլոր աշխարհ,
Հակառակ մի խօսք ինձնից չէք լսիլ։

**Երուանդ։**

Դու այժմ իշխանես իմ պալատներին։

**Տուր։**

Այո՛, թագաւոր, մինչ ձեր մեծութիւն
Ինձ աքսորելու չ'ունի ցանկութիւն

**Երուանդ։**

Առաջարկումեմ աւելի հեշտ բան.
Ջնջէին օրինակ՝—առօրէական
Կասկածանքներից, մտածողութեանց
Ազատել արքայդ։ Տանջումեն հուժկու,
Եւ չարչարումեն ինձ ես նեղութիւն,
Վրդովմունք, ձանձրոյթ, հանգիստ չեն տալի։

**Տուր։**

Արքայ, յայտնեցէք պարզապէս ձեր միտք։
Պատրաստութիւնըս կրկնումեմ նորից.
Եթէ արիւնը մէկի, պահանջուի
Հրաման տուէք և ես պատրաստեմ իսկոյն։

**Երուանդ։**

Ի՞նչ հնարքով։



**Տուր։**

Թէ և սեպհական արեամբս։

**Երուանդ։**

Ո՛չ. ոչ սեպհական, այլ երեխայոց։

**Տուր։**

Հնազանդեմ։

**Երուանդ։**

Ուրեմն, իմացիր դու, Տուր,
Որ երկրորդական գահըս Արգամին
Բաշխելով, նրանից և հետ առնելով,
Քեզ—ազատօղին կեանքիս կ'պարգեւեմ։
Զգուշացիր միայն յանդգնել երբէք
Մըտերիմներիդ այդ գործը յանձնել։
Դու ինքդ անձամբ պէտքէ կատարես,
Որ կարծիք ո՛չ ոք վերադ չունենայ։
Բայց չէ. մենակ դու՝ դժուար կարողես
Ստուգիւ կատարել, դու չ'ես բաւական.
Եթէ գտնէիր մէկին—այնպիսին՝ . . . .

**Տուր։**

Ունիմ ես ընկեր. նա Առաւեննեանց
Ամբակէ, որի ծննդեան ժամին,
Ասումեն՝ իբր թէ գէշ ծիծմայրը
Նորա իսկ սրտից գթութեան ջըղեր
Հանեց։ Երբ նորան ասան բարեկամք.
«Ամբա՛կ, ամուսին առ»—նա գարշելի
Ծիծաղ երեսին՝ պատասխան տուեց.
«Ծնեմ և ես մարդիկ—ատեղներին»,
Ուստի մնաց անձեռ, ամուրի փըծուն։

Ուրիշըն լալիս՝—ուրախութիւնից
Տեղէք գտանել կարող չէ անգամ։
Անբաղդութիւնը մեկի—տեսնելիս,
Ամբակը հրաման տալիսէ իսկոյն
Ողջ—բոլոր օրեր ածել նուագներ։
Ասումեն սաղէս՝ թէ այդ ծիծմայրը,
Աչերից նորա, որ չ՚գայ արցունք,
Փաթանք եղջիւրի ճմլեց սաստկագոյն.
Բիբն վնասեցաւ, և պատճառն դարաւ
Նորա չեղութեան։

**Երուանդ։**

Անգին որակնե՛ր.
Հեռուից միայն թոյլ միտսեն բերում
Իմ տըմարդութեան յատկութիւնները։
Այսպէս ուրեմըն՝ գիշեր ժամանակ,
Դուք ուշադրութեամբ, այլեմն զգուշութեամբ
Սենեակ Արշէսի կամաց կըմնէք։
Կանխապէս առաջ իմացէք, արդեօք—
Գայլ Սմբատը և առիւծ Գիսակը—
Նրանց պահպանողներ, խոր քնոյ գրկում—
Անկածեն թէ չէ՞։ Ցետ՝ անսպասելի
Երեխայոց վրայ դուք յարձակուեցէք,
Եւ անխնայաբար նոցա գլուխները
Թրցրեցէք՝ ինչպէս հաւերի կ՚թրցնեն։
Վա՛յ ձեզ, եթ՝ մինը ազատուի նրանցից,
Վա՛յ ձեզ, մանուկներ տեսնելիս, շարժուի
Ձեր գութը։

**Տուր։**

Ինձ լաւ ճանաչումեմ ես։



Առաւելագոյն գիտեմ Ամբակին.
Ձեր առաջարկած գործերում՝ միմեանց
Գերազանցումենք։—Մի ծառից, մի օր,
Մի քամուց ընկած՝ դառն պտուղներենք
Մենք երկուքեանքըս։ Չի կարող բերել
Մեզ կարեկցութիւն կամ շարժել ՚ի գութ,
Ոչինչ և ոչինչ անարգ աշխարհում։

**Երուանդ։**

Ձեզեմ որոնում։—Վրաղեր, շտապեցէք
Մինչ ժամանակը ներումէ։ Պահիր
Անջինջ ասածըս մտքումդ։

**Տուր։**

Որպէս ձեզ,
Քաջազն արքայ։

(Գնումէ)։

**Երուանդ։**

Ո՜վ—եթէ յաջողուի.
Մեռնեն Արտաշէս, Տիգրան և Վրոյր,
Իմ չարչարանաց վերջը կըհասնի։
Դիտաւորութեանց անջատուելու չ՚եմ.
Կարողէ քեզ մօտ գալ և վեհութիւն,
Չարագործութեանց հետ եթէ անես
Եւ բարիութիւն։ Բայց չէ՛, չէ՛ . . . երբէք.
Բարիութեանը հասկացող չ՚կայ.
Չէ՜. արենարբու ծնեցին ինձ, այո՜,
Եւ արենարբու միշտ կըմնամ, մինչև
Չհաստատեմ գահ, մինչ չի կործանեմ
Բոլոր չարախորհ ընդդիմակներիս։

(Սկսուումէ նուագածութիւն և պար նաժիշտներէ)։

Մտնում է ԲԵՐԳԻԱՀ։

Թագուհի, ինչո՞ւ այդպէս շուտ դարձար
Խնջոյքից, ասա, բան պատահեցա՞ւ,
Թէ պակասութիւն մեր խրախճանք ցոյց տուաւ։

**Բերգիահ։**

Ո՛չ, արքայ, եկայ ասեմ քեզ՝ որ քո
Բացակայութիւն խիստ նշմարւում է։
Ներկայանալ քեզ պիտոյ է անձամբ,
Այդով նոցանից կըփարես կասկած։

**Երուանդ։**

Պատրաստ եմ լսել քո խորհրդներին,
Որոնք պարզերես բաղդաւորացնել
Ինձ աշխատում են։ Թագուհի, գընանք,
Ինձ զուարճանալ յարմար — պատշաճ է։

**Բերգիահ։**

Միթէ՞ և այժմ դժուարանում ես
Հասկանալ գաղտնի գաղափարներըս։
Տեսնում ե՞ս, Երուանդ, ահա հրաշալի
Նոցա հետևանք.— դու շրջապատած
Բաղդաւորութեամբ։

**Երուանդ։**

Կին մեր կուրութիւն
Զապեց, բանալով աչեր՝ նա ցոյց տուեց
Եւ ուրախութեան ասպարէզ, ուրեմն՝
Դու բարեհաճիր ընթանալ, բանալ
Բաղդաւոր որդւոյդ Երուանդի համար՝
Թագաւորութեան վսեմական պատրանք։

(Գնում են սենեակներ. նուագածութիւն և փողերի ձայն 'ի միասին)։

~~~~~~~~



## ՏԵՍԱՐԱՆ 3.

Ննջարան արքայադստեր մի և նոյն արքունիքում։

~~~~

Երկար տախտի վերայ քնած են ՎՐՈՅՐ և ՏԻԳՐԱՆ։

**Արտաշէս** (Նստած է տախտի վերջում, մագաղաթներից տետրեակ ձեռքին)։

Գիշերի կէսն է, քնած են ամենքը.
Քնած են քաղցրութեամբ կրտսեր եղբայրներս։
Սակայն, դու խեղճի՛կ, զուրկ ես բնաւ քնից։
Ինչո՞ւ գնաց Սմբատ, թողեց ինձ միայնակ։
Ա՜հ եթէ Գիսակ գար դարձեալ մեզ մօտ,
Մինչ 'ի լուսանալ՝ գոնէ կ'խօսէի։
Սկսում եմ տետրեակ քննել կամ կարդալ,
Ոչ խելքս գիտէ, աչերս տեսանել՝
Զունին զօրութիւն. տխուր է՜ դրութիւնս . . . .
Տխուր է սաստիկ, երբ ես տխրուած եմ,
Գիշերը դարձնել ցերեկ, մնալ անքուն,—
Ցերեկով քնել։

Մտնում են ՍՄԲԱՏ և ԳԻՍԱԿ։

Ահա և նոքա։
Ուրախ եմ սաստիկ և հանգստացայ։

(Գնում է նոցա առաջ)։

**Սմբատ։**

Արտաշէս, ինչո՞ւ քնած չ'ես մինչև այժմ։
Նստած էի ես սենեակ—Գիսակի,
Այս տեղից գնալով։ Կամեցայ կրկին,

Գնալից առաջ դէպ 'ի տուն իմ, տեսնել
Ձեզ, իմ որդեգիրք—ծիրանադիտակք:
Դարձեալ դու տխրած, տրտմած, այլայլած:
Դու դողդողումե՞ս, ասա, Արտաշէս,
Հիւանդ ես արդեօ՞ք, ինչի՞ ես ծածկում,
Աստուածոց կամի՞ս ուղարկեմ յաշտել:

## Արտաշէս:

Ոչի՜նչ. հիւանդ չեմ, այլ հօրս ապաժամ
Մահն սաստիկ ինձ տանջումէ: Գիշեր
Ժամանակին՝ երբ անկողին մըտած
Ննջել ուզումեմ, յանկարծ զգումեմ ես,
Ինձ ձեռէ տալիս մինը—ծերունին,
Որը անդադար խափանումէ քունս,
Ձայնելով. «Արթուն եղի՛ր, քեզ պահի՛ր,
Բան չի պատահի»:

## Սմբատ:

Ո՜վ—զարմանալի
Երեխայ: Սրտի զգացմունքը նորա՝
Մեզանից առաջ յայտնեց զգուշութիւն:
Գիսա՛կ, կրկնումեմ քեզ իմ աղաչանքս.—
Նայել ուժգնութեամբ և չի հեռանալ:
Սակայն Արտաշէս, տենչալիտակ իմ,
Ոչինչի վերայ ջանայ չ՚մտածել:
Բորբոքածէ քո երեւակութիւն,
Պիտոյ չէ տրտմիլ հօրդ մահուան վրայ:
Արքայն Երուանդը դէպ 'ի ձեզ անփոխ
Մնումէ. գեղեցիկ ձեզ հետ վարվումէ:
Այս գիշեր Գիսակ կ՚քնի սենեակում



Ձեզ հետ միասին, որ հանգստանաս:
Ողջ լե՛ր, Արտաշէս, և միշտ իմացիր,
Որ մենք այս տեղ ենք, բան պատահելիս՝
Գոչի՛ր մեզ իսկոյն: Մնաս խաղաղութեամբ:

## Գիսակ:

Ուղղևորելով Սմբատին, հապճեպ
Կ՚դառնամ և կը քնամ քեզ հետ մինչ 'ի լոյս:

## Սմբատ:

Մնացայ ասել քեզ, Գիսակ, նոր լուր.
Գնանք առաջ սենեակդ, անդանոր կ՚բացեմ:
(Գնումեն):

## Արտաշէս:

Եթէ կարելի ես չը մտածել,
Լինել հանդարտ: Ո՜վ դի՛ք իմ, դի՛ք. սաստիկ
Խռոված՝ սիրտըս: Եղբա՛յրք, վերկացէ՛ք,
Վրոյր, Տիգրանիկ, զարթնեցէ՛ք, անդինք:
Երբէք անձկութիւն այսքան չ՚էր տանջում,
Որքան այս գիշեր, նա ինձ խեղդումէ:
Վրո՛յր, Տիգրա՛ն:

## Վրոյր

Ինչո՞ւ ինձ զարթացնումես. ի՞նչես ուզում ինձանից:

## Տիգրան:

Թո՛ղ ինձ, քունըս տանումէ, քննել եմ ուզում....
. . Արտաշէ՛ս, թող ինձ:

## Արտաշէս:

Խաղանք, ծիծաղենք մինչ 'ի լոյս. ինձ չէ՛ք կամե-

նում համբուրիլ։ Վրո՛յր, չ՚ես ցանկանում. դու Տիգրա՛ն, ինձ չ՚ես—սիրում։

(Վրոյր և Տիգրան անկողնից վերին թաչում, և դրկելով Արտաշեսին՝ միմյանց համբուրումն)։

Հանդեպակաց դռներից մտնումն ՏՈՒՐ և ԱՄԲԱԿ, փոխած շորերով գաղտուկ։

**Ամբակ** (կամաց)։

Կէս գիշերից անցէ. երևի արքունիքում ամենքը քնած են։

**Տուր** (նոյնպէս)։

Ամբա՛կ, ես որդիք ունիմ, դառնանք յետ։ Նայի՛ր անմեղներին։

**Ամբակ** (նոյնպէս)։

Սըս. եթէ կեանքդ զզուացրել է քեզ, կարողես դառնալ յետ։

**Տուր** (կամաց)։

Ա՜հ, Ամբակ, գթացիր, մանուկներին խղճացի՛ր։

**Ամբակ**։

Սըս, սըս. նոքա համբուրուումն, զարթունեն, շուտով մօտեցի՛ր։

(Ընկնումէ խեթանով. և վիրաւորումէ Վրոյրին)։

**Տուր**։

Ահէ չի հետևել քեզ։

(Ընկնումէ դանակով և խոցումէ Տիգրանին)։



**Արտաշէս** (Աղաղակելով)։

Սպանողնե՛ր, անգութնե՛ր.... Սմբա՛տ, Գիսա՛կ....

(Տուրը և Ամբակը սկսումեն խեղդել երեխայոց։ Արտաշէսը փաղչումէ դէպ ՚ի եղբօրց, և խեղձն բամակ)։

Հրաշա՛տ, Տաճա՛տ, եկէ՛ք, ո՛վ—Գիսա՛կ, Գիսա՛կ...

Մտնումէ ԳԻՍԱԿ թրով. Արտաշէս ընկնումէ նորա գիրկը։

Ազատի՛ր, ազատի՛ր, սպանեցին Վրոյրին, խեղդեցին Տիգրանին։

(Տուր և Ամբակ փախչումեն)։

**Գիսակ**։

Աւագակնե՛ր . . . ո՛վ դիցուհիք։ Սմբա՛տ . . .

Մտնումէ ՍՄԲԱՏ։

**Սմբատ**։

Աղաղա՛կ, շփոթութի՛ւն... սպանութի՛ւն... Վրո՛յր, փոքրիկ—Տիգրան, ո՛վ, ո՛վ—Արտաշէ՛սը . . .

**Գիսակ**։

Ձեռ.քումնէ։

**Սմբատ**։

Ձերծուի՛ր, փախի՛ր . . . Հերովդեսը գալիսէ . . . Տա՛ր, տա՛ր այստեղից։

Փախչումեն։

Մտնումեն ԵՐՈՒԱՆԴ տանից քղամիդի և սաղաւարտի, և միա կողմից ՏԱՃԱՏ և ՀՐԱՀԱՏ զինուորներով, ջրագները ձեռ.քերին, և ՄԱԺԻԺ։

**Երուանդ**։

Այս ինչ ձայներ են, ինչ ճիչ բարձրացին։ Որդւոցս դիակնե՛ր . . . Տաճա՛տ, էի՛—Հրահա՛տ,

Դո՛ւք ինձ մերձեցէ՛ք, ասէ՛ք, ուրէ՞ նա,
Գիսակը քնած է երևի . . . գաղա՜ն:
Ո՜վ—դուք մարդակերք, գիտեմ ձեր միտքը,
Սպանելով որդւոց խեղճ Սանատրուկի,
Իմ խաղաղասէր թագաւորութիւնս
Կամեցաք սասանել, անպիտաններ:
Ձեր գործն է այս, ձեր նախարարների:—
Որդիքըս մեռա՜ն, նոքա սպանուեցա՜ն.
Ո՛վ աւա՛ղ, աւա՜ղ—իմ սիրուն որդիք:

(Լացէ լինում):

Հրահատ և Տաճատ, ընկեցէ՛ք շտապով
Դուք նրանց քամակից—դաւաճանողաց:
Բռնեցէ՛ք նոցա, ոչինչ չ՚հարցնելով,
Կողպեցէ՛ք բերան, և այնտեղ ՚ի սուր
Սատակ մատնեցէ՛ք: Կատարեցէ՛ք հրամանս:

(Գնումեն նախարարներ զինւորներով):

Խարդաւանք հեռո՜ւ. բաւէ ձևացնել
Սրտաբեկութիւն, երբ զուրկեմ նրանից:
Ազատեմ—ազատ, չ՞կան այսուհետև
Որդիք ժառանգիչք:—Ահա և Վրոյր.
Ահա՛ և Տիգրան. հապա Արտաշէս:

(Որոնումէ):

Արտաշէ՜ս, Արշէ՜ս . . . Ձերծեցին նորան:
Խա՜, խա՜, խա՜... ժամէ... կա՛ց, կուրծքըս ճնշուեց,
Արտաշէս ազա՜տ . . . վա՛յ ինձ. փախցրեցին.
Ցնորւումեմ, ցնորւում. . . . ո՛վ—սանդարամետ,
Դու Արտաշիսին կուլ տուր, կո՛ւլ իսկոյն:
Դրժո՜ղ եք. ո՛վ—բացի՛ր բերանդ, իջացի՛ր . . .
Սմբատը միայն, Սմբատ կարողէր



Ինձ այդ վտանգը պատրաստել, ո՛չ ոք
Աւելի: Մաժէ՜ժ, լսի՛ր ինձ, ո՞ւր ես.
Հրամայի՛ր շուտով պնդել Սմբատին,
Նոյնպէս Գիսակին—նրա փրկողներին:
Գնա՛ շուտով. այլ կա՛ց . . . դէպ Կապադովկիայ
Ուղարկի՛ր մարդիկ, շուտով գնա՛, շուտո՜վ:

(Գնումէ Մաժէժ):

Պրծա՜ւ. իմ համար չ՚կայ զմայլեցուցիչ:
Կ՚յարձակուի վերաս ազատուած ժառանգն,
Կը վիժի դահից, ստացած—արիւնով,
Որի համար ես զոհաբերեցի
Անմեղ արիւնը, իմ անդորրութիւն:
Ջէ՛, երբէ՛ք, մինչ ՚ի վերջին շունչըս իմ՝
Կ՚նստեմ, կըբազուիմ: Ո՜վ—կախարդ Սմբա՜տ,
Պատի՛ժ երկնքի, սրտիս վիրաւորիչ,
Դու Բագրատունի չարարմատ հրէա՛յ:
Խնայե՞լ քեզ, երբէ՛ք . . . և կորուսանել
Թագաւորութեանս զրուա՛գը . . . երբէ՛ք:
Կատաղութիւն մօտէ ինձ . . . կայնածէ
Արիւնս:—Անասուն Սմբատ, եթէ դու
Պատրաստումես իմ համար թշնամի,
Եթէ քո սէրըդ դէպ ՚ի հայրենիք՝
Խլել սպառնած մահից ստիպեց քեզ նորան,
Ուրեմն իմացի՛ր, չ՚ես ազատուելու
Դու իմ ձեռքիցըս . . . . Կործա՜ն քո տոհմին՝
Մա՜հ բոլորեցունց—դըղըդող դահիս:

(Գնումէ):

# ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

Սահման Պարսից. չոր. խրճիթն գեղջկական: Կայծակ, որոտմունք և անձրև:

Դուրս են գալի խրճիթից ՊԵՐՃ և ՈԳՈՒՀԻ:

**Ոգուհի:**

Քիթը ցոյց տալ անկարելի է: Այս ինչ ամառնէ. ամեն օր—անձրև, ցուրտ: Որսամունք կարողեն ուղ-խարներիս թափառել:

**Պերճ:**

Ասացի քեզ, ո՜—կին կարճամիտ, որ ուխտարներին պէտք—չ՛էր ուղարկել լեառը: Մեր խեղճ երեխայոց պահապանողը ո՞վ է. երկու օրէ, ոչ գնալ, ոչ գալ կարելի չէ:

**Ոգուհի:**

Փորձեցիր դու. գնացի՞ր, հետ դարձա՞ր, որ այդպէս կռկռումես փորի պէս, երբ սովութիւնը ամայեացնումէ նորան, և դատարկութիւն է տարածում:



**Պերճ** (Տնազ անելով):

Կռ-կր-ռու-մես, Վոհուկ, նրանց՝ հացի—տանողը ո՞վ է:

**Ոգուհի:**

Դու հոգս ես քաշում հացի վերայ աւելի, քան աւազակներին: Այսպիսի եղանակը նոցա համար պատեհ առիթ է ընկնել հօրանի վերայ, փախցնել դառներին:

**Պերճ:**

Հայ—հո՜ւչ. քո հանճոյքները նեղացնումեն ինձ: Ա՛ կին—թուլատարր, մտիր անդեռ, և ամփոփուիր. աղաւաղով գլուխս ցաւացնումես: Տեսնումես ինչ անձրևէ թափում մեր գլխին: Մթնանումէ, մօտէ գիշեր:

(Հեռուից ձայներ):

Ձայներ եմ լսում. հա՛յ, նայիր, նայի՛ր, ձիաւորներ գալիսեն, Ոգուհի:

**Ոգուհի:**

Նկկի—ամուսի՜ն, ասացի քեզ՝ աւազակներ սկսելուեն ձորում երթևեկ ունենալ:

**Պերճ:**

Հոգուդ մատաղ, ներէր ինձ. ձեզ միայն հանաքով կոչումեն երկայնամազ: Կանայք մեզանից գգաստեն խելքով, դու այդ հաստատեցիր, իմ սիրուն Ոգուհի, թէ և գեշես երևում: Վազէ՛ր իմ տափոտ անկողնակից, բեր շուտով նիզակս, աղեղն նետերով չ՛մոռանաս:

(Գնումէ Ոգուհի խրճիթ):

Պէտքէ նշմարել: Դէպ ՚ի մեզեն շտապում. . . Չէ, սոքա աւազակներ չ՛են, այս ձորով անցկենալ չ՛կա-

բելի նոցա. գլուխն, որ մօտիկ պահապանքեն դրած։ Ուղիղ կարծեցի, չեմ սխալւում. ահա՛ կանգնեցին, ձիուց ցած եկան։ Ո՞վ պէտքէ լինի . . . . անջատւեցաւ մինը նոցանից, վազումէ. երևի յառաջ սուրհանդակ ուղարկեցին։ Ձեռքըս կ'կտրեմ՝ եթէ մեծատուն կամ նախարար չլինի։ Գալիսէ, գալիսէ . . .

Մտնումէ ԳԻՍԱԿ։

Շնորհեցէք, պարոն, հրամայեցէք։ Բայց, ուղղւոր, գուցէ չփոթւելէք ճանապարհից, կամ եղանակը ձեզ, բարխոսն անծանօթ, բերեց իմ տուն։ Պատրաստեմ, ես և կինըս և որդիքս ձեր ծառաներեն։

## Գիսակ։

Արքայի հրամանք դէպ 'ի Պարսկաստան
Տանելով, Հայոց մեծ նախարարը
Շտապումէ հոգնած իւր ոսկորները
Ամփոփել փոքր ինչ, և մատաղահաս
Որդւոյն իւր՝ սաստիկ և ջաղը անձրևից
Թրջած՝ չորացնել, և հանգստացնել։
Արդեօք համաձայնեա դու այս գիշեր
Քօ այդ բացակայ խրճիթ նուիրել,
Եւ պատշաճաւոր ընդունել մարձեր։

## Պերճ։

Հիւրընկալութիւն սիրումեմ անչափ։
Վազեցէք յայտնել մեծ նախարարին,
Թէ իմ միայնիկ խրճիթ պատրաստէ,
Լինել նուարտան և նոցա համար։

(Գնումէ ԳԻՍԱԿ)։



Ոգուհի՛, այ—ոգուհի՛։

(Վազելով գալիսէ ՈԳՈՒՀԻ նիզակով, աղեղով, և կապարճով)։

Սխալւեցայ. 'ի զուր դու բերար զէնքս։ Կռւել չի գալի ոչ ոքի հետ այժմուս։ Փոխանակ աւազակների, մի մեծատուն գալիսէ մեզ մօտ։ Գնա, Ոգուհի, շտապիր պատրաստութիւն տեսնել, իսկ ինձ վայելէ նոցա առաջ երթալ, հանդիպել պանծալի հիւրերին։

(ՊԵՐՃԸ հեռանումէ, իսկ ՈԳՈՒՀԻ գնումէ խրճիթ. խաւարանումէ փոքր ինչ)։

Մտնումեն ԱՄԲԱԿ և ՏՈՒՐ զինւորականների զգեստով։

## Ամբակ։

Անցաւ արդէն քան հինգ օր, երբ մենք
Թափառիլ սկսանք տատանդ գոյակից։
Հալածուած՝ վանեալ պնդումեն մեր քայլ,
Եւ չ'ենք իմանում ուրանոր գիմենք։
Ինչո՞ւ դու, եղբայր, ինձ յափշեցուցիր.
Ինչո՞ւ մենք անձամբ իսկոյն ջրի մէջ
Գցեցինք։ Չ'ունենք իրաւունք հագնել
Շունչ քաշել։ Ուրէ՞ մեր վերջն, Տուր, ասա։
Խոստացաւ Արուանդ անթիւ պարգևներ,
Փոխանակ դոցա, ուղարկեց պնդել
Անշուշտ մեզ բռնել, կոտորել, մեռցնել։
Կարծես դժուարէր՝ եթէ մեր կողմից
Մենք սպանողներին—ուրիշ գտնէինք,
Որ երեխայոց—խեղճ՝՝ արիւնի մէջ
Թաթաւուց չ'անէինք ձեռքեր։

**Տուր։**

Այո.

Ես ինքըս այդ անել մտադիրէի,
Բայց ընդմիջացաւ Նրուանդը—արքայ։
Եթէ դուք ինքեանքդ կատարէք, առաց,
Ոչ ոք ձեզ վերայ կարծիք չէ կարող
Տանել. և երբ մենք սոյդ կատարեցինք,
Ինքըն առաջին—ժողովուրդի մէջ,
Լուսաւէ համբաւ շտապեց տարածել,
Թէ Տուր և Ամբակ սպանեցին տղայոց.
Այդու պատճառաւ սկսաւ հալածել
Մեզ, և այս դրութեան հասացրեց անմիտ։
Ինձ Գառնիկ գիւղում, իբր չքաւորին,
Պատմեցին մարդիկ. զայրացած արքայն
Մանաւազեանց և Առաւենեանց ցեղ
Մաննել հրամայեց 'ի մահ՝ սպանելու
Արքայորդւոց պատճառաւ։

**Ամբակ։**

Դրութիւն

Անտանելի։ Ա՛հ, մենք պէտքէ սպասենք
Այսօր չէ, այգուց մահուան ցասումը։
Մեր հացը ահա հատաւ, ի՞նչ անենք.
Կրտորի համար աղքատ քեզ կոչէր—
Այս տեղ, ուրանոր կ'ընակվին աղքատներ,
Ո՞վ—անհնարինէ. մնումէ գողութիւն։

**Տուր։**

Այլ եթէ բանէ՞ն։

**Ամբակ։**

Ոչի՛նչ չի մնացել։



'Ի ճահ սկսումէ մեռնմնալ դիշեր։
Այս ձորում կծածկուենք զաղտնապէս, յետոյ
Խաւար սքփումի, մառախուղ համնի,
Դուրս կգանք ձորից նոյնպէս գաղտնապէս,
Իսկոյն խրճիթի — այս բնակիչներին
Կոտորել սկսենք, յափշտակենք ամէն։

**Տուր։**

Միտքըդ գեղեցիկ. մօտիկէ սահման
Պարսից։ Կ'անցկենանք այնտեղ, ուր գուցէ
Գտանենք մի ճար վերջի նշյըներ
Յանցաւոր կենացս քարշել, և վարել
Արիւնաթաթաւ այս երկրի վերայ։

**Ամբակ։**

Մարդըս մի անգամ թափելով արիւն,
Ուրիշ յանցանքներ դիւրին է անում։
Թէպէտ և քնածեն խրճիթատէրներ,
Սակայն լաւ կլինի, փոքր ևս սպասել։
Թաքնուե՛նք, այս սեաւ քողի տակ լքենք։

(Գնումեն դէպ 'ի ձոր)։

Մտնումեն ՍՄԲԱՏ, ԱՐՏԱՇԷՍ, ԳԻՍԱԿ և ՊԵՐՃ։

**Պերճ։**

Այս տեղ, իմ հիւրեր, այստեղ հրամայէք։

**Արտաշէս։**

Յոգնեցայ. ցուրտէ։ Ժամէ ննջելու։

**Սմբատ։**

Գնանք այս վայրկենիս, իմ արքայազուն։
Մի օրից յետոյ Պարսկաստան կանցնենք։
Թէպէտ ուշացանք, այլ վախեր գընալ

Ուղիղ ճամբերով: Հեռատեսութիւն
Ստիպեց մեզ անշուշտ զգոյշ լինել: Գիսակ,
Մօտիկէ սահման, լոյսը բացվելիս
Ճանապարհ կ՚ընկնենք, պէտք չէ յապաղել:

**Գիսակ:**

Գիւղակում, արդեօք — պատրաստէ խրճիթ:

**Պերճ:**

Այո, պարոնայք, մտէք այս խրճիթ:
Իսկ ձիանց համար միամիտ եղէք,
Վայելուչ գարի, խոտ տուեցի նոցա:

**Ամբատ:**

Շնորհակալութեան վարձատուութիւն
Առ, գեղջուկ, և մեզ դու ուղևորիր:

(Տանում է Պերճ նոցա խրճիթ:
Խաւարանում է բոլորովին):

Վերադառնում է ՊԵՐՃ:

**Պերճ:**

Հասաւ գիշերը: Ոչինչ չի պահանջեցին, իսկոյն ընկան քուն. դադրելեն խեղճեր: Այս ինչ զարհուրելի խաւարէ. Թուղը անպեր երկնքից չեն հեռանում. անձրևը այնքան ջուրէ բերում, կարծես գետինը ծարաւէ: Բայց — միայն կինըս սպասումէ ինձ. ժամանակէ ընթրիք նուաճել մեզ և պինդ ստամոքսներ լցնելով, քաղցրեղէն մոռացնք տարածել յետոյ:

(Գնում է խրճիթ, և քամակից փակում է դուռը սողնակով: Հանգչում է ճրագը խրճիթում):



կամաց, կամաց, չորս կողմ նայելով, երևում են ՏՈՒՐ և ԱՄԲԱԿ:

**Ամբակ:**

Վնասէ ժամանակ մեր կորուսանել,
Երբ ինքն ըստ ինքեան գալիսէ նա ձեռք:
Քնոյ մէջ արդէն խրճիթատէրներ
Անկածեն: Ահա լոյս աշտանակի
Չի երևում, և ճրագը հանգչուածէ:
Հանիր Թուր, ընկեր, յանցաւոր եղբայր,
Վեր այս պատնէշից ցակ եկ դու գաւիթ:
Մինչ կռիւ նոցա հետ բաց արկանելով,
Նոցա զօրութիւն կ՚ածես քեզ վերայ,
Ես այս մեծ քարով կ՚ջարդեմ սողնակը,
Եւ միայնգամայն տունը կ՚աւերենք:
Երբ առհասարակ ձեռք չի ճեղքուեցան,
Կամ ոգնի մի պէս չի ոլոր եկան,
Խեղճ մանուկներին՝ սպառ եղծանելով.
Թմբրելու չ՚են ծեփ տունը քանդելով:

**Տուր:**

Քո ամարդութեամբ դառողակ, Ամբակ,
Արիացնումես ինձ: Այդ խոտադոյն
Դժնդակութիւնդ թէ և վնաս բերեց
Մեզ սկզբում, սակայն նա դուշակումէ
Կամ մահըն և կամ լաւն ապագայում:
Սկսիր, մշտական քո հետևող եմ:

**Ամբակ:**

Գաղանի բնութիւն պահանջման, Ամբակ,
Դու ամէն ուրեք առաջին էիր:

(Խփում է քարով դուռը):

Խորտակուիր, չնչին — դու փակ ցնցոտիկ:

### Տուր։

Արիւն թափելես, Տուր, երկրորդական,
Եւ ոչ վերջին—տեղ իրաւունք ունիս
Ստանալ։

(Պատնէշի վերայ կայնելով, հանում է
շորի տակից պահած թուրը)

Եւ թրցրէ՛ր, ո՛վ սայր իմ թըրի,
Մարդկային այն մասն, որ չի խոստանում
Դժբաղդութիւնից ոչինչ աւելի։

(Թռչում է գաւիթ և խոսափում է)։

### Ամբակ։

Ցայ—յո՜ւ. ուժգնութեան իմյս դոնիկը
Հպատակ լինել չ՚ունի ցանկութիւն։
Դէ՛ք իմ, աստուածնե՜ր . . . .

(Սկսում է կոտրատել)։

Ա՜յ. վա՜յ կ՚ըզարթնեն.

(Խրճթից երևում է ճրագ)։

Ճրագը վառեցին, արթնեցան . . .

(Պատնէշի քամակից լսում է
թրերի շաչիւն)։

Թրի՜

Շըռինչ. ուրեմն՝ դու իմ սլակ նուիրած,
Հանուիր քո տեղից, աւել մի ծածկուիր։

(Հանում է թուր)։

### Տուր (պատնէշի վերայ)։

Հասիր ինձ, Ամբակ, օգնութիւն ինձ տուր,
Անողորմաբար խոցեցին եղբօրդ։

### Ամբակ։

Պահապան քեզ թուրս։



(Խրճթից դուրս են գալի ՍՄԲԱՏ և
ԳԻՍԱԿ թրերով և աշտանակով)։

Ցածէկ, գնանք, փախչե՜նք։

(Ցածէ ընկում),

### Պերճ (Պատնէշի վերայ թրով և ճրագով)։

Բռնեցէք գողէն, խոցեցի նորան։
Հասացրէ՛ք կրկին . . .

(Ցածէ գալի. մտենում է ՈԳՈՒՀԻ ճրագով
պատնէշէն, և կայնելով՝ նորա միայն գլուխը
և ճրագը երևում է քամակից)։

### Սմբատ։

Գողերեն սոքա։

Գիսակ, ընդմիջէր. չէ՜, գնա դըռան մօտ,
Կայնիր, պահպանիր դու Արտաշիսին։

### Գիսակ։

Պէտքչէ նեղանալ. մենակ թողնելու
Քեզ սոցա մէջը՝ անկարելէ՜։

### Պերճ։

Շրջապատեցէք աւազակներին։

(Պաշարում են ՏՈՒՐ և ԱՄԲԱԿԻՆ)։

### Տուր։

Թափում է արիւնըս, ես թուլանումեմ. . . .

### Ամբակ։

Հետսէ իմ թուրը, միթէ՞ ձեզանից
Ազատուել արդեօ՞ք մեզ անհնարինէ։

### Սմբատ։

Գցի՛ր թուր, թշուառ, ազատուելու չ՚ես։

**Տաճատ** (Քամակից)։

Կապեցէք ձիանք ծառի մօտ։

**Տուր։**

Աւա՜ղ,
Գալիսեն պահնակք սահմանի։ Բռնուա՜նք.
Վերքս տանջում է . . . ո՜վ թուլանում եմ։

Մտնում է ՏԱՃԱՏ։

**Տաճատ։**

Ո՞վ էք դուք—կայնած։ Վէճ է՞ սըրերով. . .
Զօրականք, բերէք աստ ճրագաջահներ։

Մտնում են ԶՕՐԱԿԱՆՔ ջահերով։

Տուէցէք ճանապարհ. հեռու այստեղից։

**Տուր։**

Ձայնից իմացայ քեզ—չընկե՛ր Տաճատ։
Մեռնում եմ ահա, բայց ո՛չ քեզանից . . .

(Մեռնում է)։

**Ամբակ։**

Տաճա՜տ . . . նախարա՜ր, պնդելու եկա՜ր
Մեզ. Եթէ վերջը հասաւ իմ կեանքիս,
Ուրեմն պաշտպանիր քեզ, արքայաշուք։

(Ընկնում է Թրով)։

**Տաճատ։**

. . . .
Թո՛ղ քո նախ արիւնդ թափուի, և յետոյ . . .

(Վերաւորում է Ամբակին)։

Զօրակա՛նք հասէք, բռնեցէք սորան։

**Ամբակ։**

Համարձակուեցէ՞ք մօտ գալ հսկայիս։

(Կամենում է փախչել)։



Տեղ տուէք վիթխարին . . .

(Զօրականներ վիրաւորում են)։

Բաւ է. մի՛ խոցէք.
Թողէք տամ իմ շունչս նոցա, որոնք ինձ
Սխալմամբ . . . ստեղծեցին։

(Ընկնում է)։

**Տաճատ։**

Ո՞ւմ հանդիպեցայ.
Երկու գիւղական մեռան մեզանից,
Եւ երկուք սոքա—իմ անունս տուեցին։
Զարմա՛նք. դուք ո՞վ էք, որ տեղից եկած։

**Սմբատ։**

Սիրելի Տաճատ, Ասպետ—Սմբատը
Նորից տեսնում է քեզ. եկ նորա գիրկ։

**Գիսակ** (կամաց, համարեայ ականջին)։

Մենք ենք ամփոփիչ ապառնի բաղդու
Հայրենեաց. անդորր նա քնածէ այն տեղ։
Խանգարել նրա քուն յանդգնելու չէք։

**Տաճատ** (կամաց)։

Գոհութի՜ն նոցա—մեր աստուածներին,
Որոնք ձեզ այդպէս լաւ պահպանեցին։
Կա՛ց. զօրականներ ուղարկե՛մ. . . . բայց չէ,
Նոքա իմ ձեռքով ջոկուած մարդիկեն,
Եւ ինձ անձնատուր։

**Սմբատ։**

Տաճատ, ինձ պատմի՛ր,
Քեզ զօրականօք Երուանդն ուղարկեց
Իսկ մեր քամակից, բռնելիս—սպանես։

**Տաճատ։**

Ո՛չ, այլ Վրույրի, փոքրիկ Տիգրանի,—
Նա, սպանողներին, հրամայեց բռնել.
Տուրին, Ամբակին, չ՚եմ կարող հասնել։

**Սմբատ։**

Ի՞նչ. Տուր և Ամբակ նոցա սպանողնե՞ր։

**Տաճատ։**

Այո՛, Սմբատ—նրանք։

**Սմբատ։**

Ո՜վ սրտիս զգացմո՜ւնք,
Դուք չէք խաբեցիք հըմուտ ծերունոյն։
Նոցանից սպասել միշտ կարելի էր։
Այլ, շարունակի՛ր։

**Տաճատ։**

Մինչ ցաժմըս դարշ դարշ ես մանեմ գալիս,
Փոխանակ նոցա՝ աւազակներին,
Որպէս և այսօր՝ միշտ պատահումեմ,
Բանալով աղմուկ, կարծես պատերազմ
Սկսումեմ անել նրանց հետ. Ծանրացայ,
Ուղիղն ասեմ, ուժգին խոնջուեցայ։
Քանի հինգ օրուայ մէջ հասաք դուք սահման,
Ինչու ուշացա՞ք։ Ձեզ ես պնդումեմ
Ո՛չ այս տեղերում, այլ լեառներում
Կապադովկեայ։

**Սմբատ։**

Ես սպասումէի,
Այդ սպասումէի։ Երուանդը կարծեց՝



Որ ես կ՚դիմեմ դէպ ՚ի Յունաստան։
Սխալուեց թագաւոր—անթագակիրը։

**Տաճատ։**

Պատմեցէք հապա՛ ճանապարհորդին։

**Սմբատ։**

Երբեմն և արձակ, երբեմն աղքատի
Շորերով, գիւղէց այն գիւղը, կամաց
Զօքումենք—դիմում մեր նպատակին.
Դաէ իսկ պատճառն մեր ուշանալու։
Վաղ երեկոյեան մենք Պարսից երկրում
Կարողենք սկսել խաղաղ վարել կեանք,
Եթէ քեզ յանձնուած չէ թագաւորից՝
Դարձնել մեր երես դէպ քաղաք Մծբին։

**Տաճատ։**

Կշտամբումես ինձ, Սմբատ։ Մոռացար
Հաւատարմութիւնս դէպ ՚ի ձեզ—բոլորդ.
Եթէ ես թողի, ձեզ հետ չի փախայ,
Եւ Երուանդի մօտ մնացի, իմացիր,
Սէրը հայրենեաց ստիպեց միայն անել։

**Սմբատ։**

Ներիր ինձ, Տաճատ, այժմեան ժամանակ
Հաւատարմութիւն կոխածէ, չըկայ։
Քո և Հրահատի վերայ կասկածանք,
Ճշմարիտ ասեմ, չ՚ունէի երբէք։
Ուխտազանցութեան ընդունակութիւն
Ձեր մէջ ո՛չ առաջ, ո՛չ արդ չեմ տեսնում։
Մնացիր նորա մօտ, քո տնտեսութիւն—
Հայրենեաց համար շատ հարկաւորէ։

**Տաճատ:**

Թող աստուածները այդ միտք դէպ 'ի մեզ
Մինչ 'ի յաւիտեան չի փոփոխացնեն:
Այլ ժամէ անել և կարգադրութիւն.
Աւազակներին մոռացանք:

**Ամբակ** (բարձրանալով վերը ենչ):

Այստե՜ղ,
Այս տեղ դուք եկէք . . . չ'եմ ես աւազակ
Բնութեամբ կամ վաղուց զարգացած, սնուցած,
Այլ Թագաւորի Երուանդի սաստին
Անքըլթիլթ դրութեան հասցրուց . . . Ամբակ—
Առաւեննեանց եմ:

**Սմբատ:**

Ամբա՛կ. ուրե՞ Տուր:

**Տաճատ:**

Նախարար Ամբակ—սպանո՞ղ. ուրե՞ Տուր:

**Ամբակ:**

Այն տեղ նա անշունչ . . . ձեր ոտերի տակ,
Ինձանից առաջ ստացաւ պատուհաս:

**Գիսակ** (Մօտենալով դիակին):

Այո, սա Տուրէ, մեռածէ արդէն:

**Ամբակ:**

Փափուկ հասակի որդւոց արքայի
Մահի պատճառ մենք դառանք. Վրուրին,
Տիգրանին սպանանք, և հաւատացէք,
Եթէ իւր հարանց մօտ ուղարկէինք
Եւ Արտաշէսին, դուք իմ շունչ տալիս
Այս տեղ տեսանել չէիք արժանանալ:



**Տաճատ:**

Ափսո՜ս, մեռաք դուք 'ի զուր. լաւ կ'լինէր
Կենդանի իմ ձեռք ընկնէիք: Գրեթէ
Մի ամիս անցաւ ձեզ որոնելով:

**Ամբակ:**

Միայն սովութիւն կարէ հարկադրել
Պիղծ տաժանութեան բնութիւն վերջացնել:
Ոչինչ ուրիշ քո ձեռք ինձ չ'էր գըցիլ:
Խոստովանութիւնս այժմ լսեցէք,
Եւ ձեր մտքերում տպաւորեցէք՝
Որ Սանատրուկի որդւոց սպանելու
Առիթը գահնէր, որի վրայ նստող՝
Մարդկային կաշի ունեցող գազան—
Երուանդ հրամայեց մեզ մեռցնել նոցա . . .
Ինձ զօրութիւնը թողնումէ . . . կորցրի . . .
Ոյժըս . . . Երուանդի արարողութիւն
Դուք աւանդեցէք ում հարկնէ . . . և ինձ . . . .
Ջարածին . . . պղտո՜ր . . . մարդասպա՜ն . . . յիշէք . . .

(Մեռնումէ):

**Տաճատ:**

Քարշեցէք դիակ, գցեցէք մի գուբ:
Թէպէտ պատահմամբ՝ արքայի յանձնուած
Մենք կատարեցինք: Դուք հանգստացէք,
Իսկ վաղ առաւօտ հեծեցէք ձիանք,
Դառնալ մեզ Մծբին պէտք կգայ անշուշտ:

(Զօրականները տանումեն դիակները, և նոցա հետևումէ Պերճ):

**Սմբատ։**

Մենք գնանք խրճիթը, անքուն մնանք գիշեր,
Իմ պատուիրանքըս կ՚լսես ընդ ամեն.
Հայրենիք նորից դու կ՚երթաս, սակայն
Մեզ պէտքէ երկրից—այս առժամանակ
Հեռանալ։

(Գնում են խրճիթ)։

## ՏԵՍԱՐԱՆ 2.

Պարսկաստան. խորհրդարանոյ Դուրէհի։

**Դարէհ** (Մօտենում է սեղանին)։

Տարակուսութեան մէջ ես մնացել եմ։
Սակաւ ընդմիջեալ՝ ահա վեց տարի,
Քուշանաց հետ, ես չ՚եմ կարողանում
Աւարտել գործը։ Նորից յաղթուեցան
Անպէտ մարզպաններս։ Զօրապետութիւն
Ում յանձնեմ, երբ իմ զօրապետներիս,—
Մէկին նոցանից ես չ՚եմ հաւատում։
Այսպիսի պաշտօն—մեծ՝ տալ այլազգի
Մարդին, ակամայ կամօք, յուսահատ
Հարկադրուած եմ։ Ինձ Պարթեւացիք,
Հայ Բագրատունեաց Սմբատի վերայ,
Նրա յայտ առեցին քաջութիւնները։
Նոյնպէս լսեցի՝ առանց հարցնելու,
Նա գրեթէ ամեն պատերազմներում



Ներկայէ եղել և հաղորդակից,
Առանձին մի շնորք սպարապետական
Նա բացատրելով, ՚ւ՚ ախոյեան ոգի։
Մնում է ինձ դորան—Սմբատին փորձել,
Սպարապետութիւն—բոլոր տալ նորան։
Էյ՜ հետևողներ։

Մտնում են ՀԵՏԵՒՈՂՆԵՐ։

Դուք անձապարեալ
Իսկոյն վազեցէք, տարէք ձիաններ,
Սմբատ—Նախարար մեծ Բագրատունեոյն
Իմ մօտ առժամայն և վազվազակի,
Ուղարկեցէք։

(Գնում են հետևողներ)։

Բայց եթէ և Սմբատ . . .

(Փոքր ինչ մտածելէն՝ մանէ գալէ)։

Կարողէ՞ արդեօք ժպրհել Սմբատ,
Մատնել ազգըս։ Բայց եթէ տանուլ տայ
Քուշանքների հետ բացած պատերազմ
Միթէ՞ նա մահից, կծպետ տանջանքից
Չ՚ունի վախութիւն, ինձ դժրողելով։
Այլազգին շուտով կ՚ջանայ, կ՚աշխատի
Օգտաւէտ լինել, զգուշութեամբ ռազմել,
Քանթէ մարզպաններս, որոնց նպատակ—
Քարշել ժամանակ—հասկանալիէ։
Սմբատը թէ և չէ իմ հպատակ,
Նա դժուարութեամբ կ՚համարձակուի
Վնաս Պարսիկներին բերել։

Մտնում է ՍՄԲԱՏ։

Ճուտափոյթ
Դու, քաջամարտիկ—Սմբատ, կարացար
Գալ իմ մօտ։

### Սմբատ։

Իմ շահ, կայնածեմ առաջդ։
Սպասումեմ հրամանքդ, որ՝ ուրախութեամբ
Կ՚համարեմ պարտիս կատարել։

### Դարէհ։

Դու միշտ,
Լսելեմ, իբրր պատերազմներում,
Որոնց տալիսեմ Թուշանքների հետ,
Առանց հարցնելու իմոյս, քաջ Սմբատ,
Մեծ կուսակցութիւն դու ունեցելես։

### Սմբատ։

Այո, շահն շահ, համարեայ ամեն
Պատերազմի մէջ ես ներգործուելեմ.
Խնդրելես՝ երբեմն ձեր մարզպանները
Ինձ զօրք առանձին յանձնելէն, այո։

### Դարէհ։

Բարի է։ Բայց դու յայտնիր քո կարծիք,
Իմ զօրապետներ այդ ի՞նչ պատճառաւ
Մինչ ցարդ վերջացնում չ՚են մեր պատերազմ,
Եւ ստէպ կարի ստէպ յաղթւումեն նոքա։

### Սմբատ։

Թէպէտ չար խօսել ոչ ոքի վերայ
Չ՚եմ սիրում, նոյնպէս քսութեան մէջ ինձ
'Ի ծննդենէ անտի զարգացնել
Ոչ մին չ՚աշխատել, շահըն շահ, սակայն
Ձեր երախտիքը և մտադրութիւն
Դէպ երիտասարդ—իմ Արտաշէսը,



Որին սնուցանել դուք ձեր որդւոց հետ,
Ահա տասն տարի, իբրև ազգական,
Թոյլ տուեցիք,—դոքա ինձ հարկադրումեն
Ստոյգըն ձեր առաջ բացանել։

### Դարէհ։

Ասա,
Մի վախիր։

### Սմբատ։

Գոնէ իմ համար մինէ,
Կանանց հետ կռվել թէ պատերազմել
Ձեռք անյաղթու Թուշանքների հետ։
Որպէս թոյլ նոցա—կանանց ականջներ,
Որպէս սիրտները—դիւր աղաղակից
Բարձրացած անժամ, կ՚թափի՝ ոչ միայն
Սիրտը, ականջներ կը խլացուցանեն,
Նոյնպէս Թուշանաց վերայ ներգործել
Պիտոյէր ամեն ձեր զօրապետին։

### Դարէհ։

Ուրեմն, ասա ինձ, դու համաձայնես,
Սպարապետութիւն զօրացս ընդունել։

### Սմբատ։

Ընդդէմ ձեր կամաց, հակառակութիւն,
Ո՛չ կենալ, ոչ ես ցոյց տալ իրաւունք
Չ՚ունիմ։ Մանաւանդ, երբ Արտաշէսին,
Ինձ և Գիսակին դուք ընդունեցիք։
Դուք Արտաշէսին զարգացրիք, և ես
Յաւէտ ձեր առաջ պարտաւոր դառայ։

### Դարեհ:

Ցանձնումեմ բոլոր քեզ Պարսից գունդը.
Քո յաջողութիւնք ինձ կը հարկադրեն
Առանձին անել շնորհակալութիւն:

### Սմբատ:

Ոչինչ հատուցումն չ՚եմ սպասում ձեզնից
Բաց ՚ի պարգացնելն որբ Արտաշիսի
Շարունակել, և ուշ միայն դարձնել
Քո ազգականըդ, արենակցի վրայ:

### Դարեհ:

Թագաւորական քեզ խօսքեմ տալիս:

Գնում է:

### Սմբատ:

Ես իմ ազնուական տոհմիս յատկութիւն
Նուիրել միայն կարողեմ ձեզ. շահ:

Հեռանում է:

~~~~~~

## ՏԵՍԱՐԱՆ 3.

Երուսաղէմ. Պարտէզ արքունեաց:

~~~~

Զեռուսեան ԲԵՐԳԻԱՀ և ԵՐՈՒԱԶ:

### Ներգիահ:

Տասն երկու տարի արդէն ժամանեց,
Այն ժամանակից անցաւ տասն երկու
Տարի, երբ Սմբատ ազատեց մանուկ
Արտաշիսին: Եւ անցաւ տասն երկու



Տարի՝ մինչ որդիս մեծ պատրաստութիւն
Անում է: Տասըն երկու ամ շփոթած,
Ո՛չ քուն նա չ՚ունի, ոչ արթուն լինել
Կարող է: Օրէ ցօր մենք զանազան
Պատահմունքներին սպասումենք: Ի՞նչ էր
Դիտաւորութիւն մեր . . . նորոգելով
Կամուրջներ, թէ և կառուցանելով
Ամրոցներ. թէ և քաղաքք շինելով,
Կամ Հայաստանը—սերտ ամրացնելով:
Մերը մեզ վերայ, անկանելու է.
Մեր ձեռքով շինուածք, ո՛վ—քանդուելուեն
Մեր գլխին: Վճիռ—դու փոփոխական.
Բա՜զդ, ուր ես, ո՞ւր, մենք քեզ որոնեցինք . . . .
Կարծելիէիր, և փայրկենական:

### Երուազ:

Օրէ ցօր, այո, ժամէ ժամ արտունջ
Ժողովրդական աւելանում է:
Որպէս ձիւնի հիւս քանի աւելի
Թաւալես՝ այնքան կ՚մեծանայ աւել,
Նոյնպէս ոխ, նոյնպէս և ատելութիւն,
Դէպ ՚ի Երուանդը, որքան շատ իշխի՝
Այն չափ առաւել նա բազմանում է:
Զ՚կայ ոչինչ երկրում վատ՝ ընտրութիւնից
Կողմնական. չ՚կայ հաստատուն և պինդ
Օրինաւոր ժառանգների դահից:
Գիտե՞ս դու, մայրիկ, որ կամաց, գաղտուկ,
Թէպէտ և վախով, այլ մեծ զգուշութեամբ,
Թէ Սանատրուկի որդւոց, ասումեն,

Ջնջողը Երուանդներ։ Դու իմացի՛ր,
Որ Պարթեւական նրա խժդժութիւն,
Նոքա պահեցին մտքում։

**Ներգիաս։**

Շատ ափսո՜ս,
Որ ամենայն տեղ Երուանդ ծախողակ
Տեսնում էք. ինչքան նա չի աշխատեց,
Որ այն աւիւծի կորիւնին, նորա
Եւ մնուցանողին ձեռնածիգ լինել,
Չի յաջողեցաւ, և իւր բարկութիւն
Սմբատի ազգի, և տոհմի վերայ
Դարձ առեց։

**Երուանդ։**

Այդ ես տեսան հայերը։

**Ներգիաս։**

Քո կարծիքովդ՝ բոլոր հասկացա՞ն։

**Երուանդ։**

Եթէ չեմ սխալւում, բոլոր հասկացան։

**Ներգիաս**

Անյարկ և կարծեաց նրա անքրյթութի՜ւն.
Նա կ՚խելագարուէ . . . .

**Երուանդ։**

Բանէ պատահե՛լ։

**Ներգիաս**

Որդւոյս մտքի մէջ մանուկ Արտաշէս,
Խեթկալ—տարբերուն մի տեղ ընդունեց։
Մտատանջութեան մէջ ինքն իրան
Մրրում էք՝ թէ նա յաջողակ ժամին,



Խլել նորա ձեռքից իւրեան հայրենեաց
Ժառանգութիւնը կ՚կարէ։

**Երուանդ։**

Ապաշա՜ւ—
Երուանդ, արժանի է վշտակցութեան։

**Ներգիաս։**

Խեղճի գլուխ դառաւ տանջանաց բաւիղ։

**Երուանդ։**

Հռովմայեցւոց հետ բարեկամութեան
Կապեր ամրացրուց, կողմ Միջագետաց
Նոցա տուեց, յետոյ փոխարէն առաւ
Վերին Հայք. դորա այդ աններելի
Սխալէ, ըստ որում Մծբին, Եդեսիա
Սպառ. օտարացան հայերից։ Նոքա
Իւրեանց մտքերի մէջ այդ դրոշմեցին։

**Ներգիաս։**

Պահեցի՜ն, տեսա՜ն, տրպաւորեցի՜ն,
Դրոշմեցի՜ն . . . Հապա ի՞նչ անէր Երուանդ։
Լաւէ որ չինեց Երուանդաշատը,
Ամրութիւններով նա ապահովեց,
Եթէ Արտաշէս բանալ պատերազմ
Ժամանակով իւր համար կամենայ
Նա վստահարան—ամուր կ՚ունենայ
Եւ ապաստանի։

**Երուանդ։**

Դա պարթեւական
Թեթեւմտութիւն է. Ճանաչեցին
Անկասկած և այդ, աչքէ ձգելով։

**Ռերգիաս։**

Լինել զգուշ—վնաս չէ, այլ ընդհակառակն
Գոհողութիւննէ և օգտամատոյց։

**Երուազ։**

Զգուշութեան մէջ չ՚կար հարկաւորութիւն։
Թագաւոր նորան ընտրելէր ազգը,
Վերջնոյն նա պնաքէր և վստահանար,
Եւ ապաւինէր, ոչ թէ պարիսպի
Կարծրութեան։ Հայեր լաւից տեսնումեն
Շրջմոլիկ հոգին իւրեանց արքայի։

**Ռերգիաս։**

Լսումէ սապէս, թէ իբր Սմբատը
Հաւատարիմ լրտեսներու ձեռքով՝
Բոլոր պատահած նա իմանումէ։
Թէ իբր նա Պարսից երկրումն՝ ճանապարհ
Դէպ ՚ի հայրենի աթոռ պատրաստած
Ունի ժառանգիչ—Արշէսի համար։

**Երուազ։**

Ես էս լսելեմ, սրտեռանդ ծառայն
Սմբատը՝ որ իւր կապելէ վիճակ
Դժբաղդ արքայորդու վիճակի հետ՝
Պարսից Վոլոգէս—Դարէհի գլուան
Մեծամեծ քաջութիւն կատարումէ,
Պարթև իշխանաց աչքը մտնելով։

**Ռերգիաս։**

Կեցանք մենք մինչ ՚ի ժամանակները—
Զարհուրելի։ Դու ինչո՞ւ աստ եկար,
Հարցնել քեզանից ես այդ մոռացայ։



**Երուազ։**

Հէրմէսի ձեռքով ես Բագաւանում
Երուանդի նամակ ստացայ. յաշտ առնել
Նա աստուածներին հրամայեց անյամր։
Հրաւիրեց շտապաւ գալ Երուանդաշատ,
Ծածուկ լուր յայտնել, գրումէ, ունի նա։

**Ռերգիաս։**

Մեռած, ապանածեմ՝ որդւոյս տրտմութեան
Եւ այլալութեան պատճառաւ։

**Երուազ։**

Իւրեանց
Գուշակութիւնով մեր աստուածները
Արդարացնումեն քո սեաւ մտքերը։

**Ռերգիաս**

Գնա, Երուազ, նորա մօտ, մխիթարի՛ր։

**Երուազ։**

Ես այս տեղ կ՚սպասեմ, դու ինքդ ասացի՛ր,
Որ երևոյթներ և անուրջները
Համգիստ սենեակում նորան չեն թողնում։

**Ռերգիաս։**

Փոխուեցաւ Երուանդ, չ՚ունի՛ նա հաւատ.
Կամ հալածումէ, կամ հայհոյումէ։

Մտնումէ ԵՐՈՒԱՆԴ։

Գալիսէ. քաշուի՛ր, Երուազ, տես, նայի՛ր.
Ի՞նչպէս շուարածէ, և տխրութիւն
Դէմքից նրա ցածգալ չի ուզում իսկի։

**Երուազ։**

Կաց, նա սկսումէ խօսել։

### Բերգիաս։

Թաղնուենք,
Լսենք—հեռուից նորա կարօտանք։

(Թաղնւումեն)։

### Երուանդ։

Ազգըս սրտի մէջ արդէն ընտրելէ
Ժառանգ Արշէսին—Թագաւոր։ Եւ իր
Հաճութիւնը իմացրեց Սմբատին։
Կա՛ց, խեղճ—դու արքայ, սպասի՛ր. բաւական
Չէ այդ. դու 'ի զուր երեւակայում՝—
Կարծում էիր դու, փառասիրութիւն,
Որ սուտ—կեղակարծ քո հայեացքըդ,
Եւ համարած նախատեսութիւնիցդ,
Մի բան ծածկուի։ Սխալուեցա՜ր անյօդ.
Ճարտարութիւնդ, խորամանկութիւն
Անզօրեն վնասել անպարտ դեհենին,
Որ աչքիդ առաջ կայնածէ անվախ
Եւ քեզ կրակի թրով նա զայրացնումէ։
Վատակ սատանի՛, ծնունդ Ահրիմանի,
Պիղծ արարածաց—դեւնային սերո՜ւնդ.
Կինը, մի կինը խափեց, բռնեց ինձ,
Կինը կործանեց սիւն. ո՜վ Ամանոր,
Սանձի՛ր, դու մեղմի՛ր սրտիս շնչերակս,
Հեռացրուր հոգւոյս խռովութիւն։ Արիւն,
Ալեկոծութիւն . . . կռիւ . . . ո՜վ—Սանատրուկ,
Վրայր, Տիգրան ինձ պնդումեն . . . ա՜յ—ա՜յ . . .

(Վազումէ)։



### Բերգիաս։

Ա՜հ, Երուազ, թո՛ղ ինձ. չ՛կայ համբերութիւն։
Բան կըպատահի նորա հետ։

### Երուազ։

Ոչինչ
Չի պատահիլ, մայր իմ, հանգստացէք,
Նորան տանջումեն երեւակայութիւնք։

### Բերգիաս։

Չէ՛, նա հիւանդէ, իւրեան կըսպանի.
Գնանք Երուանդի մօտ։

### Երուազ։

Մայր իմ, Բերգիա՛ս,
Լըսեցէք. այդ ինչ անմըտութիւնէ.
Լսեցի՞ր, որ նա բոլոր մեղք՝ կընոջ
Վերայէ Թափում. դու ընդհակառակ
Թագընուեի՛ր շուտով, որ չի տեսնի քեզ։

### Երուանդ (քամակից)։

Հնա՜ր, հնա՜ր . . . . գըտայ. Մաժէժ, էի՜ Մաժէժ։

### Բերգիաս։

Լսումե՞ս, Երուանդ չարչարւումէ. ա՛հ։

### Երուանդ (քամակից)։

Մաժէ՜ժ . . . . էի՜ շտապի՛ր. բռնեցի՝ կ'խեղդեմ...
Հասի՛ր օգնութիւն . . .

### Բերգիաս։

Ինչի՞ ես բռնում
Ինձ, թո՛ղ։

Մտնում է ԵՐՈՒԱՆԴ, քաշելով ՄԱԺԷԺԻՆ։

Երուազ։

Տէ՛ս. կայնենք բացուստ, հեռանանք։
(Տանում է կողմը)։

Երուանդ։

Մաժէ՛ժ, հասկացա՞ր, որ բաց ինձանից՝
Ոչ ոք անցկենալ Զինւած կամուրջը,
Ներկայանալ սև—մուր Հոռոտմանին,
Համարձակութիւն չունի, չի կարող։
Միթէ՞ կայ մին ևս՝ Երուանդի նըման
Երջանիկ, ասա… ա՜։

Մաժէժ։

Ձեզ հաւասար
Մոմով գտանել—անկարելի է։

Երուանդ։

Աստծըդ ճիշդէ. ինձ հաւասարը
Մոմով գտանել—անկարելի է։
Բայց իմ մօրըս պէս, Բերգիահի նման՝
Նա և փայփայած Հռովմում կ'որոնես։

Բերգիահ։

Որդեա՜կ իմ։

Երուանդ։

Որդեա՞կ… ա՜—դու վերջապէս,
Ընկար իմ ձեռքըս. կա՛ց, ուրէ՞ թագըս,
Ուրէ՞ գահ, ուրե՞ն փառք, անկախութիւն։

Բերգիահ։

Դու թագաւորես, նոյնպէս գահակիր,
Փառաւոր, անկախ…



Երուանդ։

Ստի՜ս, կախուածեմ.
Սըտիս, Բերգիահ, անամօթաբար։

Բերգիահ։

Երուազ, ազատի՛ր, տար ինձ այս տեղից։

Երուազ։

Եղբայր—թագաւոր, քեզ աստուածները
Երկար—շարունակ օրեր կ'ուղարկեն։

Երուանդ։

Հէ՜. աստուածները կատակեն անում։
Կատակէ ստուգիւ—արքայ նստացնել,
Գահից ցած բերել—իւրեանց ախորժով։
Զէ՜. չարաբաստիկ գլութեան պարգևող
Կիննէ, միայն—կին։ Ո՜վ դուստր իժի,
Ամենի վնասող, ամենի քանդիչ,
Եւ խառնակիչ դու՝ մայր իմ Բերգիահ։

Բերգիահ։

Որդեա՜կ սիրելի։

Երուանդ։

Որդեակ սիրելի՞։
Ես սիրելի չ'եմ, ատելի եմ ես։
Տուր ինձ առաջուայ, տուր իմ վիճակը,
Տուր Սանատրուկին, նախարարութիւն՝—
Ո՜վ—վերադարձրուր։ Թողնումեմ գահըս։

Բերգիահ։

Բոյս ապականած ընձիւղ չի հանիլ,
Արիւն արիւնով կ'լուանաս ևեթ։

Երուանդ։

Լաւ. քո արիւնով, կ'լուանամ յանցանքս.
Զոհի՛ր մօրս, Երուազ։

Երուազ։

Ի՞նչ. ուշաբերվէ՛ր։
Քո ցանկութիւնէ ընդդէմ օրինաց
Մեր աստուածների. քեզ կ'պատուհասեն։

Ներգիահ։

Ակնկալութեանս վեր երեւեցար։
Լաւէ՞, աշխատիր տրտունջ վերացնել,
Եւ սանձահարել լերբ ժողովրդին,
Թէ չէ շուտ կ'զրկուես գահից և թագից։

Երուանդ։

Զրկե՜լ ինձ գահից, խլել ինձանից թա՜գս։
Չէ՞, մայր իմ, ոչ ոք յանդգնելու չէ։
Ասածդ ուղիղ է. գնա, Մաժէժ, քսակով,
Գցի՛ր շատ դրամներ ամբոխի դնչին։
Ամա, հիւանդեմ, չ'ունիմ զօրութիւն
Գնալ, երթալ, տեսնել. . . չկայ և ցանկութիւն։

Ժողովուրդ (քամակից)։

Ուրե՞ Թագաւոր, կամիմք բողոքել։

Ներգիահ։

Գազանութիւնից դու ժողովրդեան
Փախի՛ր—գնա՛, Երուանդ.—նրանք քեզ կանչումեն։

Երուազ։

Ինչե՞ս լուռ կայնած, նայումես։



Ժողովուրդ (քամակից)։

Տեսնել
Մենք Թագաւորին ուզումենք։

Ներգիահ։

Փախի՛ր։

Մտնումեն ՏԱՃԱՏ և ՀՐԱՀԱՏ։

Տաճատ։

Տէր Հայաստանի՜։

Հրահատ։

„Թագաւոր Հայոց. . . .

Երուանդ։

Սուս։ Ինձ լսեցէք. այստեղից, դշխոյ,
Գնա՛։ Երուազ, սպասի՛ր դու միւս անկինում
Պարտիզի, բարտի մօտ՝ տեսանելու
Չէ մեզ անդ ո՛չ ոք։ Սրբազան ծառը
Հարստահարածներին կըպահպանէ
Եւ աշխարհական մրրիկներից։

(Գնումէ Երուազ)։

Մաժէժ, ամբոխին քսակներ լի ոսկով
Տա՛ր, գցի՛ր։

(Գնումէ Մաժէժ)։

Հրահա՛տ, կ'լուանամ շուտով,
Այց ելանելու հպատակներին
Դուրս կ'գամ, ասա դու ժողովրդին,
Եւ խաղաղացրո՛ւր։

(Գնումէ Հրահատ)։

Հիւանդե՜մ, Տաճատ,
Հիւանդե՜մ, գնացէք, ինձ մի՛ հետեւէք։

Ժողովել պէտքէ ցիրցան մաքերըս։
Հապա՛, վաղեցէք քամակից—բռնել. . .

Տաճատ։

Թագաւո՛ր։

Երուանդ։

Այսու ժանիքով կրծէք . . .
(Գնում է)։

Ներգիաշ։

Ինչո՞ւ ժողովուրդը ապստամբում է. ինչէ՞ ուզում ասել արքային։

Տաճատ։

Ժողովուրդը չի ապստամբում, այլ ունի գանգատ յայտնել։

Ներգիաշ։

Հաւատի ես հաստուկ, որ ապստամբ չէ նշանակում նորա աղաղակը։

Տաճատ։

Հատկապէս։

Ներգիաշ։

Իմ կարծիքով ես այսպէս։ Գնա, Տաճատ, գոնէ մի ճար գտիր վերադարձնել արքայն առաջուայ կեցութեան։

Գնում են։



## ՏԵՍԱՐԱՆ Գ.

Արտաքին Պալատ։

Երուանդ (սեղանի մօտ նստած)։

Փորձեմ նամակ գրել, ոչի՛նչ չի մնացել։
Հնարագիտութիւն ուրացաւ ինձնից։

Մտնում է ՏԱՃԱՏ։

Տաճատ։

Դուք ինձ, Թագաւոր, պահանջեցի՞ք։

Երուանդ։

Ա՜. . .
Ի՞նչ, դո՞ւ . . . ախ, եկա՛ր—Տաճատ։

Տաճատ։

Այո, տէր։

Երուանդ։

Նոր լուր . . . զրպարտանք—նոր չե՞ս լսել դեռ։

Տաճատ։

Ո՛չ. այլ . . . պատրաստեմ . . . եթէ՞ . . . .

Երուանդ։

Մի՛ վախիր,
Պատմի՛ր։

Տաճատ։

Բամբասանք են 'ի հարկէ. բայց—
Արքայ, ասումեն՝ թէ Սանատրուկի
Որդւոց սպանողներ—Տուրը և Ամբակ
Ձեր հրամանքովն կոտորել մանկանց։

### Երուանդ:

Աւարտի՛ր տանջել ինձ. բաւական է։
Ոչինչ չ'կամիմ լսել։ Դու եգուց՝
Աքաղաղների գուռում գոչելիս,
Կ'երթաս Պարսկաստան։ Նամակ Դարեհին
Գրի՛ր իմ ոճերով։ Նստի՛ր աստանոր։

(ՏԱՃԱՏ նստումէ տախտի վերայ, և գրումէ)։

### Տաճատ:

Նստած եմ, արքայ։

### Երուանդ:

Գրի՛ր. «ո՛վ արիւն իմ,
Եւ ազգական. դու ինչո՞ւ կ'սնուցանես
Իմոյս ընդդէմ և Թագաւորութեանս
Մար—Արտաշիսին։ Զուր հաւատումես
Խօսքեր Սմբատի—աւազակ մարդի,
Որ քեզ խաբումէ, հաւատացնելով՝
Թէ Արտաշէսը—ճշմարիտ որդի
Սանատրուկի է։ Նա աշխատումէ,
Շատ և ճգնումէ՝ հովուի, տուարած—
Որդւոյն ձևացնել իսկ Արշակունի,
Քո արենակից, և քո ազգական։
Ո՛չ, Սանատրուկի որդի չէ, այլ մի
Մարացի։ Սմբատ խաբուած, որմնեալ
Գտաւ, չի գիտեմ, որ տեղ. գորանով
Պարապած, ցնորված է այժմուս»։

(Մտնէ գալի)։



### Տաճատ:

Գրեցի։

### Երուանդ:

Այդքան. իսկ ինքըդ Սմբատին կ'ասես
Դու բերանացի. «Ի զուր՞ն սնոտի
Հոգատարութիւն, ջանքըդ. Գիսակից
Խաբուած՝ Մարացուն դու սնուցանումես,
Վնասելու համար ինձ և հայկազանց»։
Գնա արագ, այլ կաց։ Հրահատին ասա,
Ուղարկել մարդիկ, կոչել Արգամին
Իմ անունովըս։

### Տաճատ:

Ինչ հրամայեցիք՝
Կ'կատարեմ խօսքէ խօսք և բառ առ բառ։

### Երուանդ:

Դու իմ երախտիք, վերադառնալիս՝
Միայն կ'հասկանաս. պատիր պարգևներ
Ինձանից առատ։

### Տաճատ:

Ձեր ճոխութիւնը
Թող չի պակասուի։

(Գնումէ)։

### Երուանդ:

Յաջողին քեզ դիք։

(Նստումէ աթոռի վերայ)։

Մի՞նչ երբ ես տանջուեմ, չարչարուեմ, ցնորուեմ.
Թուլացած խելքըս դարաւ կացարան
Երևոյթների—այլանդակ։ Տըխուր—

Իմ ճակատագիր, նշանակեցիր՝
Վճռեցիր ինձ փառք մահուան հետ... աւա՜ղ։
Սպանեցիր իմ մէջ մարդկային զգացմունք,
Տանելով երկրից չնաշխարհիկ տեղ....
Թողլիր մի՛, իմ անձ. արիւն, կա՜ց—սառի՛ր....
Ա՜հ. պառկեմ, ննջեմ.... Գոնեայ փոքր ինչ...

(Պառկում է տախտի վերայ)։

Մեծ վիմի վերայ, չքաւոր հովիւ
Անկած՝ խեղճ գառանց նա արածում է.
Յանկարծ դէմ ու դէմ գայլ անցկանալով,
Նապաստա՜կ... Աղուէ՜ս... Գա՜յլ... Գա՜յլ...
Ա՜... վերստին խելքըս իմ շփոթեցին...

Անցնկենում ՍԱՆԱՏՐՈՒԿԻ, ՏԻԳՐԱՆԻ և ՎՐՈՅՐԻ ՇՈՒԱՔՆԵՐ, կոչելով նորան։

Յարուցյան.

Սանատրո՜ւկ, Տիգրա՜ն... Վրո՜յր... դուք նորից
Ծնուեցաք. կացէ՛ք... ինձ դուք կոչումէ՞ք...
Կացէ՛ք... գալիսեմ. նորից ձեզ կ'սպանեմ...
Կ'սպանեմ, ո՜վ... կ'սպանեմ...

Մտնում են ԲԵՐԴԻԱՀ և ԵՐՈՒԱԶ բանալով նորան։

**Երուազ։**

Եղբա՜յր իմ, Երուանդ։

**Բերդիահ։**

Որդեա՜կ իմ։

(ԵՐՈՒԱՆԴԸ ընկնում է նոցա ձեռի վերայ՝ ուշաղելով)։

Եղո՜ւկ. տեսէք՝ դժուել է....

**Երուազ։**

Աթոռի վերայ, մայր իմ, աթոռի։

(Քաշում են դէպ 'ի տախտը)։

# ԱՐԱՐՈՒԱԾ
# ՉՈՐՐՈՐԴ

## ՏԵՍԱՐԱՆ 1.

Պարսպատան. Դահլիճ Դարեհի։

Մտնում են ԴԱՐԵՀ հետեւողներով և ՏԱՃԱՏ.

**Դարեհ** (Նամակը ձեռին).

Տիրասէր Երուանդ մոռացաւ, որ կեանք
Մահկանացուի մի կայծէ առանձին,
Որ ենթարկուածէ միտակամ հանգչման.
Նա ևս մոռացաւ իւր մարդկութիւնը։

**Տաճատ։**

Առաւել բարւոք համարումեմ ես՝
Նախապատուումեմ սառն խաբանքներին—
Տիրասիրութեան, առաքինութիւն,
Սէր դէպ Արտաշէս—աթոռաժառանգն։

**Դարեհ։**

Ժամանակի ձեռն, հասարակական—
Խոտորնակութիւն, սալէս մահարեր,
Կործանիչ ուղղը կը քանդեն նորա

Թաղաք հոյակապ և շքեղազարդ,
Որ կառուցածէ մարդոց ծաղրելու:

Տաճատ:

Մենք մեծարումենք կենարար խնկի
Ընդունակութիւն: Երդուելենք՝ երբէք
Չըլինել գերի:

Պարէհ:

Անձնանուիրումն—
Ձեր գովելի է: Բայց չ՚եմ հասկանում
Տասն չորս տարի համբերել նորա
Ամբարշտութիւն և դժպըհութիւն
Ի՞նչպէս կարացաք:

Տաճատ:

Դուք դեռ չէք ծանօթ
Նորա կիրքերի ժանտակերպութեան:
Եթէ Կսիզուստր Եգիպտացին լոկ
Սիւների վերայ գծագրել կարաց
Բոլոր մարդկային գիտութիւնները
Եւ հմտութիւններ՝ գոյացած առաջ
Ջրհեղեղից, չ՚կայ նըման նորա, որ
Գոնէ քառորդը, կամ կէսն գըրի
Չարագործութիւնք արքայ—Երուանդի:
Հմուտ Մար—Աբաս—Կատինայ պատմիչ
Հմտութիւն կ՚կորցնէր, եթէ սկսանէր
Արարողութիւնք Երուանդի գըրել:
Միայն ողբերգակ Արտաւազդ արքայն
Եղերերգ երգել իրաւունք ունէր
Հնարաւոր մարդի անհնարին ախտեր:



Պարէհ:

Հաստատ տեսնումեմ նրա ուրացութիւն
Մարդկային ամէն կայծից, պատճառաւ
Ձեղխութեան իւրոյ, ցոփութեան:

Տաճատ:

Ուստրէ

Անդրանիկ նա այն Ասիոյ, որի
Ծովագոյն հովտաց, պերճափայլ դաշտի,
Լուսատու, ահեղ— հորիզոնի վրայ,
Վճիտ եզերքի օդը, տոգորած
Անոյշ հոտերով հիւթալից բուսոց՝
Կերակրումէ զինքն,—ծագուաւ նուաճումն:
Զարմանալի չէ, եթ՝ այդ ուստր—Երուանդ
Տիրասիրութեան կիզած կըրաց մէջ
Եւ թաղեց հոգին. եթէ զանազան
Երեւոյթները խղճմըտանքների
Նրան անտանելի այժմ չարչարումեն:

Պարէհ:

Դա է իսկ վճիռ փառասիրութեան:—
Ուրեմըն կ՚ասես Երուանդին, որ ես
«Մարին» սնուցանում չ՚եմ, ազգականիս
Ես սնուցանումեմ: Ասա դու նոյնպէս,
Սմբատին—(թէ և բոլոր Արմէնիոյ՝
Բարեկամ իւր և մերձակայ ազգով,
Մեսադեաց և Բասլաց զօրքերով՝
Պարսկաստանի վրայ վեր կենայ),—չ՚եմ տալ:
Դորա պէս հըզօր և երեւելի
Դիւցազնին տեսնել չի գալ ոչ մէկին:

Ես հիւրասէր եմ և անխրաւել,
Անպատիւ առնել Թանգագին հիւրին՝
Կառավարչութեան իմ չէ համեմատ։
Ամօթէ՜ և քեզ նախարար, ամօ՜թ,
Ժառանգին իրաւ և օրինաւոր
Թողած, քամակից յափըշտակողի
Ընկերես։

**Տաճատ։**

Երդնում դիօք հայրենեացս,
Որ սէրը միայն դէպ 'ի Հայաստան
Ստիպեց ինձ կալ—մնալ Թագաւորի մօտ,—
Աղցիփեղց չարիքն կանխաւ պաշարել։
Սպասումեմ մահին նորա, որ յետոյ
Փառօք ժառանգին բազմեցնենք աթոռ։
Շահըն շահ Պարսից, ինձ Թոյլտուութիւն
Տուեցէք տեսանել աքսորուածներին։

**Դարեհ։**

Մեծ ուրախութեամբ։

Մտնումեն ԱՐՏԱՇԷՍ քսան չորս տարեկան, ՍՄԲԱՏ և ԳԻՍԱԿ,
Աչա՛ և նոքա։

**Տաճատ։**

Սմբա՜տ. իմ Գիսա՛կ, Գիսա՜կ,

**Գիսակ։**

Նախարա՛ր

Տաճատ. դու ի՞նչպէս . . .

**Սմբատ։**

Աքսորելե՞ն քեզ։
(Սմբատը և ԳԻՍԱԿԸ համբուրումեն ՏԱՃԱՏԻ հետ)։



**Դարեհ։**

Ի՞նչպէս ես զգում քեզ երեգուայ որսից։

**Արտաշէս։**

Գեղեցիկ։—Սմբա՛տ, սա հայ է արդեօ՞ք։

**Սմբատ։**

Այո՛, Արտաշէս, մեր մտերիմն է,—
Նախարար Տաճատ, որի վերայ ես
Պատմելեմ ձեզ շատ։

**Արտաշէս։**

Լաւ միտս է։—Մօտ եկ։

**Տաճատ։**

Դիք իմ, ո՜վ դիք իմ, ձեզ, արքայազուն—
Արտաշէս, միթէ՞ տեսնումեն աչքերըս։
Բաղդաւորութի՜ւն, որ արժանացայ
Ոտից անկանել, ձեռքդ համբուրել։
(Համբուրումէ ձեռքը և ոտը)։

**Արտաշէս։**

Ո՜վ երբ, հայրենի՛ք, կ'տեսնեմ քեզ, աւա՜ղ։

**Սմբատ։**

Ա՜հ, քեզ գոնէայ տեսայ, իմ Տաճատ.
Գոնէայ մի մարդը միտ բերեց մերժած
Ժառանգին, խեղճուկ ինձ ողորմելիս։
Վազէ՛ր, եկ դարձեալ իմ գիրկ, համբուրեմ,
Խմեմ, ծծեմ բնարնակ օդը մայրենի։
(Գրկւումեն)։
Տաճա՛տ, ինձ լսիր. միթէ՞ դեռ Երուանդ
Կենդանի է. կա՛ց, իմ դատերքս ողջե՞ն.—

Հարթ Սմբատուհին, գեղ Սմբատանոյշ,
Ասէր, հովացրո՛ւր սիրտըս. սակայն չէ՜ . . . .
Յետոյ կը պատմես: Շահըն շահ Պարսից,
Քուշանաց ռազմը ես վերջացրեցի,
Տիրեցի նոցա խռովարար աշխարհ:

### Դարէհ:

Ձեմումեմ, Սմբատ, մըտածմունքների
Լաբիւրինթոսում, և չ'եմ գտնում
Քեզ վարձատրելու պատշած շնորհիքը:
Որ ըստ օրէ ինձ' իմ պարթևացիք
Պաղատ—աղաչանք մատուցանումեն,
Քեզ հատուցանել քաջութեանդ համար:
Դու արիացիր, խնդրի՛ր ինձանից,
Որ գուցէ ինքդ հեշտացուցանես
Վարձահատութեան հետազօտութիւնս:

### Սմբատ:

Անմահ բարերա՛ր, արդարև ոչինչ
Իրաւունք չ'ունիմ խնդրել ձեզանից,
Բայց եթէ յաթոռ թագաւորութեան
Հայոց հաստատէք ազգայինըդ ձեր—
Որբ Արտաշէսին:

### Արտաշէս:

Ո՜վ Սմբատ:

### Դիսակ:

Սմբա՜տ:

### Տաճատ:

Առածո՜յ ազգիս բաղդաւորութեան:



### Սմբատ:

Արքայ արքայից այս է միայն խնդիրքս:
(Թեկնում է ծունկն).

### Դարէհ:

Այդ է՞ քո խնդիրք. այդո՞վ կ'կարենամ
Սփոփացնել սիրտդ, և քեզ վարձատրել:

### Սմբատ (Վերկենալով):

Ոչինչով աւել, երդուումեմ դիոք,
Ոչինչով աւել: Տո՛ւր կարողութիւն,
Տո՛ւր ինձ զօրք գընալ, խլել յափշտակողից
Գահ Հայաստանի, տալ նրա ժառանգին,
Եւ հատուցանուած' աւանդել հոգիս:

### Դարէհ:

Ուրեմն, ազգականս—սիրուն Արտաշէս,
Պատրաստ դու եղի՛ր ելանել 'ի դաշտ
Պատերազմական. Թոյլ եմ տալիս քեզ
Մասն Պարսից զօրաց առնել, և մասըն
Ասորեստանի, և' Ատրպետական
Ամէն զօրքերի ապարհայիններ,
Նշանակելով սպարապետ նոցա
Շնորհալի Սմբատ—քաջ Բագրատունւոյն:
Սակայն դու, Տաճատ, կ'ասես Երուանդին.
Եթէ նա կամօք չի մերժուիլ գահից,
Անարգա՜նք և ռա՜զմ, մա՜հ անօրէնին:
(Գնում է հետևողներով).

### Արտաշէս:

Դարէհ Կոդոմէս բարեբաստացաւ
Գտնելով մի իր, որով իւր պարտիս

Կարացաւ հատուկ հատուցումն առնել:
Բայց ես ամենից—թըշուառըս, ես ինչո՞վ,
Քեզ երկրորդ հօրըս՝ շնորհակալ լինեմ:
Այլալած է միտքս. հնարել չեմ կարող,
Որ փոքր 'ի շատէ վարձատրեմ արդիւնքդ:
Ես հրաժարւումեմ դահից, որ յետոյ
Քո առաջ չի մնամ սեւերես:

**Սմբատ:**

Հանգիստ
Եղէք, արքայադն, ես ինքս կը յայտնեմ
Ինչով վարձատրէք. միամիտ կացէք:

**Արտաշէս:**

Ասա շուտ, մինչև չեմ մերժուիլ գահից:

**Սմբատ:**

Ձեզ երեք բանով միայն խնդրումեմ
Վարձատրէք:

**Արտաշէս:**

Ասա, ո՞րն է առաջին:

**Սմբատ:**

Առաջին վարձը—չի մերժուէք գահից:

**Արտաշէս:**

Բայց երկրո՞րդ:

**Սմբատ:**

Երկրորդ—չի մերժուէք գահից:

**Արտաշէս:**

Երեւի՞ երրորդն—ինչպէս առաջինը:



**Սմբատ:**

Այո, և երրորդ—չի մերժուէք գահից:

**Արտաշէս:**

Ով որ երբէք սէր դէպ 'ի հայրենիք
Չի զգացել, թող նա սովորի քեզնից
Սիրել, գործել, անվերջ փայփայել:
Նախարար Տաճատ, պատմի՛ր մեզ. հայեր՝
Գիտեն ինձ արդեօ՞ք, թէ մոռացելեն:

**Սմբատ:**

Երթանք մեր սենեակ, ուրանոր բոլոր
Կ'պատմես դու, կ'զրուցես:

**Գիսակ:**

Գնանք, բարի Տաճատ:
(Գնումեն):

## ՏԵՍԱՐԱՆ 2.

Հայաստան. Ախուրեան գետ. դաշտ առերատա:

Մտնումեն ԵՐՈՒԱՆԴ և ԱՐԳԱՄ, քամակից ՄԱԺԷԺ շըրհաւորած, կապարճը մէջքին. հեռուից երևումեն ԶՕՐԱԿԱՆՆԵՐ:

**Արգամ:**

Ախուրեան գետը մեզ բաժանումէ
Թշնամիններից:—Ամբաղդութիւնից՝
Մեզ սաստիկ քամին կ'խառնի, կ'արգելէ:
Աշխատենք պրծնել պատերազմ մինչ վաղ
Երեկոյ:

### Երուանդ։

Պէտքէ աշխատել։ Արգա՛մ,
Դու զօրքով կ'բռնես աջ կողմը։ Մաժէժ,
Ասա Տաճատին, նոյնպէս Հրահատին,
Բռնել ձախ կողմը։

(Գնումէ Մաժէժ)։

Իսկ ես մէջ տեղը։
Տուրացիք, Վրացիք, զօրք Միջագետի,
Եւ Կեսարացիք կ'պահպանեն գետը,
Յոլացուցանած՝ պինդ նահանջելով
Ընդհարում պիտակ—մեր ոսոխների։
Զօրականք—քաջե՛ր, դէպ 'ի ձեզ իմ խօսք.
Գերազանցութիւն միմեանցից ցոյց տուէք։
Իմացէք, որ ես ոչինչ չ'եմ խնայիլ
Ձեզ համար։ Մաժէ՛ժ,

Մտնումեն ՏԱՃԱՏ, ՀՐԱՀԱՏ և ՄԱԺԷԺ։

Բաժանիր դրամներ
Զօրականներին, և հանգստացէք։

(Գնումեն Զօրականներ և Մաժէժ)։

### Տաճատ։

Հրամանքդ Մաժէժ մեզ յայտնեց. բայց ես
Կարծումեմ՝ եթէ մենք—ես և Հրահատ
Աջ կողմը բռնենք, առաւել դիւրին
Կ'լինի՝ նետերի թուլացուցանել
Զրգիլը։]

### Հրահատ։

Այգով և յաղթահարել։



### Երուանդ։

Բարի է. իսկ դու ձախը կ'բռնես,
Արգամ։

### Արգամ։

Ի՞նչ. ձախը՞։ Ձեր կամքն է։

### Երուանդ։

Այո։

(Տանելով Արգամին մեկուսի)։

Հայաստանի մէջ երկու հոգի կան.
Մինը քո առաջ կայնած—արքայդ է,
Միւսը յարգելի—տէրը Մուրացան։
Ջան 'ի գործ դու դիր, յաղթիր, սպանանել
Դու Արտաշիսին հրամայիր, բռնել
Սմբատին, յայնժամ բաժանումեմ ես
Քեզ հետ իմ գահըս։

### Արգամ։

Թագաւո՛ր, գահդ
Ինչու է ինձ, երբ պարգևներ, որոնք
Ստացելեմ արդէն ձեզանից, այո,
Ինձ բաւականեն։ Առաւելութիւն
Ամէն բանի մէջ նեղութիւն միայն
Բերումէ մարդին, որ նըւիրած չէ։
Ես խոստացելեմ, և մեծ յոյս ունիմ—
Խօսքըս կատարել։ Եթէ յոյս թողնի
Մէկին, համարեայ—նրա գործի կէսը
Տարուած կ'երևի։

### Երուանդ։

Արգամ, քո վերայ
Իմ յոյսըս դնումեմ։ Քեզանով կ'յաղթեմ։

### Արգամ։

Պէտք չէ կասկածել։ Արքայ, սիրելեմ,
Եւ այժմ սիրումեմ չքնաղ Հայաստան.
Նորա հովանաւորութեան տակը
Իմ Նախնիք գըտան իւրեանց արժանի
Ապաստան։ Այնքան Մուրացանքները
Շատ պարտականեն Հայերին, որ ես՝
Կենդանի նոցա ներբողիչ—սերունդ,
Հատուցանել պարտքս անկարանումեմ։

### Երուանդ։

Խաղաղեմ։ Նոր կեանք, նոր բաղդ բացեցիր։
Արիութիւնըս և քաջութիւնը
Կրկին գալիսեն, վերադառնումեն։
Ես փիղ եմ, Նայիր, ո՞վ դէմ կ՚կենայ....
Բայց, ինձ դեռ ես տանջումէ.... Երթանք
Բանակ. վաստակը առանց դադարման,
Թոյլ, ո՛չ թէ ամուր, ունի հետևանք։

(Գնումէ Արգամի հետ)։

### Հրահատ։

Լըսա՞ր դու. արդէն Արտաշէսի հետ
Սմբատը անցաւ Ուտեաց գաւառն։

### Տաճատ։

Լսեցի։ Բոլոր Նախարարները
Թողած Երուանդին, եկան ընդ առաջ
Նոցա։

### Հրահատ։

Ինչո՞ւ դու առաջարկեցիր
Բռնել աջ կողմը։



### Տաճատ։

Որ մենք հեշտութեամբ
Անցնենք ժառանգի—Արտաշէսի մօտ։

### Հրահատ։

Հաւատացած ես զօրականաց վրայ.
Գիտես, որ հրաման տալով՝ նրանք իսկոյն
Անցանելու են դէպ 'ի Արտաշէս.

### Տաճատ։

Որպէս տեսնումեմ քեզ, և չ՚եմ սխալւում,
Նոյնպէս նոցա մէջ չ՚ունիմ կասկածանք։

### Հրահատ։

Նախարարների ուրացութիւնը
Յայտնելես արդեօք արքայ Երուանդին։

### Տաճատ։

Ո՛չ, անհնարին է. չի տալ պատերազմ,
Կը փախչի, կ՚գնայ նա Երուանդաշատ։

### Հրահատ։

Չէ, ես չեմ կարծում. բազմագունդ զօրքով
Դժուար կ՚հեռանայ, առանց ռազմելու։
Նախարարների վերայ յոյս չ՚ունէր.
Նորա ապաւէնը—դիւցազն Արգամն է։

### Տաճատ։

Լաւ. եթէ կամիս, յայտնենք և տեսնենք
Ինչպէս կ՚ընդունի ուրացութիւնը։
'Ի հարկէ դիմօք ցոյց տալ չ՚ենք կարող,
Բայց—սակայն հոգւով անչափ կ՚ծիծաղենք։

Հրահատ։

Առանց ծիծաղի վերաբնակ մարդը
Կարողէ ապրել։ Համայն օր լացը՝
Վերջապէս անձը կ՚չորացնի. յետոյ
Ինչի է կեանքը, լաւ է մեռանիլ։

Մտնում են ԵՐՈՒԱՆԴ, ԱՐԳԱՄ և ՄԱԺԷԺ։

Ահա գալիս է ինքն—թագաւոր։
Արքայ, լսեցի, Արտաշէսի հետ
Սմբատը անցաւ Ուտեաց գաւառը։

Տաճատ։

Լսեցի, բոլոր նախարարները
Թողած ձեզ՝ ելան ընդ առաջ նոցա։
Սիրով և պատուով զօրաց հետ նոցա
Խառնուեցան։

Հրահատ։

Նոյնպէս լսեցի՝ իբրև
Տեսան և ուրիշ նախարարները,
Լուծան և լքան։

Տաճատ։

Խորհեցան յետոյ
Կալ մեզանից։

Հրահատ։

Յարիլ Սմբատի հետ
Սկսան, զի նոքա թագաւորացնեն
Արտաշէսին։

Տաճատ։

Եւ մեծ երկիւղի մէջ
Ընկնելով, մեղկած թուլանումէին։



Մանաւանդ ոմանք նոցանից այնչափ
Համաձ չէին, դուք ըստ որում ժառանգ
Թագաւորութեան չէք։

Երուանդ։

Ո՛վ—վերջացրէք։
Գոյժ բերողների, թէպէտ օրէնքով,
Գլուխը պիտոյ է թռցնել, սակայն ձեզ
Ներումեմ. Արգամ, դու ես իմ գահիս
Պահպանիչ. գիտեմ հաւատարմութիւնդ։
Տաճատ և Հրահատ, մի՛ խռովիք, ժամ չէ.
Կապադովկացիք, Վրացիք և Հայեր,
Նոյնպէս Տուրացիք, և Կեսարացիք
Պահպանողներեն, և նոցա յաղթող։
Տրտնջելու չ՚են իմ զօրականներ,
Նրանց մեծ գանձը և փառք սպասումեն։
Մաժէժ, բաժանիր դու դարձեալ դրամներ։
Կացէք փոքր այստեղ. շուտով ինձ նորից
Կ՚տեսնէք։

(Գնում է ՄԱԺԷԺԻ հետ)։

Տաճատ։

Մուրացան Արգամ, խելք չ՚ունի՞նք,
Եւ ոչ խիղճ. Ինչո՞ւ Արտաշէս թողած,
Եւ այժմ Երուանդի հետ մենք մնացելենք։
Կախ հայրենակցեաց, միմեանց հետ դաւել
Ազգի կորուստը մերթ գուշակումեն։

Հրահատ։

Հին ազգեր կորան սեպհական կռուից,
Իւրեանց խռովութիւն և ատելութիւն

Պատրաստեցէ՛ք վաղուց գերեզմանատուն:

Մտնում է ԵՐՈՒԱՆԴ, քամակից ՄԱՃԻԺ:

**Արգամ:**

Արքայ, այլայլած էք:

**Երուանդ:**

Իմ աչքերով
Տեսայ մերձակայ մահիս —Արշէսին,
Թշնամիք մօտեն. գնա՛նք, թէ պատրաստէք:

(գնում է):

**Արգամ:**

Ձեզ հետ եմ, արքայ:

**Տաճատ:**

Մենակ չ՚ենք թողնիլ:

**Հրաչեայ:**

Մեզ վստահացէք:

(գնում են):

## ՏԵՍԱՐԱՆ 3.

Միւս կողմ եզերքի Ախուրեան գետի:

Հետուից գալիս են ԱՐՏԱՇԷՍ, ՍՄԲԱՏ, ԳԻՍԱԿ և ԶՕՐԱԿԱՆՆԵՐ:

**Արտաշէս:**

Կ՚յաղթե՛նք, կը մեռնե՛նք, գերի չ՚ե՛նք լինիլ
Ժահ հսկաններին:



**Սմբատ:**

Հայկի բառերով
Դուք ողջունումէք հայրենի երկիր:
Նորից կը փայլէ օրուայ լապտերի
Ճառագայթները: Բնութիւն՝ նորոգած
Գեղեցկութիւնով, ուրախ, ժպտալէ
Կ՚ողջունի երկրի բիք բնակիչներին:

**Արտաշէս:**

Ծննդեան իմոյ, ո՜վ տեղեք, ես ձեզ
Տեսնումեմ, նայում ձեր ծոխութիւնը:
Դուք համբերեցիք, յիմանից խլածներ,
Վիթխարին բռնել: Ո՞րեն ձեր դարմիք,
Որոց գլխի վրայ ունէիք, աւա՜ղ,
Ոտնակոխ արած է հաղթանդամից:

**Սմբատ:**

Վերստին քո հողի վերայ, Ճեմարան,
Վերստին ծրծումեմ բեկրարար օդը:
Վերստին ես կ՚տեսնեմ դստերաց իմոց:
Գուցէ կատաղած ամեհին սպանեց
Նոցա . . . . ա՜հ:

**Արտաշէս:**

Սմբատ, ժամ չէ ողբալու:
Գիսակ, մենք մօտե՞նք Երուանդաշատին:

**Գիսակ:**

Այո, տէր, մօտենք: Լաւ տեղ պիտոյ է
Մեզ բռնել կարծեմ, Ախուրեան գետի
Այս կողմը կ՚լինի ամէնից պատեհ:

**Արտաշէս։**

Ի՞նչ տեղեկութիւն թշնամեաց վերայ,
Նոցա զօրքերի, ունիս. գումարը
Քեզ դեռ յայտնի չէ՞։

**Սմբատ։**

Գիտեմ նոցա զօրք.
Շատ են, ասումեն, բայց մեզ վախացնել
Երբէք չ՛են կարող։ Վիճակ Հայրենեաց՝
Ժողովրդական ոգւոյ օգնութեամբ,
Որոշւումէ. իսկ ոգին մեր կողմն է։
Ահաւոր չ՛կայ ոչ ոք նոցանից,
Բաց ՛ի Արգամից, քանզի այր քաջ է,
Գոռ պատերազմող՝ Տէր իմ—Արտաշէս,
Լաւ կ՛լինի եթէ մենք պատգամաւոր
Գիսակին ղրկենք Արգամի բանակ։
Խոստանանք՝ ինչ որ ստացել է միայն
Արքայ Երուանդից, բոլոր պարգևներ
Հաստատել և տալ նորան առաւել։

**Արտաշէս։**

Եթ՝ ազատութիւն և բաղդ Հայրենեաց
Մեր՝ փոքր ՛ի շատէ կախուածէ նրանից,
Յօժարեմ։ Սմբատ, բայց ես կարծումեմ,
Բացերևակի ուղարկել պատգամ,
Մեծ սխալ է. Գիսակ կ՛ընկնի նոցա ձեռք,
Ձերծանուելու չէ։ Եթէ Արգամը
Կ՛ցանկայ անցանել մեր կողմ, նա առանց
Պատգամաւորի կ՛մերժուի Երուանդից։
Այդու պատճառաւ առաջարկումեմ,



Ուղարկել Գիսակ փոխած շորերով,
Գաղտակուր երթալ Արգամին տեսնել,
Եւ գաղտաշշունչ յայտնել մեր միտքը։
Եթ՝ յաջողուելու չէ մեր այդ գործը,
Բոլորը մի է, Գիսակը կ՛մեռնի։

**Գիսակ։**

Ո՛չ, եթէ ծածուկ, ես յոյս կ՛ունենամ
Ազատուել, փախչել։

**Արտաշէս։**

Այդ եմ ես կարծում։

**Սմբատ։**

Չ՛ունիմ իմ կողմից ոչինչ ընդդիմակ
Ասելու մի խօսք, և համաձայնեմ։
Գնա, Գիսակ, նրա վրան, և մի՛ մոռացիր,
Որ երկու սրտեր սաստիկ խփւումեն.
Կ՛ուշանաս՝ նոքա պատրվելու են,
Շուտ կ՛վերադառնաս, շուտ կ՛հանգստացնես։
(Գնումէ ԳԻՍԱԿ)։

**Արտաշէս։**

Պարսից զօրքը մենք Ախուրեան գետի
Այս կողմ կանգնացնենք, իսկ Հայեր մէջ տեղ
Բռնելով՝ նոքա—նետաձըգութեամբ
Երուանդին իսկոյն կ՛շփոթեն։

**Սմբատ։**

Դուք դեռ
Պատերազմի մէջ չ՛էք եղել սակայն
Սպարապետութեան ձիրք ցոյց էք տալիս։

Ձեզ ապագայում՝ ես գուշակումեմ,
Մեծամեծ ռազմեր. յաղթութիւնք կ'տեսնէք:

Արտաշէս:

Այժմ դէպ 'ի ձեզ, քաջեր, ապառնի
Ձեր թագաւորը դառնումէ: Ընկնել
Դուք աշխատեցէք ուժգնութեամբ նրանց վրայ.
Սպասումէ մեզ կամ մահ՝ կամ յաղթութիւն:
Տիտանի ընդդէմ լռել պիտոյ չէ,
Երբ մեր նախահայր իւր երեք հարիւր
Զօրականներով չէ լռեց ընդդէմ
Անգումար համբի:

Սմբատ:

Կ'հասնի ժամանակ՝
Երբ խաղաղութեան հովանի տակը
Կը հանգստանանք:

Արտաշէս:

Ուրեմն, զօրակա՛նք,
Խաղացէ՛ք 'ի դաշտ: Փողերի հնչման՝
Գնացէ՛ք դու յառաջ, 'ի զէնք և 'ի մահ:
(Գնումեն):



## ՏԵՍԱՐԱՆ 4.

Բռնաչէրոչ Արգամի:

ԳԻՍԱԿ, փոխած շորերով՝ կայնած է բանակի մի կողմ, աշխատելով չէ երևալ:

Մտնումէ ԶԻՆԻՈՐ:

Զինուոր:

Դու դեռ այստեղե՞ս կայնած: Ասացի քեզ հ'կանգնես. գնա քո ճանապարհով (խթումէ):

Գիսակ:

Պատուելի զինուոր, թէպէտ դու աստիճանաւոր ես. թէպէտև քո խելքի չափը բռընդեղջիւրի ուռոյցի մէջ կ'մնի, բայց լեթելը քեզ իրաւունք տուող չէ լինիլ: Վերջապէս, ճշգրիտ ինձ ասա, ես ինչո՞վ կարողեմ քեզ խառնել:

Զինուոր:

Դարձեալ խօսումե՞ս: Հապա շուտ այստեղից խուսափուիր, թէ չէ կ'հրամայեմ ծեծել:

Գիսակ:

Ես ինչպէս նկատումեմ, քեզանից մեծը չ'կայ ոչ ոք աշխարհում: Եթէ գտնեմ մեծին, իմացիր, բողոքելու եմ:

Զինուոր:

Ա՜յ զրպարտիչ, դանդաղով ինձ վախեցնումես. տես պատասխանը բողոքիդ (տալիս է ապտակ և սկսումէ ծեծել):

**Գիսակ։**

Պահապա՛նք, է՜յ մարդիկ, պահապանք, ինձ սպանումեն։

Դուրս է գալի բանակից ԱՐԳԱՄ հետեւողներով։

**Զինուոր։**

Բռնեցէք լրտեսին.... Ա՜խ, տէր Մուրացան, ունիմ յայտնել ձեր քաջութեան, որ այս մարդը, ձեւացնելով իւրեան աղքատ, առաւօտւանից կայնած է բանակի մօտ և դիտումէ։

**Գիսակ** (անկանելով ԱՐԳԱՄԻ ոտքն)։

Լրտե՞ս. ես նմանեմ լրտեսին։ Հայեցէք, ինքեանքդ դատեցէք, զննեցէք, քաջ զօրավար։

**Արգամ։**

Աղքատ ես թէ գիւղական, մի և նոյն է։ Քեզ հրամայեցին գնալ այստեղից, դու — ուրեմն պարտական էիր հնազանդուել։ Իսկ եթէ ընդդիմացար, — ընդդէմ կացողին սպասումէ երկու տեսակ մահ. ցիցը կամ կախաղանը։ Որը հաճելէ քեզ համար, ընտրիր։

**Գիսակ։**

Մեծամիտ դիւցազներից. ո՛չ աղքատ և ո՛չ գիւղական իւր ծունկն թեքած ունի ձեր առաջ, այլ...

**Արգամ։**

Ասա, ո՞վ ես դու։

**Գիսակ։**

Նախ պաղատումեմ ձեզանից ուղարկել այստեղ կայնողներին, և ապա ուրախութեամբ կ՚յայտնեմ ձեզ — ո՞վ եմ ես։



**Արգամ։**

Ո՛չ լեզուդ, ո՛չ և ձև խօսակցութեանդ նման չեն շաղակրատ դռնեհիկին. դու ազնուական ես կերպով և մտքով։ Թողէք մեզ առանձին։

(Գնումեն ԶԻՆԻՈՐ և ՀԵՏԵՒՈՂՆԵՐ)։

Բացվէ՛ր, յայտնվէ՛ր, անծանօթ։

**Գիսակ։**

Իշխան Վիշապազանց, դու տէր — Մուրացան, մեծդ և հզօր Արգամ....

**Արգամ։**

Բայց յետո՞։

**Գիսակ։**

Դուք ինձ թոյլ տուեցէք վերկենալ և կանգնել ոտերի վերայ։

**Արգամ։**

Կարողես։

**Գիսակ** (վեր է կենում)։

Վաղ պատերազմ տալուէք դուք և արքայ Երուանդը։

**Արգամ։**

Չ՚ես սխալւում։

**Գիսակ։**

Գիտէ՞ք ում ընդդէմ դուք ձեռք էք բարձրացնում։

**Արգամ։**

Այո՛, գիտեմ.... Բայց ինչես ինձ տանջում — խոստովանացնում։ — Շուտով գործը ցոյց տուր, և

յայտնիր—ո՞վ ես, մինչև չ՚են լարել կախաղանի չուանը և չ՚են սրել ցից ցից սայրը, հասկանումե՞ս:

**Գիսակ:**

Կախը դատարկաբան յանցաւորի համար՝ հնարած է, ցիցը շատ կ՚սիրեն կանայքը, սակայն Գիսակը....

**Արգամ:**

Գիսա՛կ,—Արտաշէսի փախցնո՞ղ: Քեզ ո՞վ ուղարկեց մօտըս:

**Գիսակ:**

Իսկական ժառանգ մօր Հայաստանի,
Օրինակաւոր որոնող գահի,
Մեծն Արտաշէս, տէտես հայրենեաց—
Անվախ Սմբատը, որոնք՝ հեռու չէ—
Կայնածեն այստեղ. որոնց հանդիպել
Ձեզ եգուց կըգայ երես առ երես:

**Արգամ:**

Ի՞նչ են հրամայել ինձ ասել, պատմի՛ր:

**Գիսակ:**

Առաջարկումեն ձեզ՝ բոլոր, ինչ որ
Ունէիք—հաստատել, և՝ առաւելագոյն
Բաշխիչներ դընել ձեր առաջ, եթէ
Երուանդին թողնէք, մեզ մօտ անցկենաք:

**Արգամ:**

Թողնել Երուանդի՞ն:

**Գիսակ:**

Եւ մեզ հետ յարիլ:



**Արգամ:**

Ուղիղ՞, թէ իբր՝ Ուտեաց գաւառի
Նախարարները անցան դէպ ՚ի ձեզ:

**Գիսակ:**

Այո՛. օրէցօր, հայեր խումբ առ խումբ,
Ոմանք յայտնապէս, ոմանք ծածկաբար,
Մեր բանակ նոքա անցնումեն: Ասել
Ձեզ ինձ հրաման տուին, թէ ոչ վախութիւն
Ստիպումէ խնդրել՝ թողնել Երուանդին,
Այլ ցանկութիւնը ձեզ հետ չի խռովել
Մերձ ապագայում, և չի աքսորել
Ձեզ հայրենիքից, երբ Արտաշէսը
Կ՚ստանայ սեպհականն: Մնալով նորա մօտ,
Որի նախանձը, փառասիրութիւն,
Ո՛չ իւրեան, ո՛չ ձեզ հանգիստ չ՚են տալու,
Զ՚կարծեմ օգուտ կարանաք քաղել:
Զարմանալին է, որ նա Դարէհի
Համոզ չի լսեց, կամաւ հեռանալ
Զ՚ուզեց աթոռից, տեղի տալ պարտեաց
Մարթու պաշտաձին:

**Արգամ:**

Փառասիրութիւն,
Նախանձ խանձեցին նորան: Այդ կիրքեր
Բարի, օգտակար և շահ խրատներին
Եւս սակաւ անգամ լսումեն:

**Գիսակ:**

Այո՛:

Բռնադատութեան նրա ագահութիւն

Ծառայեցնում է և բոլորեցունց։

**Արգամ։**

Նորա երեսից վաղ վերացել է
Մարդկութիւն միայն մնացել է հրէշը,
Որը անարժան է հաւասարուիլ
Կենդանիներին անբան, անզգամ,
Որոնք օրէնքով շարժւում են բնութեան։

**Գիսակ։**

Ուրեմն իշխանազն, ի՞նչ է ձեզ ստիպում
Երուանդի մօտ մնալ, բարձրացնելով ձեր
Կորովի ձեռքը։

**Արգամ։**

Իմ սիրտըս արդէն
Վաղուց ընտրել է խորշ Արտաշէսին։
Ես այս վայրկենիս գալ չ'եմ ցանկանում,
Ըստ որում Երուանդ՝ թողած պատերազմ,
Կ'փախչի կ'ամրանայ, և դժուարութեամբ
Կարողենք նորան յաղթել։ Ողջունիր
Ժառանգին, բոլոր հայերին, նոյնպէս
Մատաղ—Ծերունւոյն, և ասա նոցա,
Որ ես փողերի հնչման ժամանակ.—
Կ'անցկենամ ձեզ մօտ, վկայեն նախնիքս,
Եւ Աշդահակը։

**Գիսակ։**

Այլ իմն խրախութեամբ
Սպասումենք, սպասում, մենք ձեր տեսութեան։

**Արգամ։**

Զինուոր, հետեւողներ։



Դուրս են գալի բանակից ԶԻՆՒՈՐ և ՀԵՏԵՒՈՂՆԵՐ։

Տանել տուր սորան. հրամայիր անվնաս անցկացնել մեր օգտակար լրտեսին, որի մէջ դու այդպես պատժելի սխալվեցար։ Իսկ կախաղանը թող մնայ վախեցնելու նոցա, որոնք էշէն ջորից չ'են իմանում զանազանել։

(Գնում է ՀԵՏԵՒՈՂՆԵՐՈՎ)։

**Զինուոր։**

Գնանք, սխալական աղքատ։ Ինչ և լցէ ես չէ սխալվեցայ, դու լրտես ես։

**Գիսակ։**

Լրտես եմ, միայն այն կողմից չէ, այլ այս կողմից. մորթը առնելուս ձեռին, բաւ չէ նայել երեսին, ամէն կողմից նկատիր, որ ժժմակ որդերին աչքի տակից չէ անցկացնես։

**Զինուոր։**

Խրատելու տեղ չէ։ Գնանք շուտով՝ յանձնեմ քեզ պահապաններին։

**Գիսակ։**

Ծեծելու չ'ես ինձ դարձեալ, պատուելի զինուոր։

**Զինուոր։**

Մի վախիր. բայց զուէշտ անել, ծիծաղել, և կատակ անել ոչ ոքին արգելած չէ, իմ կարծիքով։

**Գիսակ։**

Ի՞նչ ասեմ, գեղեցիկէ ծիծաղդ, լաւ կատակել գիտես. խորհուրդ եմ տալիս ոչ ոքի մօտ չի ծիծաղես, թէ չէ քո ծիծաղից մէջքը կ'կոտորուի։ Զաւեշտը գովելի է, զինուոր, ասել ես հարկաւորութիւն

չ'ունի. Հագիւ մանեմ գալիս։ Է՜հ, ուշանումեմ Արգամի յանձնուածները չի կատարեմ, գուցէ հրամայի քեզ քո ձեռքով ինձ կախտաս։ Ուղղեւորի՛ր, և բաժանվելիս քեզանից՝ քո ապտակի շնորհակալութեան—պարգև կ'տամ քեզ։

## Զինուոր։

Հապա, գնա առաջ. դաղարկ, պարապ, քուրծ խօսումես։

(Գնումեն)։

# ՏԵՍԱՐԱՆ 5.

Պատերազմադաշտ. մի կողմ չէզոքներ, հեռուից երեւումէ Երուանդի վրան։

Վրանի կողմից գալիս է ԵՐՈՒԱՆԴ։

## Երուանդ։

Խաւարում, եռումեն մարդկային կրքեր,
Պատերազմումեն մտքեր. որոտում,—
Գոռումեն զէնքեր, թափւումէ արիւն....
Ովկիանոսի ալիք փրփրումեն։
Հրաբուղխ լեռների որկորը բոցով
Փրչումէ. սաստիկ և մռնչումեն
Փոթորիկները։ Կարծես՝ հիմունքը
Երկրի կ'տատանի, սղմումէ երկնից
Հաստատութիւնը....Ես իմ առաջև
Գալիս—երթումեն երևոյթները
Սրգալի....



Մտնումէ Սանատրուկի ՇՈՒԱՔ։

Դարձեալ. ո՜վ իմ աստուածներ։

## Շուաք։

Ե՛կ իմ քամակից, լսի՛ր ինձ։

## Երուանդ։

Ինչո՞ւ

Պնդումես, ոգի. կա՛ց, ասա ինձ, կա՛ց.
Գալիս եմ, գալիս քո քամակիցդ։

## Շուաք (կոչելով)։

Որպէս խօլական—երկու ցնորները.
Կասկածանք և թերահաւատութիւն՝
Ինքնագատութեան,—տիրասիրութեան
Հետազօտումեն։

## Երուանդ։

Խօլական ցնորներ.
Ինքնագատութիւն, տիրասիրութիւն....
Կա՛ց։

## Շուաք։

Ես փառահեղ՝ նոր արեգակի
Մուտքը՝ կըլինի հայերի համար։

(Խուսափումէ)։

## Երուանդ (Հետեւելով Շուաքին)։

Նոր արեգա՞կը հայերի համար։

(Հնչումեն փողեր)։

Միթէ՞ կ'յաղթուեմ. կայնի՛ր, ո՜վ շուաք։

Մտնումէ ՄԱԺԷԺ։

Մաժէ՜ժ, որտեղի՞ց գալիս ես։

**Մաժէժ։**

Արքայ,
Սկսուաւ պատերազմ։ Եկաւ սուրհանդակ
Երուանդաշատից։

**Երուանդ։**

Գոյժ է՞. քաղաքը
Ապըստամբեցա՞ւ։

**Մաժէժ։**

Ո՛չ. այլ Թագուհի—
Ձեր մայր Բերդխահ....

**Երուանդ։**

Մեռա՞ւ. սուս։

**Մաժէժ։**

Ո՛չ. այլ
Նա շատ հիւանդ է։

**Երուանդ։**

Իմ զօրականներ
Պատրաստեն արդօ՞ք։

**Մաժէժ։**

Թագուհի հիւանդ....

**Երուանդ։**

Ես քեզ զօրքերի վերայ հարցնումեմ.
Պատասխան ինձ տուր։

**Մաժէժ։**

Այո՛, պատրաստեն։
(Փողերի ձայն)։



**Երուանդ։**

Հիւանդ է։ Ոչի՞նչ, դեռ չէ՛ սատկելու։
Գնումեմ, զրահըս տուր։

**Մաժէժ։**

Բարեհաճեցէք
Երթալ վրան, այնտեղ ձեր զրահ դըրած է։

**Երուանդ։**

Վազի՛ր, բե՛ր շուտով. իսկ ես քարի վրայ
Կանգնեմ, մտիկ տամ։

**Մաժէժ։**

Շուտ կ՚վերադառնամ։
(Գնումէ)։

Պատերազմ։ Հնչումեն փողեր, և ՚ի միասին խառնվում են նիզակների ձայն, նետերի ձղում, զէնքերի ճիչ և զօրականների աղաղակ։

**Երուանդ** (քարի վերայ)։

Սկսուաւ։ Մեծ քարի վերայ ես կայնած՝
Կարողեմ լաւից տեսնել պատերազմ։
Շատեն թշնամիք, անթիւ, անհամար,
Բայց սակաւ չ՚են և իմ կտրիճները։
Ահա Սմբատին... երեւի նայէ,
Պատիւ են տալիս։ Կա՛ց, Արտաշէսի,
Եթէ չ՚եմ սխալւում, համբուրումեն ոտ։
Ուղի՞ղէ, թէ ինձ այդ երեւումէ։
Ռազմի ժամանակ պատիւ տալու տեղ
Միայն յուսակիրք կարողեն գտնել։
Այս ի՞նչ եմ տեսնում. Տաճատ և Հրահատ
Զօրքերով գնումեն։ Տաճա՛տ, դարձի՛ր յետ.
Յե՛տ, յե՛տ, դու Հրահա՛տ, չանսացո՛ղ, դարձի՛ր։

Ա՜, ա՜ և ահա . . . աչերս մթնումեն . . . .
Տեսէ՛ք, տե՛ս. Արգամ, ո՜վ Արգամ և դո՛ւ.
Վերջի յոյս, կեանքիս—ազատող, Արգամ,
Արտաշիսի կողմ, անցես դու կենում:
Արգա՜մ, քեզ գահըս. Հայաստանըս քեզ,
Քեզ ընծայումեմ.... Արգամ, ո՜վ—Արգամ...

(Ընկնումէ քարի վերայ):

Մտնումէ ՄԱԺԷԺ զրահով:

### Մաժէժ:

Տէ՛ր արքայ, տէ՛ր իմ. ի՞նչ է պատահել:

(Փողերի ձայն երկու կողմից).

Զարթէ՛ք, լսեցէ՛ք. երկու կողմերից
Հնչումեն փողեր:

### Երուանդ:

Փողերի հնչո՛ւմ.

Մի՞թէ սկսելեն պատերազմ բանալ:

(Ճիչ և փողերի ձայն):

Մաժէ՜ժ, տո՛ւր վահան. բե՛ր իմ վահանակ:

(Հագնումէ զրահ):

Նիզակըս, նիզակ, ո՜վ տուէք ինձ Թուրըս.
Ծովային Թըրի վերայ մարդկութիւն,
Եւ բռնող նորա կայնած է—երկիր,
Թըրով կտորել պիտոյ է դոցա . . . .
Թուրըս, Թուրըս և իմ ազատութիւն:

(Առնումէ Թուր և գնումեն. քամակից):

Յառա՛ջ. հնջեցէ՛ք փողերը. ՚ի ձախ:
Յառա՛ջ Տուրացիք. շուտով Վիրք ՚ի յաջ.
Նետեցէ՛ք. յառա՜ջ.... շու՛րջ հեծելազօրք:



## ՏԵՍԱՐԱՆ 6.

Միւս կողմը պատերազմական դաշտ:

Մտնումեն ԶԻՆԻՈՐ և ԶՕՐԱԿԱՆ պատերազմելով:

### Զօրական:

Կա՛ց, ո՞վ ես դու. հայ թէ օտարազգի:

### Զինւոր:

Հայեմ. քեզ ի՞նչ, դու պատերազմուիր:

### Զօրական:

Հայե՞ս Պարսկաստանից եկած Սմբատի հետ, թէ՞ հայ ուրացող, Երուանդից անջատուած:

### Զինւոր:

Վերջիննեմ. պաշտպանիր վիզդ:

(Վիրաւորումէ):

### Զօրական:

Ա՜յ—անպիտան. հապա՛ դու ինչպէս կ՚պաշտպանուես. ես առաջիննեմ:

(Վիրաւորումէ):

### Զինւոր (Ընկնելով):

Ողորմելի՛, մենք—ուրեմն եղբայր ենք. դու հայ—Սմբատի, ես հայ—Արգամի զօրքից, ուրացող.... Երկուքեանքս Արտաշիսի համար թափեցինք միմեանց արիւնը. աւելորդ ջերմեռանդութիւնը աղբիւր է համօրէն անբաղդութիւնների ....... տանջումեմ... վէրքս խորին է .... հասաւ վախճանըս:

(Մեռնումէ):

### Զօրական։

Դժուարէ զանազանել սեպհական կաշին—թշնամիններից, երբ եղբայրները դաւեն յարուցանում. խառնուեցան երկու կողմից . . . (ընկնում)։ Էհէ՜... կարծեօք և իմ վերջն եկաւ . . . ո՜վ, ո՜վ . . . սիրտս գնումէ... օգնութի՜ւն....

(Մեռնում)։

### Արտաշէս (քամակից)։

Վարձած Տուրացիք սպնդումեն, Գիսա՜կ.
Օգնութիւն հասցրէք։

### Գիսակ (Նոյնպէս)։

Վազեցէք, ինչքան
Ունէք ուժ. ահա՜, գալիսեմ, կ՚հասնեմ։

Մտնում ԱՐՏԱՇԷՍ ԶՕՐԱԿԱՆԻ հետ պատերազմելով։

### Արտաշէս։

Դո՛ւ, որի արիւնը գնած է արհամարհ ոսկուով. անգո՜ւթ Տուրացի, մեռի՛ր։

### Առաջին Տուրացի Զօրական։

Քո գլուխդ, Մարացի, ինքնակոչ ժառանգ, թանգէ գնահատած. բաւ է ոչ թէ ինձ, այլ հիսուն գլխների համար։

### Արտաշէս։

Անարժա՛ն, տալիս եմ քեզ գլուխս ոսկելի։ (Վերաւորում)։

(Տուրացին ընկնում մեռած. Արտաշէսի վերայ անկանումեն ուրիշ երկու զօրականներ—Տուրացիք, բարձրացնումեն թուրը, բայց ԳԻՍԱԿ հասնելով, սպանումէ մէկին, և ինքը ընկնում վերաւորած միւսից. այդ ժամանակ Արտաշէսը փախչումէ)։



### Երկրորդ Տուրացի Զօրական։

Փախաւ ոսկին ձեռքիցս։ Դու անօրդ, ստահակ, վատագործ, ապիրատ—մի՛ ես, որ մահով ազատեցիր, փրկար նորան, որի քամակից բոլոր իմ ազգայիններս վազվզումեն, ինչպես կարմրիկ—աղջկայ մաքուր ողջախոհութեան քամակից։ Ի՞նչ եմ կայնած այստեղ, գնամ, սկսեմ որոնել. ա՜յ ժառանգ—դահի, պրծնելու չ՚ես նորանից, որի քիթը որսորդաշան ունդունքի պէս կ՚գտնի քեզ՝ գետնի վերայ թողած հոտովդ։

(Գնում)։

### Գիսակ։

Դիակների մէջ ստացայ իմ անկողին. շրջապատած եմ անշունչ ամուսիններով։ Տէր իմ—Արտաշէս, ես մեռնումեմ քո համար քաղցրաճաճանչ մահով . . . Աս ո՞վ է. դիա՜կ ազնիւ զինուորի . . . . Թէպէտև մահուան սառ ձեռն խլեց քեզանից կէսը գոյութիւնիցդ, բայց երեսիդ գծերը յայտնումեն, որ ինձ անծանօթ չ՚ես . . . Երբ, ի՞նչ տեղ տեսած քեզ պէտքէ լինեմ . . . Էհէ՜. դու այն զինուոր ես, որը ինձ ապտակ տուեց Արդամի բանակի մօտ։ Խեղճ, ողորմելի՜, միտդ է՞ ինչ ասացի քեզ. բաժանուելիս՝ փոխարէն քո ծեծի և ապտակի՝ մի ուրիշ բան պարգեւել։ Շատ ուրախեմ, որ կարողանումեմ իմ խոստացածըս կատարել։ Ընդունի՛ր կիսաշունչ բարեկամիցդ համբոյր ղատական, և յաւիտենական մեկուսութեան . . . . Եթէ կ՚տեսնուենք այնտեղ. չէ, տեսնուելու չ՚ենք. ես դեռ սպանած չ՚եմ. . . . Ո՞վ կըտեսնուենք, կ՚տեսնուենք, գալիսեմ քո քամակից.... գալիսեմ. . . . (Մեռնում).

Մտնում է ԵՐՈՒԱՆԴ պատերազմելով ՏԱՃԱՏԻ հետ,
հեռուից երևում է ՄԱԺԷԺ:

**Տաճատ:**

Փառաւոր հագնուած, վահանակ դիմաց,
Ով որ չի լինես, մի է իմ համար.
Շնորհաւորում եմ՝ ոչ սակաւ արիւն
Թափելես կեանքումդ, այնպէս գեղեցիկ
Մենամարտումես: Սկսիր դու նորից:

**Երուանդ:**

Ուրացողների ձեռքեր մարտութեան
Ժամանակ՝ այնքան նրանք նուազումեն,
Որ և հրաշալի, սեպհական շահի
Մարտողի համար, չ'են դառնում փրկել,
Ազատել ջանաց ուրացութիւնդ:
Տաճա՛տ, հետդ կռւող—քո թագաւոր Երուանդն է,
ո՛չ ոք ուրիշը, հաւատացիր:

**Տաճատ:**

Քեզ որոնումեմ ողջ օր,—չեմ գտնում
Ճակատագիրը ինքնին աշխատեց
Բերել քեզ վերաս, հաշիւներ տալու.
Ով ում հետ ինչպէս վարվեց անցածում:
(Ուժգնութեամբ անկանելով
Երուանդի վերայ):
Մարդակե՛ր Երուանդ, դու պարընկորդի՛ . . . .

**Երուանդ** (վերաւորելով):

Մա՛հ պարընկորդի՛ն քեզ ուղարկում է.
Ընդունիր պարգև թագաւորական:

**Տաճատ** (ընկնելով):

Կեցցէ՜ Արտաշէս, ապագայ արքայ . . . .
(Մեռնում է):



**Ձայններ** (Բէմի քամակից):

Յաղթութի՜ւն. կեցցէ՜ Արտաշէս արքայ:

**Երուանդ:**

Յաղթութի՜ւն:

**Ձայններ** (նոյնպէս):

Կեցցէ՜ Արտաշէս արքայ:

**Երուանդ:**

Կեցցէ՞ Արտաշէս, կեցցէ՜ թագաւո՞ր:
Բայց դու, ո՜վ Երուանդ, ուրե՞ս:

**Ամբաստ** (քամակից):

Խնայեցէ՛ք
Հայերին:

**Արտաշէս** (նոյնպէս):

Յառա՛ջ, ջարդեցէ՛ք, մեռցրէ՛ք
Տուրացիններին: Ապա, յաղթութիւն
Գոռացէ՛ք:

**Ամբաստ** (նոյնպէս):

Շուտով եկէ՛ք քամակիցս,
Եւ որոնեցէ՛ք ահեղ Երուանդին:

**Երուանդ:**

Հրաման են տալիս նոքա՝ որոնել
Ինձ—թագաւորիս: Մաժէ՜ժ, ազատուիր:
Որտեղ ես կապել նժոյգ երիվարս:
Մաժէ՜ժ, երիվար չէ՛ ինձ բաւական,
Ես հաստացելեմ անբաղդութիւնով:
Ինձ աստուածների դու կառաց վերայ
Դրի՛ր, նոքա միայն կարողեն փախցնել:

Ո՜վ վէհ աստուածներ, եթէ սիրումէք
Թագաւորներին—ձեզ պաշտողներին,
Հրեղէն՝ երկնքից ուղարկէք ինձ՝ կառք,
Կառք, կառք, ով դիք իմ. Մաժէ՜ժ, ես գնումեմ:

(Գնումէ):

## Մաժէժ:

Ծառի մօտ կամ կառք, կամ ձեր երիվար
Կըգտնէք, և ես ձեզ հետ եմ, տէր իմ:

(Գնումէ):

Մտնումեն միւս կողմից ՍՄԲԱՏ և ԶՕՐԱԿԱՆՆԵՐ:

## Սմբատ:

Յաղթութիւն մերն է. աճապարեցէք,
Դուք Երուանդաշատ վազեցէք, այնտեղ
Երուանդ ամրացած կ'լինի անկասկած:

(Գնումէ զօրականներով)։

Մտնումեն ԱՐՏԱՇԷՍ, ՀՐԱՀԱՏ, ԱՐԳԱՄ և ԶՕՐԱԿԱՆՆԵՐ:

## Արգամ:

Կռիւ դադարեցաւ. հնչեցէք, ուրեմն,
Յաղթութիւն. նորա թող և արձագանգ
Երկար տարածուի, և այս լեռներից
Հանի մարդերի բացեայ ականջաց:

## Հրահատ:

Նոր լոյս է բացուել մեզ տանջուածներին:
Այս ինչ է... զինկ... դու իմ ազգական,
Բզնունի Տաճատ... մահի մանգաղը
Հնձեց քո կեանքը, և չարժանացար
Նոր հորիզոնը, նոր փայլը տեսնել:

## Արտաշէս:

Ո՜վ, հազար աւաղ քեզ, ընկեր Գիսա՛կ.



Մահը չի խնայեց քո բարի գործեր:
Անգո՛ւթ դու վճիռ. մեր մտածմունքներ
Փոշւոյդ հետ կորան, ո՜վ—բոլորովին
Եւ իսպառ: Ահա ուրախութեան հետ
Բացուեցաւ տխուր և սև տեսարան:
Պատուենք մենք սորանց—ազգասէրներին,
Որոնք ծիծաղով իւր կենաց վերայ
Նայումէին: Ես չ'եմ մոռանալ ձեզ,
Որպէս մոռանալ ազնուութիւնը
Գիտել չ'իմանում, և որ սախսումէ
Այժըմ թէ յետոյ հատուցմունք պարտեաց
Տալ մնացորդներին—ձեր արեան կրած:

## Հրահատ:

Մինչ'ի լոյս հանել Երուանդաշատին
Մենք պարտականենք, և տալ օգնութիւն
Սմբատին:

## Արգամ:

Այո. զօր ուշանումենք:

Գնումեն. փողերի ձայն. բամբիւն ածելով—անց են կենում
ԶՕՐԱԿԱՆՆԵՐ «յաղթութիւն» գոչելով:

# ԱՐԱՐՈՒԱԾ

## ՀԻՆԳԵՐՐՈՐԴ

### ՏԵՍԱՐԱՆ 1.

Երուանդաշատ. Պարիսպ։

Մանեն գալի ՊԱՀԱՆԳ—ԶՕՐԱԿԱՆՆԵՐ պարիսպի վերայ։

1 Զօրական։

Մին, երկու, երեք, չորս։

2 Զօրական։

Հինգ, վեց և այլն։ Մի և նոյն, և մի և նոյն։ Դատարեցայ, նստենք, և եթէ ուզումես, ննջենք փոքր, փոքր ինչ։

1 Զօրական։

Ցերեկուայ քունը՝—գիշերուայ տքնութիւնը է. երեկոյեան՝ գլուխդ կ'ձանձրանայ, ժամանակ չէ։

2 Զօրական։

Մտիկ տուր, տես, դարձեալ վազումեն մարդիկ։ Կա՛ց. ո՞վ էք դուք։

Ձայն։

Ցաղթուեցաւ Երուանդը, թողէ՛ք մեզ անցանել քաղաք։



1 Զօրական։

Թողնե՞նք ձեզ. խելօքներ էք, ինձ ասել պէտքէ։ Թողնե՞լ ձեզ, և ձեր ուսերի վերայ անցկացնե՞լ Թըշնամիներին,—ներողամիտ եղէք, ձեզ խաբել մեզ չի գալ։

2 Զօրական։

Նորից ձիով շտապումեն, գալիսեն և ուրիշները։ Կա՛ց, դուք ո՞վ էք։

Երուանդ (քամահելից)։

Շուտով օրոգայթ կողպեցէ՛ք։ Ես եմ—
Իշխան քաղաքի. ապա՛ թողէ՛ք ինձ։

Զօրականներ (պարիսպի մէջ անհետանելով)։

Արքա՛յ, կողպումենք. համեցէ՛ք, մտէ՛ք։

Երուանդ։

Ո՛չ ոքին թողնել, բաց ինձանից, դուք
Չի համարձակուէ՛ք։ Հասկացա՞ք թէ չէ։

(Երևումեն պարիսպի վերայ ՄԱԺԷԺԻ հետ)։

1 Զօրական։

Փակիր դուռը։

(Միւս զօրականը փակումէ)։

Երուանդ (ցած գալով պարիսպից)։

Ամուրէ քաղաքըս։ Սպառեցի բոլոր
Ինչ—որ ունէի, վատնեցի վերջի—
Դրամ գանձարանի։ Սրան սոսկացնելով,
Թէպէտ յաւիտեան անփոփած կարող

Չ՛ես լինիլ, սակայն ըստ բաւականին
Երկար ժամանակ պատահմունքներից—
Վատթար կ՚հեռանաս: Դժուարէ առնել
Քեզ՝ թէ և մի ամ—նոքա պաշարեն:
Տասն անգամ բիւր զօրք այս խաղալիքին,
Եթէ չորս կողմից մատչուեն և դպչեն,
Տարիներ պէտք է անցկենան մինչ—որ
Միայն սովութիւն ծռացնի քո վիզն:
Այն գործը՝ որի համար գանձարան
Հատաւ—դատարկվեց անմխասելի է:
Թող ինչքան նոքա ուզումեն տանջուեն,
Զարաչար սպանուեն, մի առ մի մեռնեն,
Մինչև որ վերջի զօրական չի մնայ:
Դեռ ևս չեմ կորցնում իմ յոյսը. գուցէ
Ես կարողանամ յաղթել: Յաղթութիւն՝—
Յաշտարարութիւն չանես չի լինիլ:
Մաժէ՜ժ, նեղ դրութեան ժամին աստուածոց
Մտաբերելով, դորա փոխարէն
Յաջողութիւն են ուղարկում նոքա:
Մեծ քրմապետին յայտնիր իմ հրաման,
Որ առանձին ինձ յաշտ առնեն դիոց:
(Գնումէ ՄԱԺԷԺ):
Գնումեմ արքունիք: Երբ զօրապետներս
Գան, դուք ասացէք, որ ներկայանան
Ինձ պալատներումս:

**Սմբատ** (պարիսպի քամակից):
Չորս կողմ պաշարէք,
Սանդուղքներ դրէք պարիսպի վրայ,
Բարձր վերելակներ կցէք, պնդացրէք,



**Երուանդ:**
Ա՜, աւիծ, հասար: Պահանդներ, շուտով
Զայնեցէք, յետոյ ամենին յայտնէք,
«Սմբատ Նակոտին—Մարի բերումէ—
Թագաւորացները: Ժողովուրդ գալիս—
Պոռոտ, կանչ, գոչիւն բարձրացէք, ասէք,
«Մար ամատ, ամատ», որ և հասկացող
Կամ չի հասկացող—բոլորք հասկանան:

**1 Զօրական:**
Լսումենք, արքայ, և ձեզ հնազանդենք:

**2 Զօրական:**
Անսխալ կ՚կատարենք:

**Երուանդ:**
Լամբերին մօրիկ
Տուէք, արդեօք նոքա, կողբած են թէ չէ՞:
Գնումեմ ընդ պարիսպ, ինձ հարցանելիս՝
Կ՚ասէք. անումէ մեծ կարգադրութիւն:
(Գնումէ):

**1 Զօրական:**
Էհէ՜, լսեցի՞ր, տեսա՞ր. մեր արքայն յաղթուեցաւ արձակ դաշտումն Տեմուսմեն, որ մենակ եկաւ, քամակից չկար զօրք: Պաշարողներին ընդդիմանալու են միայն մնացած զօրքը քաղաքում: Ո՜, հեռու չ՛ես գնալ, արքայ, գոցանով, որոնց սրտերը կ՚պառվեն քեզ յաղթուած տեսնելով:

**Ձայն** (քամակից):
Յաղթութիւն, յաղթութիւն, կեցցէ Արտաշէս:

### 2 Զօրական:

«Մար տմ. . . . »:

### 1 Զօրական:

Սուս, կծիր շրթունքդ. այս տեղից 'ի վայր պարիսպից ցած քաղաքավարութեամբ կ'բերեմ քեզ, եթէ ևս ձայն հանելես: Մթնելիս՝ իսկոյն բանալու եմ լամբեր, և կոչելու եմ ոտդայթներ, կեցցեով կ'ընդունենք օրինաւոր թագաւորին մեր:

### 2 Զօրական:

Քեզանից ես, գիտես, մի քայլ կողմ անելու չեմ: Քամակիցդ, իշամորուկի պէս ման կ'գամ:

### 1 Զօրական:

Գովելի ես: Գնումեմ դիտելու:

### 2 Զօրական:

Գալիսեմ քամակիցդ:

(Ցածեն գալի և պարիսպի մէջ կուսափուումն):

## ՏԵՍԱՐԱՆ 2.

Մի և նոյն տեղ. Բագնայարկ Տաճար:

Մտնում է ԵՐՈՒԱԶ կրակով և եռաժանի գաւազանով, քամակից ՔՈՒՐՄԵՐ:

### Երուազ:

Երկու օր անցաւ, ինչ որ մենք չ'ունինք
Ոչինչ լուր: Մէն մի և իւրաքանչիւր



Որ՝ Երուանդ հրաման տուեց աղօթք անել,
Եւ Միհր աստուածին բերել զոհ:

(ՔՈՒՐՄԵՐ շրջապատումն ԵՐՈՒԱԶԻՆ):

### 1 Քուրմ:

Առաջ

Հարմարէ պաշտել կրակին, և ապա
Պատերազմական աստուածին Միհրին:

### Երուազ:

Ես երեկ գիշեր երազ մի տեսայ.
Արքայն յաղթուելով՝ փախեց դէպ 'ի ինձ,
Եւ հառաչելով, խնդրումէր ցոյց տալ
Գերեզման սպանած Սանատրուկի:

### 2 Քուրմ:

Իշտ.

Երազդ մեկնեց քեզ դըպիր—Տիրը:
Երագոյն եղի՛ր իսկոյն Աշտիշատ
Քաղաքի:

### Երուազ:

Այո. եղայ: Տիր մեկնեց
Հետևեալ. տայգէ արքայ Երուանդի
Պարտութիւն: Կապէն—նըշանակումէ՝
Պատահումն: Արիւնէ—նրա հառաչանք:
Իսկ Սանատրուկի գերեզման—մահն է
Իւրեան:

### 3 Քուրմ:

Ժամանակ անկասկածելի,
Եւ անմեկնելի:

### Երուազ (եւրեան մէջ)։

Ո՞վ գիք իմ, միթէ
Ծառայութիւնից պէտք է ես զրկուեմ։
Նորից ինձ, քուրմեր, շրջապատեցէք։
Հնչեցէք աղօթք դէպ աստուածները,
Եւ հառաչեցէք բաղնագիտութիւն։

(Մռմռումն)։

### Ամենքեան։

Անմահ աստուածներ,
Ո՛վ մեզ պահեցէք,
Զօրութիւն տուեցէք
Արքայ Երուանդին,
Վանել, ըմբռնել
Թշնամիներին,
Զարկեց ազատել
Մեր բագինները։

### 4 Քուրմ։

Ի՜շտ. մատուցանել զոհ «աներեւոյթ
Հըրոյ անյաղթի» պէտքէ։ Կ՚պաշտպանի
Մեզ Միհրը։

### Երուազ։

Ահա՜—«երեւոյթ կրակ քոյր»
Տեսէ՛ք։ Վերկենա՛նք. սկսէք պտոյտել։

(Ընկղմած խոր մտածմունքի մէջ, երբեմն երբեմն կրակի մէջ ածում ցքի)։

### Քուրմեր (պտոյտ գալով եւ մըռմըռելով)։

Մե՜հեր, մեզ պահպանիր.
Յաղթութի՛ն բաշխիր։



Գովասանք միշտ քեզ։
Օ՜ն, դու ասպարէզ
Դուրս եկ քաջութեամբ,
Ցրվէր մեզնից ամբ,
Ո՜վ—կէն Վահագնի,
Սերոյ Թագուհի,
Խնայիր, քաջ—մարտիկ
Երուանդին, Աստղի՛կ։

Մտնում է ՄԱԺԷԺ։

### Քուրմեր։

Ա՜յ. ո՞վ ես դու յանդուգներից առաւելագոյնը, որ համարձակուեցար . . .

### Մաժէժ։

Յաղթուեցաւ արքայն, յաշտ տուէք, յաշտ . . .

(Գնում է)։

### Երուազ և Քուրմեր։

Յի՜ր—ցան եղէք. փախեցէ՛ք, ազատուեցէ՛ք։ Ա՜յ, ա՜յ ա՜յ . . .

(Փախչումեն)։

---

## ՏԵՍԱՐԱՆ 3.

Արքունի Սրահ։

---

Մտնում է ԵՐՈՒԱԶ։

### Երուազ։

Հըրոյ անյաղթի աներեւութի,
Երեւոյթ կրակ—բոց, մենք շուրջ, պար ՚ի պար

Պայտ—գալով զոհ՝ ջերմ աղօթքի հետ՝
Մատուցինք: Այսպէս արքայի հրամանք
Եւ պարտքըս, որպէս հարկն է—առեցի:
Բայց աստուածները սաստիկ զայրացած՝
Ոչինչ—վատ բանից՝ չի գուշակեցին:
Քաղաք ամրացած որոգայթներով,
Պարիսպի վերայ զօրականք կանգնած,
Ընդդէմ կենալու միթէ՞ չ'ունենալ
Այնքան մարթանքներ, մինչ կարողանայ
Յաղթել թշնամեաց: Ուրէ՞ սուրհանդակ.
Մաժէժքն եկաւ, զըրախօս եկաւ,
Խօսքը կտրվեց, բան—մի չի տաց,
Եւ խուսափուեցաւ, ոչինչ չ'իմացանք:
Սպասումեմ ահին, սպասումեմ գողին.
Մարդը երբ իւր խօսք չի պրծնում, նորա
Շփոթէ խելքը: Սրթամ մօրըս մօտ:
Մտնում է ԲԵՐԴԻԱՀ թագը ձեռին:
Բայց ահա ինքն: Այս ի՞նչեմ տեսնում,
Տէր իմ Արամազդ. թագը իւր ձեռին,
Նա հեծեծում է. գնում է թաղ գլխին,
Խօսում է, տեսէ՛ք. հեռանամ, լսեմ:

Բերդիահ:

Այսօր բաղդ. եղուց—չարչարանք, տրտունջ:
Այսօր փառք. եղուց—դարուանք, անէծք:
Այսօր թագ. եղուց—թուփ փշէղէն, կոծ:
Այսօր գահ. եղուց—գերեզման, տխուր:
(Լացէ լինում):

Երուազ:

Բերդիա՛հ, մայր իմ, ի՞նչես լաց լինում:



Բերդիահ:

Բացուեցէ՛ք, սահանք, թափեցէ՛ք աչաց
Ջուրը՝ բորբոքած հեղեղատներով.
Արտօսրը—տանջանք հեշտացնում է փոքր:

Երուազ:

Մայր իմ, ո՜վ—մայր իմ:

Բերդիահ:

Ի՞նչ քաղցրէ կոչում.
Աւա՜ղ, ո՞ւմ մայր եմ:

Երուազ:

Որդւոյդ. արքայի,
Մեծ քրմապետի:

Բերդիահ:

Որոց ես ծնեցի,
Աշխարհ ծաղրելու, և զարմացնելու:

Երուազ:

Քեզ չեմ հասկանում:

Բերդիահ:

Պէտք չէ հասկանալ
Հասկացողութիւն ամենայն բանի,
Եւ իրաց՝ բերում չէ բարիութիւն:

Երուազ:

Սկսում է դարձեալ իւրեան հետ խօսել:

Բերդիահ:

Եթէ հաւատալ երազին միայն,
Թագից և գահից ես պէտքէ զրկուեմ:

Ո՜վ Տէր, դու Դպիր—մեծ իմաստութեան,
Քրմաց և ուսման յոգն ճարտարութեան,
Գրիչ Արամազդի, Ազդիչ բարեխրատ
Եւ չարագուշակ ողջ երազների,
Առաջնորդ հոգւոյ և արքայութեան
Ստորերկրեայ, մեկնիր երազըս, ո՜վ Տէր:

Երուազ:

Գոչումէ Տիրին, երազէ տեսել:

Ներգիահ:

Սնոտի մտածմունք, դու ունայնութիւն,
Ինձ ո՞ւր հասուցիք: Անցան տարիներ,
Թագաւորութեամբ և վայելելով,
Վեր գալը, կամ լաւ ևս ասել, վեր գցուիլ
Աթոռից, այդ ի՜նչ տրուպ ցածութիւննէ.
Ուրէ՞ բաղդ, որին՝ քսան տարի առաջ,
Մըտադիր էի գտանել: Ոչի՜նչ—
Ո՛չ գահ, ո՛չ թագը, ո՛չ հարստութիւն
Ձ'են տալի բաղդը, և խաղաղութիւն
Սըրտի: Ես՝ի զուր, զո՜ւր չարչարուեցի,
՝Ի զուր թափեցի մարդկային արիւն:
Ո՜վ անզգուշութիւն, ո՜վ անմըտադիր
Խուճապումն, յո՞ ինձ, ասէք, յո՞ տարաք:

Երուազ:

Տանջումես սաստիկ քո պըլալութեամբդ
Որդւոյդ Երուազին: Կա՛ց, ուրեմ գրնում:
Աստուածներ մեզ վրայ խիստ ցասուցածեն,
Ազատել փնասից նորա ուզում չ'են:
Մեղքենք գործածել, դուցէ շատերին



Մահի դուռն հասցնել կից—զոյգ ջահացինք:
Անողորմաբար ուրիշին տանջել
Դաժանութիւննէ: Կա՛ց, իմ թագուհի:

Ներգիահ:

Թագուհի՜ . . . խա՛, խա՛: Թագուհի՞ եմ ես.
Հապա՜ դնեմ թագը իմ գլխիս վերայ:
Գնա՛, չի դնում թագը. տա՛ր, ձեռըս սառած,
Ինձ խոնարհ լինել չ'ունի միտք: Ազատ
Կատարել խղճըս ո՞վէ արգելում:

Երուազ:

Ո՛չ ոք:

Երուանդ (քամակից):

«Մար ամա՜տ, Մար ամա՜տ» ձայնէք:

Ներգիահ:

Սըս:

Երուազ:

Երուանդի ձայնն:

Երուանդ (քամակից):

Պարիսպի վերայ
Կայնեցէ՛ք շուտով, քաղաքս պահպանէ՛ք:

Ներգիահ:

Զրկուեցաւ, խլեցին . . . .

Երուազ:

Մի՞թէ յաղթուեցաւ:

Ներգիահ:

Արքայութիւնը. ինձանից ոչ ոք
Խլել չի յանդգնիլ:

**Երուանդ** (քամակից)։

Պարիսպի վերայ,
Ասումէք նոքա կամին ելանել։
Իմ որոգայթներ, շուտ որոգայթներ
Բացարէ՛ք։

**Երուազ:**

Մենակ պատերազմական
Գալիս է դաշտից։

**Երուանդ** (քամակից)։

Կապադովկացիք,
Ելէ՛ք քաղաքից. վանեցէ՛ք նոցա,
Եւ ձեզ դանձ առատ։ Աղաղակեցէ՛ք
«Մար ամատ, ամատ»։

**Բերգիահ:**

Երուանդն եկաւ։

**Երուանդ** (քամակից)։

Մաժէժ, դու դարձիր. ո՜վ—ուրախացրուր։

**Մաժէժ** (քամակից)։

Եկան և հասան. լամբեր կողբեցին,
Բացան որոգայթ, դժուարէ կոյնել։

**Երուանդ** (քամակից)։

Գոչէ՛ք «Մար ամատ»,—«Մար ամատ» ձայնէ՛ք։

**Մաժէժ և Ժողովուրդ** (քամակից)։

Մար ամա՜տ, Մար ամա՜տ։

Մտնում է ԵՐՈՒԱՆԴ սրով և պատառուած քղամիդով
և արիւնաթաթախ երեսով։

**Երուանդ:**

«Մար ամատ, Մար ամատ» ո՜վ—գոռացէ՛ք.



Եւ վերջ իմ համար արդէն ժամանեց։
Յաղթուեցայ. ուժից . . . ասել, մտածել
Ես ամաչումեմ։ Կորաւ քո փայլդ։
Բայց դէռ թագաւոր կարողեմ կոչուել.
Դէռ սուրը ձեռքումս, թագըս իմ գլխին . . .
Ո՜վ բացէ իմ գլուխս, ուրէ՞ թագս, ուրէ՞.
Լսեցէք մարդիկ, լսի՛ր, ժողովուրդ,
Ուրէ՞ տուած թագդ, թագը, իմ թագըս . . .

**Բերգիահ:**

Լացը, արտասուք Երուանդից սպասե՞լ.
Թագի դու համար աւաղես քաշում,
Երբ վիզիդ վերայ նստելէն սուսերդ,
Եւ մեր թշնամիք մեր դուռնեն հասել,
Ամօ՜թ քեզ, ամօ՜թ. ահա տես թագըս,
Տես գլխիս վերայ, թագուհի առաջդ։

**Երուանդ:**

Դու՞ . . . .

**Բերգիահ:**

Չ՚ես ճանաչում. փոխուածեմ սաստիկ,
Մոռացար մօրդ—քո՝ Բերգիահին։

**Երուանդ:**

Մօ՞րըս . . . .

**Բերգիահ:**

Որ զօրով կանացի—դահը՝
Անզօր իւր որդւոյն, խղճուկ Երուանդին,—
Նստացրեց, և՛ անմիտ զաւակին, որին
Տղուկը կարի վախեցնել։

**Երուանդ:**

Անգո՜ր
Երուանդին, անմի՜տ զաւակին, տղուկ
Ինձ կը վախեցնի՞:

**Ներգիահ:**

Շնորհաւորութի՜ւն
Առէ՛ք «ոչինչ». քո այսուհետեւ
Անունդ է «ոչինչ»:

**Երուանդ:**

Ինձ «ոչինչ» ինչո՞ւ կոչում ես:

**Ներգիահ:**

Մնացի՛ր
Այդ տեղ. մի՛ շարժուիր, թէ չէ կգոլորվես
Անդունդ: Մնացի՛ր դու այդ տեղ, ո՜վ Մնացիր,
Մինչ առնեն քաղաքդ: Քո կարգադրութիւն
Երբեք պէտք չէր, եթէ փախնելս,
Եւ ամփոփուելու տեղ՝—սրահ գտնելս:

**Երուանդ:**

Ո՜վ—ինչո՞ւ դու խելք կայնած ես գլխումս:

**Ներգիահ:**

Մօտեցիր գիժին, մօտ եկ դու, Երուազ,
Ականջին ասիր նախարար որդւոյս . . .

**Երուանդ:**

Նախարա՛ր Երուանդ . . . .

**Երուազ:**

Ազատուելու չես:
Ձեռքերդ շղթայով կապած, երեսդ —



Արիւնաշաղախ, դու դուրս ես թռել,
Կարծես, բաղնիսից արիւնըռուշտի:
Փոքրէ վէրքդ, բայց աստղդ թառամած—
Թարշամեցաւ: Կա՛ց, ձայն հանի՛ր, ո՞ւր ես
Գնում:

**Երուանդ:**

Ինձ ծաղրեցէ՛ք, դուք այդ արեցէք.
Ահաւոր այժմուս չ'եմ ես ձեզ համար:

**Ներգիահ:**

Չնչին և նուաղ, անարժան արքայ.
Չէ՜, դու արքայ չ'ես,—հովիւ ոչխարաց:

**Երուազ:**

Մահուան ցուրտ ձեռքը բռնեց քեզ, իսկ դու
Նայում ես պատի վրայ անմտաբար:

**Երուանդ:**

Լռեցէ՛ք, ժամ է. լռեցէ՛ք, թէ չէ
Նորից կ'ճանաչէք՝ ում հետ էք խօսում:

**Ներգիահ:**

Անասո՜ւն . . .

**Երուանդ:**

Մայր իմ:

**Ներգիահ:**

Խեղացնո՜ղ, տրկո՜ր,
Դու վախութիւնից սրահի անկիւնում
Տեղ ապաւինի յոյս ունիս գտնել,
Թողնելով պարիսպ, զօրականներից
Բաժանուած, ումի՞ն, ասա՛—յանձնելս

Սպարապետութիւն: Խայտառակ, ամօթ,
Ո՜վ—նախատինք քեզ:

**Երուազ:**

Տասըն չորս տարի
Քրտինք թափելով, կառուցանելով
Հոյակապ քաղաք, ինչէ՞ր մտածում,
Անողորմ Երուանդ: Կարծում էի՞ր դու,
Որ պէտքէ քանդուի, այրուի:

**Բերգիահ:**

Մեռնէի,
Ո՜վ, վաղ մեռնէի, քան թէ քեզ ծնելիս,
Դառնութեամբ կեանքըս անցուցանէի:
Պատի՜ժ քեզ, պատի՜ժ. վերջդ ոգալի
Կամիմ տեսանել:

**Երուանդ:**

Լեզո՛ւդ, Բերգիա՛հ,
Լեզո՛ւդ:

**Բերգիահ:**

Չ'եմ լռիլ: Տասն անգամ կ'ասեմ,
Չէ՜, չ'եմ ամաչիլ—գոռալ և ձայնել.
Քո տեղ լաւ կլինէր—գազանին ծնէի,
Անտառում թափառ, գոնէ ինձանից
Հեռու կվազվզէր: Երանի՜ կ'լինէր,
Հազար երանի՜—եթէ իմ արգանդ
Փըչանար, տրաքուէր, քեզ լոյսը երբէք
Չ'տեսնէր: Եթէ դու ինչ և իցէ
Պէտքէ ծընվէիր, ո՜վ լաւ կ'լինէր,
Ուռոյց մատակիս հեգ թեթևանար,



Շուր գայր, ոտերով՝ այլ ոչ թէ գլխով,—
Աշխարհ եկնէիր: Անկանոն ծնունդը
Քեզ այդ հասակին դժուար կհասցնէր:
Պատանքս մննելեաց ինչո՞ւ չի սեղմվեց,
Որ ինձ փրկելու, բուժիչ փոհուկներ
Քեզ—իմ պտուղիս կըտոր անէին
Իւրեանց նշտրակով: Երանի՜ կլինէր
Որ քո առաջին ճիչը միանար
Որոտմունքների բոմբիւնների հետ,
Եւ ականջներդ սկզբում—իսկ խլացած
Մնային: Երանի՜ կ'լինէր՝ ծիծմայրը
Փոխանակ կաթի, լեղով կերակրէր
Քեզ: Ո՜վ երանի, ո՜վ լաւ կ'լինէր՝
Եթէ ծիծմայրի ձեռքեր պողպին,
Այն ձեռքեր, որոնք քեզ կռնէին.
Եւ յած գցելով, փշրվէիր բնուին,
Զաւակ ջնջելի, գիւածո՜ն . . . .

**Երուանդ:**

Տըս. կա՛ց:—
Դու իմ մշտական կարկատմունք էիր.
Եւ ինչպէս քեզ ես ստեղծեցի, նոյնպէս
Իրաւունք ունիմ և ոչնչացնել:
Դու իմ միտքս էիր. միտքը լոկ խելքի
Ծնունդ է և բուսակ, և մայր է դառնում
Ողջ իւր գործերի: Չ'կայ իմ մէջ խելքը,
Պէտք չէ լինելու և իմ մաքերին,
. . . . . . . . . . . . . .
Այսինքն՝ դու իմ—ծնող մայր, Բերգիա՜հ:
Թափեցէ՞ր վերաս անզգամ—անէծք.
Անիծեալ լեզուդ խանգարեց անձըս,

Այժմեան իսկ դրութեան դա պարգեւողն է։
Լեզուդ քո սուր է ամենայն սըրից,
Ընդդէմ քո լեզուիդ կարող է կանգնել
Միայն սուր դանակ, փոքրիկ սրի նման,
Որով իմ աչքեր բացեցիր սկզբում,
Դորանով աչքերդ կ'կողպեմ ես վերջում. . . .
Զաւա՞կեմ ջնջան, սատմես—գլխածո՞ն.—
Գոռնի՜կ թագուհի, ծաղրելի՜ դու կին,
Ընդունիր վարձը, որ պատրաստեցիր
Քո որդւոյդ համար։

(Ընկնում Բերգիահի վերայ)։

Բերգիահ:

Որդեա՜կ։

Երուազ:

Ո՜վ—եղբայր։

Երուանդ (Խեղդելով մօր, քաշւում դէպ 'ի միւս սենեակ)։

Խլացուցանում եմ որդւոյն և եղբօր։

Բերգիահ:

Ողորմի՛ր, անգո՜ւթ։

Երուանդ:

Դու, դու գթալի՛ր,
Ինձ ողորմեցի՞ր, որ պահանջում ես
Մի և նոյնը։

Բերգիահ:

Ես . . . . մեռայ, ո՜վ մեռայ։

Երուանդ:

Երանի՜ եթէ մօրդ որովայնում



Խառնուած սեղմանքից և աղէքների
Խեղդուէիր, քան թէ . . .
Բարձ տեսարանից, դու առանց էն էլ
Կեանքիս պատմութեան մէջ ոչ մի երես
Չ'ունիս։ Մնա բարեաւ։

(Տանում սենեակ)։

Երուազ:

Պատասխան կ'լինես
Դու աստուածների առաջ, մահապարտ։

(Գնում)։

Վերադառնում ԵՐՈՒԱՆԴ։

Երուանդ:

Յաղթեցի՜. արքայ եմ ես իսկ այժմուս
Գրծայ, և ոչոք չի մնացել ազատ . . .

(ԲԵՐԳԻԱՀԻ թոյլ ձայն)։

Ձի՞նչ. գնամ, վերջացնեմ դեռ կենդանի է։

Մտնում ԵՐՈՒԱԶ։

Ողջո՛յն քեզ, եղբայր, առողջութի՞ւնդ։
Թագուհին Հայոց, նորին վեհութիւն
Ինչպէ՞ս է իւրեան զգում։

Երուազ:

Ո՞վ է ծնողդ,
Մայրասպա՜ն, այդ ինչ վէթխարի մարդ էր։

Երուանդ:

Ե՛կ, քո ականջիդ ծածկաբար ասեմ։
Միայն պայմանով, որ դու ոչ ոքին
Չ'ես յայտնիլ, կ'պահես քո համար։ Լսի՛ր.

Արգարի գանեց մինն ազատուելով,
Տարին վեց տարի առանձին կ՚բնակուէր
Հովուի մի մօտ։—Այդ իսկ հովիւը
Շատ նմաններ ժամեան—Հայոց արքայի,
Ի՛ մեծ քրմապետի. գուցէ Անգեղեան
Անձռանի տոհմից պէտքէ որ լինէր
Ասած հովիւս։ Նա գեղեցիկ էր.
Ա՜հ—գեղեցկութիւն, երգելու գործն
Աշխարհում մի ճար չէիր գտնիլ.
Եւ միով բանիւ կարծելով անգամ՝
Անկարելինէ։ Այո՛, գրաւելով
Նրա գեղեցկութեամբ, հովիւը խախտեց
Նորա կուսութիւն. պտուղ խախտութեան
Արքայէ Հայոց և մեծ քրմապետ։
. . .

Ներուադ։

Լռի՛ր, որդի չեմ պատմած պռնկի։

Ներուանդ։

Ո՜րդի ես, որդի—դու Բերգիահի,
Որ խաղաղութեամբ քնքայոյդ կ՚լինի։
Դու գնա մօրս մօտ, առա՛ ինձանից,
Թող մատուցանի աղջոյն աստուածոց.
Թող նա երկնքում թագուհի լինի,
Եւ թող վայելէ անդ հանգստութեամբ։
Վերևում մեզնից՝ փախձան չես գտում,
Փառասիրութիւն չ՚ունենալ վերջը.
Ո՛չ կախ, պատերազմ, ո՛չ և տառապանք,
Ո՛չ նեղութիւններ երբէք չտեսնիլ։
(Մեռնելով անկանելի գլուխ)։



Վաղէ՛ր, Բերգիահ, այնտեղ կ՚գտնես
Իմ մէջ ապաստարար, սուրուկ արքունական։
(Գնում է)։

Ներուադ։

Գնա՛, տես, տես մօրդ և ուրախացիր։

Ներուանդ (ծիծաղելով)։

Այո՛ . . .

Ներուադ։

Ա՜ տեսա՛ր, աւաղես քաշում։
. . . .

Ներուանդ (քամակից)։

Մեռաւ, անցկացաւ դէպ ուրիշ կեանքը.
Քեզ ևս կորցրեցի. այլ ո՞վ ինձ մնաց . . . .
Մտնում է։

Ո՛չ ոք։—Թափեցէք երկնից կայծակներ
Իմ գլխիս վերայ, սպանեցէք և ինձ։
Քամի՜, տար վիմի վերայ, այնտեղից
Գցի՛ր ծովի մէջ, ջարկելով քարին,
Փշրէ՛ր ոսկորներս։ Որոտմո՜ւնք, սաստիկ
Գոռացէք, անխնայ ինձ դղրդելով՝
Շփոթէք խելքս։ Տարրե՜րք, վերկացէք,
Ինձ այս աշխարհից—շուտ յափշտակեցէք։
Գոռոզ անձներից կմնայ միայն ստուեր . . . .
Ցերբե՜ր—դժնդակ, պղծ՛ինք դժողքի,
Շուն տարտարոսի, հաչէլ դադարիր.
Թո՛յլ տուր իմ ստուերիս . . . . Պերսէփոնէսին
Որ ներկայանայ, և դատաւորներ
Պլուտոնի. Մինոս, Էակ, Ռադամանդ
Դատեն գործերներս, կշռեն իմ մեղքեր։

**Նրուազ։**

Ժամն դառնալու քեզ աշխարհական,
Այլ ոչ երկնային դառով։ Կոչումես
Ձուր չնաշխարհիկ դատաւորներին։

**Նրուանդ։**

Կորցրեցի ոյժըս. ո՜վ—նուաղումեմ
Բացառայ կուրծքըս. բերանս տամկացիր,
Տուր ինձ փոքրիկ ջուր . . . ինչո՞ւ դու արգելք
Չի եղար, երբ ես, ինձ մոռանալով՝
Մօրըս վրայ ընկայ, չի խափանեցիր . . . .

**Նրուազ։**

Երբ ինձ զրկումես ծնողից, արժանի
Մի՞թէ կարողես լինել գթութեան։
Թող ծարաւութիւն դառնայ դատաւոր
Քո վերջի գործի, վերջի սպանութեան։

**Նրուանդ։**

Նրուազ, մի՛ նմանիր, օրինակ մի առ
Կիսակենդանի քո եղբօրիցըդ։
Պատժուածեմ արդէն իմ աստուածներից,
Տա՛ր ինձ։

(Աղաղակ, քանդումն, հեռուից հրդեհ)։

**Նրուազ։**

Աղաղակ—լսումե՞ս, Նրուանդ,
Քաղաքդ քանդումեն։

**Նրուանդ։**

Քանդումե՛ն, քանդեն, հիմն 'ի վեր առնեն,
Եւ հիմն 'ի յատակ, յոնքերս չեմ շարժիլ,



Անհարկել անգամ չ՚ունիմ ցանկութիւն,
Երբ որ իմ համար պրծելէ բոլոր։

**Նրուազ։**

Հրդեհ է. հրդե՜հ, այրւումէ քաղաքդ։

**Նրուանդ։**

Թող և ինձ այրեն։

(Պատերազմի ձայն)։

**Նրուազ։**

Պատերազմումեն արքունիքիդ մօտ։

**Նրուանդ։**

Ազատուիր, Նրուազ։

**Նրուազ։**

Բայց դու։—Նախ—առաջ
Մարդը իւր վերայ պիտի հոգս քաշի։
Մնացիր դու սառած, ես փախչելու եմ։
Այլ ի՞նչպէս անեմ, որ չի ճանաչեն։
Թողնումեմ այստեղ քրմապետութեան
Եւ իմաստութիւն, և նրա շորերը։

(Պատռելով իւր վերայ շորեր, դցումէ գետին)։

Սրանից հետ պատուվի քրմապետութիւնս։

(Գնումէ)։

**Զօրականք** (քամակից)։

Յաղթութիւն. կեցցէ Արտաշէս—արքայ։

**Նրուանդ։**

Բաղդաւորութեանս անիւ, փոխումես։
Կեանքումըս ամենը ինձ միշտ ժպտումէր։

Ոյժըս ինձ հետ գար, ա՜հ—եթէ վերստին
Կարողանայի քաջանալ....

Մտնում է ՄԱԺԷԺ արիւնաթաթաւ:

## Մաժէժ:

Տէր իմ,
Վիրաւորուած եմ, մեռնում եմ ահա...
Շուտ ազատեցէք, ո՛վ ազատեցէք:

(Մեռնում է):

## Երուանդ:

Կայնածէք, տերս. և դուք մերժեցաք
Ինձանից:

Կոտրատուում են դուռները և մտնում են երկու ԶՕՐԱԿԱՆՆԵՐ:

## 1 Զօրական:

Կեցցէ Արտաշէս:

## 2 Զօրական:

Մեռնի՛ն դաւաճաններ:

(Խոցում են նիզակներով Երուանդին):

## Երուանդ:

Շնորհակալ եմ ես: Մահն ազատեց
Ինձ չարչարանքից: Քեզ չ՚եմ ճանաչում,
Քեզ մոռացել եմ....

(Ցածուցանւում է ծնկի վերայ):

Դուք, ինչ և լինէ—
Ինձանից ողջոյն, փառաբանութիւն
Արքայ Արտաշէսին, և Բագրատունոյն,
Խնդրեմ, մատուցէք: Տալիս եմ գահըս,
Երբ աստուածների կամօք ինձ հասաք:
Ժառանգ Արտաշէս հօր իրաւունքով



Կարողէ սասանալ ողջ Հայաստանը:
Շնորհաւորեցէք, ինձանից ասէք.
Ես Հայաստանի համար կ՚ապրէի,
Բայց ինձ մերժեցին,—արժանի էի
Լոկ պարսաւանաց... Հանէք նիզակներ...

(Հանում են վերքից նիզակները, և հեռանում են զօրականները):

Ո՜վ, ո՜վ—քո վերջը, փառասիրութիւն,
Հասաւ, դու տեսար... տես և ապացոյց—
Իմ մահնէ. ով որ աւելի կ՚ցանկայ
Տուածից, փոխանակ գոհ կ՚ընդունի
Հակառակ պարգև.... անբնական վախճան—
Չարագործութեանց նշան... ուրախեմ
Եւ այսքանից ես:

(Մեռնում է):

Մտնում են ԱՐՏԱՇԷՍ, ՍՄԲԱՏ, ԱՐԳԱՄ, ՀՐԱՀԱՏ և ԶՕՐԱԿԱՆՆԵՐ դրօշակներով:

## Հրահատ:

Այս ո՞վ է սպանուած:

## 1 Զօրական:

Չ՚գիտե՛նք. սակայն
Մենք նրան սպանեցինք:

## Հրահատ:

Տեսէք, Երուա՜նդէ:

## Սմբատ:

Զուր չի բռնեցի՛ք նորան կենդանի:

## 2 Զօրական:

Եթ՝ իմանայինք, չէինք սպանիլ:

## Արտաշէս։

Տխո՜ւր տեսարան։ Սպանութիւն առանց
Հարկաւորութեան, և բիծէ գցում
Ազատողի վրայ։ Խստութեամբ իսկի
Կալանաւորի հետ պէտք չէ վարվել։

## Սմբատ։

Տիրապետութեան ոգին՝ մինչև որ
Ժուժկալութեան հետ,—այս հեզ և խոնարհ
Մարդու տնտեսի,—դեռ չի հաշտուեցաւ,
Մինչ այն ախոյեր՝ ջատագովութեան
Վահան պաշտպանել բռնադատներից։

## Արտաշէս։

Համաձայնեմ ես։ Բայց զինուորական
Փառքի աղաղակ կորուսանվում,
Եւ խուսափում դարերում, որպէս
Ձայն որոտմունքի։ Իսկ հազարամեայ
Գոգից, լանջքերից՝ առաքինութիւն
Նոր լուսաճաճանչ փայլութեամբ կյայտնվի։
Ուրեմն, իմացէ՛ք, որ այս դրած գլուխ—
Առաքինութեանց պուրկ չ՛էր։ Ն՛կ—պաշտենք
Սորան, որպէս քաջ—Արշակի ցեղից,
Արձան քաղաքում՝ իւր ձեռքով շինած,
Կառուցանելով։ Հերոսների փառք—
Արդարութիւնն է, և խաղաղ սէրը։

(Գնում են, տանելով գլուխ)։

# ՎԵՐՋ

---

# ՏՊԱԳՐԱԿԱՆ ՎՐԻՊԱԿՆԵՐ։

| ԵՐԵՍ. | ՏՈՂ. | ՏՊԱԾԻ. | ՊԷՏՔԷ ԿԱՐԴԱԼ. |
|---|---|---|---|
| 4. | 24 | Ռոտիկաններ | Ռոստանիկներ |
| 6. | 2 | Դիւցազն, | Դիւցազն |
| » | 13 | աճառ | Տաճառ |
| 8. | 5 | Վերքից | Վէրքից |
| » | 8 | աղաղայդ քեզ | աղաղայդ քո՝ քեզ |
| » | 25 | Մեզ միշտ զմայլացնէր, | Մեզ կըզմայլացնէր, |
| » | 28 | Հայաստանը— | Հայաստանը, |
| 9. | 6 | տարբաղդութիւնից | տար բաղդութիւնից |
| 10. | 6 | Վերքերս. | Վէրքերս. |
| » | 13 | աւա՜ղ | աւա՜ղ։ |
| 12. | 11 | Լուէր։ | Լուէր։— |
| 14. | 3 | մինը | մին |
| 19. | 11 | ոսոխեր, | ոսոխեր. |
| » | 13 | նոյն քան | նոյնքան |
| » | 20 | յայն ժամ | յայնժամ |
| 20. | 22 | կ՛նորոգէս | կ՛նորոգես |
| 21. | 14 | ՞նչ,— | ի՞նչ,— |
| 24. | 15 | հրաժարուեմ։ Գահ, | հրաժարուեմ։ Բերդխահ։ |
| » | 17 | Բերդխահ։ | Գահ, |
| | | Թագ, | Թագ, |
| 25. | 10 | գաղափառները, | գաղափարները, |
| 27. | 20 | ջիղեր։ | ջղեր։ |
| 32. | 8 | ուժ գին | ուժգին |
| 33. | 4 | չ՛ունիս— | չ՛ունիս։— |
| 34. | 7 | հետէ | յետ է |
| 40. | 6 | նորա գուշեն, | արդ. ինձ գուշեն, |
| » | 11 | նոցա | միթէ |
| » | 13 | նոցա | նրանց ես |
| 42. | 11 | շփոթութեան— | շփոթութեան,— |
| » | 19 | ՚ի բաց— | ՚ի բաց— |
| 43. | 6 | փողեր. | փողեր, |

| | | | |
|---|---|---|---|
| 44. | 12 | Զ՚արտասանելով | Զ՚արտասանելով՝ |
| 47. | 4 | Տաճատ—անշփոթ, և բա-րի Հրահատ, | Հրահատ—անշփոթ, և բա-րի—Տաճատ, |
| » | 11 | Զերծանելու | Զերծանուելու |
| » | 13 | Ինչու | Ինչո՞ւ |
| » | 15 | Երբ դեռ | Երբ դեռ |
| » | 17 | չ՚կայ | չ՚կա՞յ |
| » | 20 | ողբումեմ—, | ողբումեմ,— |
| 48. | 16 | ծերանեն: | ծերանի: |
| 50. | 20 | լուէ լու | լու՚է լու |
| 51. | 18 | սեւազգեստով, | սեւազգեստած. |
| 52. | 16 | Բազուումէ | Բազմուումէ |
| » | 20 | Բազմելով | Բազմուելով |
| 53. | 20 | Թագաւորներին: | Թագաւորների: |
| » | 29 | Արժանաւորեաւ | Ի՚ արժանաւորեաւ |
| 60. | 16 | երախտեբը եղբայր— | երախտեբը, եղբայր— |
| 61. | 13 | աշխարհի: | աշխարհէի: |
| » | 27 | ձեր, բնաւէ՛ն: | ձեր բնաւէն, |
| 63. | 3 | Զ՝գիտեմ | Զ՚գիտեմ |
| » | 5 | մեծագներին: | մեծագիններէ: |
| » | 11 | Ինչպէտ | Ինչպէս |
| 64. | 15 | կախուած, | կախած, |
| 65. | 11 | վրդովածէ՞ք: | վրդովածէք: |
| » | 12 | առէք, | տուէք, |
| 66. | 20 | Մէ մի | Մի, մի |
| 73. | 2 | աբբայաորդւոց | աբբայորդւոց |
| 75. | 14 | Իննել հանդարտ: Ո՜վ դեբ եմ; | Լինել և հանդարտ: Ո՛ւբ եմ; |
| 78. | 33 | . . . Զերծեցին | . . . զերծեցին |
| 79. | 6 | շուառն: | շուառն: |
| » | 14 | կրբազուեմ: | կրբազմուեմ: |
| » | » | Սմբատ, | Սմբատ, |
| 83. | 5 | չի գալի | գալու չէ |
| » | 7 | շտապէբ | շտապեբ |
| » | 28 | Թամաւուչ չ՚անէինք ձեռքերը: | Ձեռքերս Թամաւուչ չ՚ա-նէինք: |
| 84. | 15 | Մանաւագեանց | Մանաւագեանց |
| » | 17 | Աբբայաորդւոց | Աբբայորդւոց |
| » | 21 | պյգուց | եղուց |
| 89. | 1 | դուրո | դուրս |
| » | 3 | Ցածէկ, | Ցած էկ |



| | | | |
|---|---|---|---|
| 89. | 20 | Տուր | Տուրին |
| 90. | 6 | տանջումէ . . . | տանջումէ . . . |
| 91. | 23 | ուղարկեմ | ուղարկեմ |
| » | 24 | ջոկուած | ջոկած |
| 92 | 4 | Ամբակին, | Ամբակին |
| » | 10 | զգացմո՜ւնք, | զգացմունք, |
| 93. | 19 | միայն | այդ |
| 94. | 9 | Բնութեամբ | Բնութեամբ, |
| 96. | 2 | զնանք | զնանք |
| 97. | 2 | շնորք | շնորհք |
| 98. | 27 | Արտաշիսը, | Արտաշէսը, |
| 103. | 22 | Իւր համար կամենայ | Կամենայ, իւր համար |
| 104. | 23 | քաջութիւն | քաջութիւնք |
| 105. | 15 | մխիթարե՛ր: | մխիթարեր: |
| » | 17 | տաացի՛ր, | տուացեր, |
| » | 21 | չ՚ունի՛ | չ՚ունի |
| 106. | 14 | ծածկուի: | կ՚ծածկուի: |
| 112. | 1 | ժողովել | ժողովել |
| » | 9 | ապստամբումէ. | ապստամբումէ. |
| 116. | 15 | Ցարուցան. | Ցարուցա՞ն. |
| 118. | 14 | դէռ | դեռ |
| 119. | 13 | եթ՝ | եթ՚ |
| 124. | 1 | հատուկ | յատուկ |
| 133. | 17 | ընկրարար | ընրկրարար |
| 138. | 4 | հետևողներով | հետևողներով: |
| 140. | 20 | Ունէինք | Ունէք |
| 141. | 17 | Զարմանալին | Զարմանալի |
| » | 18 | լսեց, | լսեց. |
| » | 19 | , տեղի | , ու՚ տեղի |
| 142. | 4 | Մարդկութիւն | Մարդկութիւն, |
| » | 17 | Կ՚փախչի | Կ՚փախչի, |
| 143. | 3 | այդպէս | այդպէս |
| 146. | 18 | արդօ՞ք: | արդեօ՞ք: |
| 147. | 2 | դէռ | դեռ |
| » | 6 | զրահ՛ դըրած է: | զրահը դրած է: |
| 148. | 27 | հնչեցէ՛ք | հնչեցէք |
| 150. | 20 | հխուն | յխուն |
| 151. | 27 | դէռ | դեռ |
| » | 29 | (մեռնումէ). | (մեռնումէ): |
| 154. | 29 | քեզ, ընկեր | քեզ—ընկեր |
| 156. | 13 | ազնութիւնը է. | ազնութիւնն է. |

| | | | |
|---|---|---|---|
| 158. | 16 | Յաշտարարութիւն չ'ունես չի լինել: | Չի մատուցանես յաշտը, չի լինել: |
| 159. | 15 | Տուեք, | Տուէք, |
| » | 22 | են | է |
| » | 24 | կ'պատուվին | կ'պատուվէն |
| 161. | 14 | Իշտ. | Ի՞շտ. |
| 163. | 6 | Թագուհի, | դիցուհի, |
| 164. | 25 | փշէղեն, | փշեղէն, |
| » | 26 | գերեզման, | գերեզման |
| 166. | 24 | այլալութեամբք | այլայլութեամբք |
| 169. | 4 | դէռ | դեռ |
| » | 5 | դէռ | դեռ |
| 171. | 7 | արեցէք. | առեցէք. |
| 175. | 16 | վերջացնեմ | վերջացնեմ, |
| 176. | 4 | նմաներ | նման էր |
| » | 11 | Անկարելինէ: | Անկարելի է: |
| 177. | 22 | Գուող | Գուաղ |

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

Պատուելի՛ Ընթերցողներ:

Արդէն հրատարակեցի իմ երկասիրութիւնների առաջին ողբերգութիւնը «ԵՐՈՒԱՆԴ ԵՐԿՐՈՐԴ»: Անկասկած դուք նկատած կը լինէք, և Ձեզ հետ բոլոր հետաքրքիր ինտելլիգենցիան, որքան բազմաթիւ վրիպակներով լիք է իմ գրքոյկս. որքան այդ վրիպակները աղճատում են ոչ միայն միտքը, այլ շատ տեղերում, իմ կարծիքով, ամենևին անհասկանալի են դարձնում ողջ նախադասութիւնները և այլն: Ափսոսելով սաստիկ այդպիսի անյարմարութեան վերայ, և յոյժ ցանկալով թեթեւացնել որպէս իմ ապագայ քննողների, նոյնպէս և առհասարակ ամենայն ընթերցողի ջանքը, ես հարկադրուած եմ, թէպէտև ուշ է այժմ (ըստ որում շարադրութիւնս, ինչպէս վերը յայտնեցի, լոյս է ածուած), այնու ամենայնիւ և սրբազան պարտքս եմ համարում՝—ցոյց տալ և միւս տպագրական սխալները, որոնց ես մի քանի օրինակներ ստանալուց յետոյ, նկատեցի միայն (չեմ դանդաղում տպագրատիրոջ վերայ, որովհետև նա այնքան մեղաւոր չէ, որքան սրբագրողը):

Ի հարկէ, Դուք իրաւունք ունէք կարծել, և յետագայ սխալները եզրակացնել իմ անուշադրութիւնով, բայց եթէ Դուք 'ի մտի ունենայք իմ հան-

գամմնքներս, — այնէ՝ իմ Մայէկոպ քաղաք լինելը, և տպագրութիւն յանձնել Թիֆլիսումը. նոյնպէս իմ ծառայողական դրութիւնս, կատարելով մի և նոյն ժամանակ երկու Թագաւորական պաշտօններ. Հաշտարար Դատաւորի և Ցարակատար Անդամի Հաշտարարաց Նիստի, Դուք կ'հասկանաք, ասումեմ, որ ես բոլորովին զրկուած եմ մի ազատ վայրկեանից, որին կարողանայի նուիրել հասարակ գործին, խօսքս իմ շարադրութեան վերայ է։ Զ'կարծէք, Պարոններ, որ ես բողոքումեմ, կամ յառաջագոյն ներողամտութիւն եմ խնդրումխստարդար կրիտիկոսներից . . . . երբէք. իմ դիտաւորութիւնս է՝ — լոկ պարտքը հեղինակի կատարել, իսկ յետոյ՝ ամենայն ոք իշխանն է իւր կարծիքների։

## ՏՊԱԳՐԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ ՀԵՏԵՒԵԱԼ ԵՆ

| ԵՐԵՍ։ | ՏՈՂ։ | ՏՊԱԾԷ | ՊԷՏՔԷ ԿԱՐԴԱԼ։ |
|---|---|---|---|
| 4. | » | | Բոլորովին Թողած է մի ներգործող անձը, — այն է՝ Զինուոր Արգամի բանակից. |
| 6. | 17. | կոծում | կոծումն |
| 7. | 4. | Դու | Դուք. |
| 8. | 1 | գերաբնական | գերաբնագոյն |
| 8. | 18. | Այն ինչ — ինձ | Այն — ինչ ինձ |
| » | 21. | Հեղափոխութեանց | Յեղափոխութեանց |
| 9. | 10. | բանեբի | բանների |
| » | 11. | սաւչութեամբ | սաւնութեամբ |
| » | 12. | յատաւ | հատաւ |
| » | 26. | հոգութիւն | հոգողութիւն |
| » | 18. | Հեղափոխութեանց | Յեղափոխութեանց |
| » | 28. | Հեղափոխութեանց | Յեղափոխութեանց |
| 10. | 8. | հայրենիս — | հայրենեայս |



| | | | |
|---|---|---|---|
| 11. | 22. | տարաժամ | յարաժամ |
| » | 4. | կանանց ձեր | ձեր կանանց |
| » | 18. | կ'դարտակուի | կ'դատարկուի |
| » | 21. | խռովէր | խռովուէր |
| » | 25. | Զեւք | Զեւքը |
| 12. | 9. | վերաբերի | վերաբերուի |
| 13. | 6. | ցամաքից | ցամաքուեց |
| 14. | 19. | դաունքից | դրունքից |
| 15. | 20. | Նրուանդի | Նրուանդի, — |
| 16. | 1. | Դու, դու լոկ կարես | Դու լոկ կարողես |
| » | 8. | այգու | . այգւոյ |
| 17. | 16. | Զբաղացնել | Զբաղեցնել |
| 18. | 16. | սեղմէչ | սեղմիւ |
| » | 28. | Թույլ | Թոյլ |
| 19. | 23. | կ'կարես | կ'կարաս |
| 20. | 23. | կ'յաջողացնեն | յաջող կ'լինեն |
| » | 27. | վեհ | վեհ |
| 21. | 21. | չ'լինէեր | չ'լինէեր, |
| 22. | 2. | ինչու | ինչու |
| » | 22. | եղձեր | եղձեր . . . . |
| 23. | 8. | եւրեանց։ Ես | եւրեանց. Ես |
| » | 28. | Մտէր, | Մտէր |
| 25. | 21. | ձեր | ձեզ |
| » | 26. | խնայելու չ'եմ զարգացնել | չեմ խնայել զարգացնելու |
| 26. | 2. | սիրելին | սիրելի |
| 28. | 14. | զգացուցանել | զգալ |
| 29. | 7. | Ճամուկ | Ճնմիկ |
| » | 20. | չ'յաջողեցաւ | չ'յաջողուեցաւ |
| 30. | 16. | հատուկ | Ցատուկ |
| 33. | 13. | ինչու | ինչու |
| 34. | 13. | Տուր, | Տուր |
| » | 23. | Արտաչէս | Արտաշէս |
| 37. | 1. | արքայն | արքայեն |
| » | 8. | անխծիալներ | անիծեալներ |

| | | | |
|---|---|---|---|
| 37. | 24. | կ՚դարցնեմ | կ՚դարձնեմ |
| 39. | 10. | կ՚քնենք | կ՚քննենք |
| 41. | 8. | խափել | խաբել |
| 45. | 14. | Երեզ | Երեկ |
| 51. | 4. | կարենք | կարանք |
| 52. | 23. | ընտրածենք | ընտրուածենք |
| 55. | 3. | արալեգք | արալէգք |
| » | 6. | տաչօրմունք | տաչօրումն |
| 56. | 13. | հողնել | յողնել |
| 59. | 9. | սրտրկութիւն է | սրտրկութիւնն է |
| » | 11. | Թուալել | Թուալուել |
| » | 13. | վիշապանց | վիշապաց |
| » | 18. | կարես | կարաս |
| 62. | 19. | պատուեր | պատուէր |
| 64. | 5. | դուււերը | դուերը |
| » | 11. | բաղմել | բաղմուել |
| 65. | » | այլալած | այլայլած |
| 67. | 5. | տապարեղը | տապարէղը |
| » | 8. | Հարաժամ | Յարաժամ |
| » | 27. | ժխպխտով | ժըպխտով |
| 68. | 13. | ցանկութիւն | ցանկութիւն: |
| 68. | 20. | Վրդովմնք | Վրդովումն |
| 69. | 10. | հետ | յետ |
| 71. | 9. | Վրաղեր, | Վաղեր. |
| » | 25. | արենարքու | արեւնարքու |
| » | 26. | արենարքու. | արեւնարքու |
| 73. | 9. | քննեց | քնեց |
| 74. | 3. | այլալած | այլայլած |
| » | 6. | ուղարկեմ յաչսել | անեմ ես յաչալ |
| » | 18. | Նորա՝ | Նորան՝ |
| 76. | 5. | մխիանց | մխեանց |
| 72. | 24. | տապարեղ, ուրեմն՝ | տապարէղ: Ուրեմն՝ |
| 68. | 24. | մեկի, պահանջուել | մեկի պահանջուել, |
| 76. | 7. | շորերով | շորերովը |



| | | | |
|---|---|---|---|
| 77. | 5. | եղբորց | եղբօրց |
| 78. | 28. | իջացեր | իջուցեր |
| 80. | 17. | հետ դառամը | յետ դառամը |
| 81. | 7. | հորանի | հօրանի |
| » | 25. | գեշես | դէշ ես |
| 82. | 3. | անջատեցաւ | անջատուեցաւ |
| » | 11. | ծառաններեն | ծառաներ ենք |
| » | 15. | հոգնած | յոգնած |
| 83. | 18. | յախշեցուցեր | ախշեցուցեր |
| » | 19. | անձամբ | անձներս |
| 84. | 4. | ընդմիջացաւ | ընդմիջեցաւ |
| 86. | 20. | անպեր | ամբեր |
| » | 22. | Բայց—միայն | Բայց—միայն՝ |
| 87. | 9. | պատնեշից | պատնէշից |
| » | 13. | միայնդամայն | միանդամայն |
| 88. | 5. | Յատնեշի | պատնէշի |
| » | 19. | » | » |
| » | 22. | ոլաև | ոլաք |
| » | 25. | պատնեշի | պատնէշի |
| 89. | 5. | » | » |
| » | 9. | » | » |
| 90. | 6. | Վերքս | Վէրքս |
| » | 12. | Տուէցէք | Տուեցէք |
| » | 24. | Վերաւորումէ | Վիրաւորումէ |
| 95. | 6. | կարէ | կարայ |
| » | 24. | հեծեցէք ձիանք | հեծէք ձիաներ |
| 96. | 12. | ընդմիջեալ | դադարած |
| » | 13. | հետ, | հետ |
| » | 20. | Պարթէւացիք | Պարթեւացիք |
| 97. | 9. | ձիաններ | ձիաներ |
| » | 24. | Քարշել | Քաշել |
| 98. | 12. | Սյո, | Սուտ չէ, |
| 99. | 14. | կ՚Թափի՝ | կ՚Թափուի՝ |
| » | 15. | կը խլացուցանեն | կը խլացուցանուեն |

| | | | |
|---|---|---|---|
| 100. | 9. | արննակցի | արենակցի |
| » | 21. | ժամանեց | ժամանուեց |
| 101. | 10. | վերայ, | վերայ |
| 102. | 6. | ծախողակ | ձախողակ |
| » | 10. | յաջողեցաւ | յաջողուեցաւ |
| 103. | 2. | կ'կարէ | կ'կարայ |
| » | 5. | է | եւ |
| » | 20. | ապահովեց | յապահովեց |
| 104. | 19. | ծառայն | ծառան — |
| 105. | 9. | այլալութեան | այլայլութեան |
| » | 18. | երեւյթներ | երեւութներ |
| 106. | 7. | Թաղաւոր՝ եւ | Թագաւոր, եւ |
| » | 21. | խափեց | խաբեց |
| » | 25. | Ալեկածութեան | Այլեկածութեան |
| 107. | 13. | անմիտութեանէ | անմիտութեանն է |
| » | 23. | Հասիր օգնութեան | Հասի՛ր, օգնութեան |
| 108. | 19. | փայփայած | քայքայած |
| 110. | 6. | ցանկութեանէ | ցանկութեանն է. |
| 111. | 13. | անկենում | անկեանում |
| » | 14. | բարակ | բարակայ |
| 112. | 15. | հատուկ | յատուկ |
| » | 18. | Հատկապես | Յատկապես |
| 114. | 5. | Դարեհին | Դարէհին |
| » | 22. | արննակից | արենակից |
| 116. | 30. | Փաշումն | Փարշումն |
| 118. | 15. | կեբբեր | կըբեր |
| 119. | 10. | եղերաքի | Ելերաց |
| 120. | 4. | քեզ | քեզ, |
| 123. | 9. | Տուր | Տուէք |
| » | 10. | Տուր | Տուէք |
| 124. | 4. | Այլալած | Այլայլած |
| 125. | 18. | գրահաւորած | գրահաւորուած |
| » | 21. | Թշնամիններից՝ | Թշնամիններից՝ |
| » | » | Անբաղդութեանց | Անբարդութեանց |



| | | | |
|---|---|---|---|
| 126. | 11. | Ընդհարում | Ընդհարումն |
| » | 15. | Մաժէժ, | Մաժէժ . . . |
| 130. | 23. | Ճարել | Յարուել |
| » | 24. | գի | որ |
| 132. | 4. | այլալած | այլայլած |
| » | 23. | հսկանների | հսկաններէ |
| 133. | 7. | բեք | հեք |
| » | 14. | հաղթանդամից | յաղթանդամից |
| » | 18. | դատերաց խմեց՝ | իմ դատերներէս: |
| 134. | 7. | վախացնել | վախեցնել |
| 135. | 16. | պատրմելու | պատումելու |
| » | 26. | եղել | եղել, |
| 139. | 4. | մրքով | մրքով |
| 140. | 12. | անտես | ՚անտես |
| » | 26. | յարել | յարուել |
| 141. | 20. | Մարթու պատշաճին | Մարդու—պատշաճին |
| » | 23. | կերբեր | կըբեր |
| 144. | 7. | քուրծ | քուրձ |
| » | 15. | խուովւում | Խուովւում |
| » | » | կերբեր | կըբեր |
| » | 16. | մրքեր | մըքեր |
| 145. | 10. | ցնորներր | ցնորքերը |
| » | 15. | » | » |
| 147. | 14. | զինքերի | զէնքերէ |
| 149. | 24. | վերքս | վէրքս |
| 150. | 3. | Թշնամիններից | Թշնամիներից |
| 151. | 17. | գեծերը | գծերը |
| 152. | 11. | Նրանք | շտապ |
| 153. | 1. | Բէմի | Բեմի |
| » | 27. | Դրեր | Դեր |
| 156. | 9. | Դատրեցայ | Դադրեցայ |
| » | 18. | Զայն՝ | Զայն (Պարսպի քամակից)։ |
| 157. | 25. | վերջի— | վերջին— |
| » | 27. | անփոփած | անփոփուած |

| | | | |
|---|---|---|---|
| 158. | 10. | դատարկվէց | դատարկվէց, |
| » | 13. | վերջի | վերջին |
| 161. | 6. | Հարմարէ | Ցարմար է |
| » | 9. | երեգ | երեկ |
| 162. | 23. | պտոյտել | պտուտել |
| 163. | 4- | Ցովեր | Ցրեր |
| 164. | 3. | առեցի | արեցի |
| 168. | 25. | սրով և | սրով. |
| 169. | 1. | վերջ | վերջն |
| » | » | ժամաննեց | ժամանուեց |
| » | 12. | վեղեգ | վզեգ |
| » | 27. | կարի | կարայ |
| 172. | 1. | Խայտառակ | Խայտառակ |
| 175. | 1. | աղքեններ | աղքեններ՝ |
| 176. | 19. | քննայոյշ | քնածեայ |
| 177. | 13. | Մանուկ։ | Մանուկ։ |
| » | 22. | տուէր | տուեր |
| 178. | 21. | հրդէհ | հրդեհ |
| 179. | 4. | » | » |
| » | » | » | » |
| 180. | 6. | Վերաւորածեմ | Վերաւորուածեմ |
| 181. | 6. | վերքեց | վերքեց |
| » | 24. | Երուանդէ | Երուանդն է |
| 184. | 27. | Իննել | Շինել |
| » | 29. | 33 | 23 |

ՀԱՅ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССРА
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ԾԱՆՈՒՑՈՒՄՆ։

Հեղինակը «ԵՐՈՒԱՆԴ ԵՐԿՐՈՐԴԻ» ողբերգութեան մտադիրէ 'ի լոյս ածել հետզհետէ և հետևեալ իւր շարադրութիւնները և թարգմանութիւնները (բոլորք գրված են տոմնաւորով).

1. ՓԱՌԱՆԶԵՄ, ողբերգութիւն հինգ Արարուածի մէջ։
2. ԱՐՔԱՅՆ ԼԻՐ, Շէքսպիրի, ողբերգութիւն հինգ Արարուածի մէջ։
3. ԷՏԻԿՈՍԱԿԱՆ ԴՊՐՈՑ կամ ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆԻ ԿԵԱՆՔ, ողբերգակատակերգութիւն հինգ Արարուածի մէջ։
4. ՕՏԷԼԼՕ, ՄԱՒՐ ՎԵՆԵՏԿԻ, Շէքսպիրի, ողբերգութիւն հինգ Արարուածի մէջ։
5. ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐ, զաւեշտ-կատակերգութիւն երկու Արարուածի մէջ։
6. ՏՐՈՅԻԼ և ԿՐԷՍՍԻԴՍԱՑ, Շէքսպիրի, ողբերգական տարեգրութիւն, հինգ Արարուածի մէջ։

Սոցանից՝ 'ի սկզբանէ պատրաստուած տպագրելու Շէքսպիրի ողբերգութիւնը «ԱՐՔԱՅՆ ԼԻՐ». Գինն է, փոստի ծախսով 'ի միասին, —2 ռուբլի։

Ցոյս չ'ունենալով, որ հեղինակի վաստակը կարողանայ երբ և իցէ վարձատրվիլ, այնու ամենայնիւ մենք խնդրումենք ձեռընտու լինել մեզ՝ գոնեայ տպագրութեան ծախսը շիջուցանել, և այդու պատճառաւ—ցանկացողներին տոմնալ «Արքայն Լիր»—հրաւիրումենք յայտնել մեզ յառաջագոյն իւրեանց կամեցողութիւնը, կամ ուղարկելով փողը, եթէ դժուարութիւն ... լոկ Նամակով ազդ առնել մեզ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0578680

Գինն է 2 ռուբլի։

Ցանկացողները կարողեն դիմել հետևեալ հասցէով.
Въ городъ Майкопъ, Кубан. Обл. Мировому Судьѣ 1-го участка, Николаю Іосифовичу Алиханову.

Գրավաճառողները պահանջելով հարիւր հատորնե-րից պակաս ունեն զիջումն 10%, իսկ աւելի—20% փոստի ծախսը հեղինակը առնումէ իւր վերայ։

01 MAR 2013

57845